

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

**Գ.Մ. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ**

**ՀԱՅՑԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**  
/գիտագործնական հետազոտություն/

Ստեփանակերտ-2017  
«Դիզակ պլուս» հրատարակչություն

ՀՏԴ 347  
ԳՄԴ 67.404  
Ա 866

*Նվիրվում է Արցախի Հանրապետության հռչակման 25-ամյակին*

*Հրատարակության են երաշխավորել Արցախի պետական  
համալսարանի գիտական խորհուրդը և  
ԼՂՀ դատարանների նախագահների խորհուրդը*

*Մասնագետ խմբագիր՝ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ վաստակավոր իրավաբան Ռ. Գ. Պետրոսյան*

**Գ.Ս. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ**  
Ա 866 **ՀԱՅՑԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ:**

Գիտագործնական հետազոտություն:

Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս» հրատ., 2017, 200 էջ:

Մենագրության մեջ Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Հանրապետության, Հայաստանի Հանրապետության սահմանադրական, քաղաքացիական և դատավարության օրենսդրության, իրավաբանական գրականության ու նորագույն դատական պրակտիկայի վերլուծության հիման վրա քննարկվել են քաղաքացիական դատավարությունում հայցի ինստիտուտի առավել վիճելի տեսական ու գործնական հիմնախնդիրները: Ներկայացվել են օրենսդրության ու դատական պրակտիկայի կատարելագործման առաջարկություններ:

Գիրքը օգտակար կարող է լինել իրավաբանական ֆակուլտետների ուսանողների, դատավորների, տեսաբան-իրավագետների, պրակտիկ իրավաբանների, դատական բարեփոխումների պատասխանատու փորձագետների, ինչպես նաև իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությամբ հետաքրքրվող բոլոր անձանց համար:

ՀՏԴ 347  
ԳՄԴ 67.404

ISBN 978-9939-1-0504-8

© Գ.Ս. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ, 2017

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ.....4-7**  
**ՆԱԽԱԲԱՆ .....8-10**

**ԳԼՈՒԽ 1. ՀԱՅՑԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ,  
ՏԱՐՐԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

1.1 Հայցի հասկացությունը .....11-32  
1.2 Հայցի տարրերը.....33-57  
1.3 Հայցի տեսակները .....57-76

**ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՑԻ ՓՈՓՈԽՈՒՄ.....77-90**

**ԳԼՈՒԽ 3. ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ  
ԴՐԱ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ**

3.1. Հայց հարուցելու իրավունքի հասկացությունը.....91-100  
3.2. Հայց հարուցելու իրավունքի նախադրյալները.....101-150

**ԳԼՈՒԽ 4 ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

4.1. Հայցը և գործի քննության ու լուծման  
սահմանները.....151-180  
4.2. Հայցային պահանջների սահմաններից դուրս գալու  
դատարանի իրավունքը.....181-190

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... 191-199**

## ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Հանրապետության Սահմանադրության 44-րդ հոդվածը երաշխավորում է հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու, օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի իրավունքներն ու ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Նման դրույթը բխում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային հանրահայտ փաստաթղթերի պահանջներից, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և այլն:

Իրավունքների պաշտպանության պետական միջոցների շարքում Սահմանադրության վերոհիշյալ հոդվածն առաջնահերթ և առանձնահատուկ տեղ է հատկացնում դատական պաշտպանությանը, քանի որ այն իրականացվում է իշխանության տարանջատման համակարգում անկախ և ինքնուրույն կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքն անձի հիմնական և անօտարելի իրավունքներից մեկն է, նրա այլ իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջոցն ու երաշխիքը:

Միջազգային իրավունքին և պրակտիկային համապատասխան՝ Արցախի Հանրապետությունում ևս ստեղծված են իրավունքների և ազատությունների պաշտպանության՝ իրար հետ օրգանապես կապված երկու կառուցակարգեր՝ պետական /նաև՝ միջպետական/ և ոչ պետական ձևեր: Պետական - իրավական կառուցակարգի բոլոր մարմինները՝ Արցախի Հանրապետու-

թյան Նախագահը, Ազգային ժողովը, կառավարությունը, նախարարությունները, դատախազությունը, ազգային անվտանգության ծառայությունը և այլն, ինչպես նաև կազմակերպական առումով պետական իշխանությունից դուրս գտնվող տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական միավորումները, ստեղծագործական, երիտասարդական և այլ միությունները, վեճեր լուծող մարմինները, արհմիությունները, նոտարիատը և այլն, պարտավոր են պետության կողմից ընդունված իրավական ակտերով սահմանված որոշակի ընթացակարգով /պրոցեդուրայով/ պաշտպանել /վերականգնել/ յուրաքանչյուր խախտված իրավունք: Թվարկված բոլոր պետական /վարչական/, տեղական ինքնակառավարման, այդ թվում՝ վեճեր լուծող և հետագա վեճերի առաջացման կանխում ապահովող /նոտարական/ մարմիններն ու կազմակերպությունները, հասարակական միավորումները, խորհուրդները և այլն, թեկուզև ունեն հարկադրանք կիրառելու իրավասություն, այնուամենայնիվ, բոլորն էլ գտնվում են դատական վերահսկողության ներքո, նրանց որոշումները կարող են բողոքարկվել դատարան /տե՛ս, օրինակ, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածը/: Եվ հենց դրա համար է, որ Սահմանադրության նշված հոդվածի 1-ին մասում շեշտադրում է արված մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ամենաարդյունավետ միջոցի՝ դատական պաշտպանության վրա:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ Արցախի Հանրապետության գործող օրենսդրությունը Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան բազմաթիվ երկրների օրինակով նախատեսում է քաղաքացիների, օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, հայրենական և արտասահմանյան իրավաբանական անձանց, կազմակերպությունների և հիմնարկների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության դա-

տական, վարչական և հասարակական ձևեր՝ միաժամանակ սահմանելով դրանց պաշտպանության դատական գերակայություն: Վերջինս հետևանք է այն բանի, որ իրավունքների պաշտպանության դատական ձևը, յուրիսդիկցիոն այլ մարմինների գործունեության հետ համեմատած, ունի մի շարք առավելություններ. այն ավանդաբար /Յին Յոնից սկսած/ դիտարկվել է առավել արդյունավետ և քաղաքակիրթ, ընթանում է դատավարության օրենքով խստորեն սահմանված ընթացակարգով, պարունակում է գործի հանգամանքները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները պարզելու դատավարական երաշխիքներ, մասնավորապես՝ դատավարության ժողովրդավարական սկզբունքներ, պատմականորեն կատարելագործված և հարմարեցված է օրենքի և հարկադրանքի միջոցների ճիշտ կիրառմանը և այլն, իսկ ոչ դատական ձևերը, հատկապես՝ վարչականը, դեռևս կատարելագործման կարիք ունեն: Դեռևս այդ է պատճառը, որ օրենսդիրը սահմանադրական դատարանի /Արցախի Հանրապետությունում՝ Գերագույն դատարանի սահմանադրական պալատի/ իրավասությանն է հանձնել միմիայն պետաիրավական հարաբերություններից բխող քչաթիվ գործերի լուծումը, քրեական դատավարության կարգով լուծման է հանձնել միմիայն քրեադատավարական հարաբերությունների լուծումը, իսկ քաղաքացիական դատավարության համար նախատեսել է քաղաքացիական, հատկապես՝ դատական գործերի ընդհանուր քանակի մեջ շուրջ 75 տոկոս կազմող հայցային վարույթի, ինչպես նաև ընտանեկան, աշխատանքային, հողային, ջրային, բնապահպանական և այլ իրավահարաբերություններից ծագող գործերի քննությունն ու լուծումը:

Որպես քաղաքացիական դատավարության իրավունքի մասնագետ՝ սույն աշխատության հեղինակ Գ.Արզումանյանը հիմնական նյութ է ընտրել քաղաքացիական դատավարության և իրա-

վագիտության տեսության ու դատական պրակտիկայի համար բարդագույն, սպառիչ թվարկման չենթարկվող գործերի քննության հայցային վարույթի կարգը, հայցային ընթացակարգը համեմատելով նաև քաղաքացիական դատավարության վարույթների մյուս ձևերի՝ հատուկ հայցային վարույթների և հատուկ վարույթների հետ:

Հեղինակն իր առջև դրված խնդիրն իրականացրել է հայրենական և արտասահմանյան /գերազանցապես՝ ռուսական/ նորագույն իրավաբանական գրականության, օրենսդրության, հայրենական ու Եվրոպական դատարանների դատական ընդհանրացված և կոնկրետ պրակտիկայի խորագիտակ ու հարցի վերաբերյալ առկա ուսմունքների, հայեցակետերի պատշաճ վերլուծության հիման վրա: Հեղինակն արել է Արցախի Հանրապետության /և ոչ միայն/ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը կատարելագործելու հիմնավոր առաջարկներ:

Աշխատությունն օգտաշատ է լինելու Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Հանրապետության և Հայաստանի Հանրապետության իրավաբանական ողջ կազմի /կորպուսի/, ինչպես նաև իրենց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմող բազմաթիվ քաղաքացիների համար:

**Ռ.Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**  
**Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր**  
**ՀՀ վաստակավոր իրավաբան**



## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայցի և իրավունքների հայցային պաշտպանության հիմնախնդիրները մշտապես եղել և մնում են արդիական:

Հայցային գործերը Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Հանրապետության դատարանների կողմից քննվող քաղաքացիական գործերի ծավալում ճնշող մեծամասնություն են կազմում՝ համեմատած ոչ հայցային վարույթների գործերի հետ /շուրջ 75 տոկոս/ և ունեն դինամիկ աճի միտում: Այդ գործերով մաս դատական, այդ թվում՝ դատավարական իրավունքի սխալներն են տարածված: Վիճելի իրավահարաբերությունների փաստական կազմը ճիշտ պարզելն ու պատշաճ իրավաբանական որակումը, վեճի մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների որոշումը, նրանց միջև ծագած վեճերի ճիշտ լուծումը մեծապես կախված է հայցի ճիշտ օգտագործումից, դատավարական նորմերի պահանջների խստիվ պահպանումից:

Սույն մենագրության հեղինակը «Իրավունքների պաշտպանության հայցային ձևը» վերտառությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի ատենախոսության մեջ /Երևանի պետական համալսարան - 2006/ հետազոտության և վերլուծության է ենթարկել հայրենական իրավունքում հայցային վարույթի առավել վիճելի հիմնախնդիրները, որի համար հետազոտության նորմատիվային հենք է հանդիսացել հիմնականում Հայաստանի Հանրապետության /Մայր Հայաստանի/ օրենսդրությունը, որը զգալիորեն փոփոխվել ու նորացվել է՝ որոշ դեպքերում նոր խնդիրներ առաջացնելով դատական պաշտպանության իրավունքի իրացման գործում:

Արցախի Հանրապետության հռչակման 25-ամյակի առթիվ Նախագահ Բակո Սահակյանի՝ ժողովրդին ուղղված շնորհավո-

րական ուղերձում /02.09.2016 թ./ նշվել է, մասնավորապես, հետևյալը. «1991թ. սեպտեմբերի 2-ը շրջադարձային եղավ արցախահայության համար և փոխեց նրա պատմության ընթացքը: Մեր վճռորոշ ձայնը բարձրացնելով հանուն ազատ ու անկախ Արցախի՝ ազգովի ձեռնամուխ եղանք պետականաշինության գործընթացին: Սկսեցինք կառուցել ժողովրդավարական պետություն՝ միջազգային նորմերին և սկզբունքներին համապատասխան»:

Արցախի Հանրապետությունում դատական իշխանության, սեփական օրենսդրության ստեղծումը կապված է երկրամասի անկախության հռչակման հետ: 2006 թվականի դեկտեմբերի 10-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, իսկ 45-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Սահմանադրության ընդունումից հետո առաջին հերթին /2008թ./ ընդունվեցին դատավարության իրավունքի հիմնական /առանցքային/ օրենսդրական ակտերը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական, քաղաքացիական դատավարության, քրեական դատավարության, վարչական դատավարության օրենսգրքերը, իսկ ապա՝ մնացած օրենքները: Մինչ այդ՝ 1992թ. հունվարի 6-ին ընդունված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին» ԼՂՀ օրենքի ու «ԼՂՀ տարածքում ժամանակավորապես օրենսդրական կարգավորում սահմանելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի 1992 թվականի հունիսի 6-ի որոշման համաձայն, ԼՂՀ տարած-

քուն հիմնականում կիրառվում էր Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

Ներկայումս դատական իշխանությունն Արցախի Հանրապետությունում իրականացվում է սահմանադրական, քաղաքացիական, վարչական և քրեական դատավարությունների ձևերով: Հանրապետությունում գործում է առաջին ատյանի մեկ դատարան, որին ենթակա են բոլոր քաղաքացիական, քրեական և վարչական գործերը: Հանրապետությունում գործում է վերաքննիչ մեկ դատարան /կազմավորվել է 2008թ./: Բարձրագույն դատական ատյանը ԼՂՀ Գերագույն դատարանն է, որն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վճռաբեկ բողոքի հիման վրա վերանայում է վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված դատական ակտերը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ օրենքով նախատեսված դեպքերում բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը: ԼՂՀ Գերագույն դատարանն իրականացնում է նաև սահմանադրական արդարադատություն՝ «Սահմանադրական դատավարության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2009 թվականի մայիսի 27-ի օրենքի համաձայն /ԼՂՀ դատական օրենսգրքի 21, 23, 25, 29 հոդվածներ./:

Ընթերցողին առաջարկվող սույն մենագրությունն իրենից ներկայացնում է հայցի ինստիտուտի՝ որպես սուբյեկտիվ քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, հողային, ջրային, բնապահպանական և այլ /քաղաքացիական՝ լայն առումով/ իրավունքների դատական պաշտպանության գործիքակազմի առավել վիճելի տեսական ու գործնական հիմնախնդիրների վերլուծության, վերաիմաստավորման արդյունքը՝ փոփոխված ու նորացված օրենսդրության, նորագույն գրականության և դատական պրակտիկայի հաշվառմամբ:

## ԳԼՈՒԽ 1.

### ՀԱՅՑԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՏԱՐՐԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

#### 1.1. Հայցի հասկացությունը

«Հայց» եզրույթը լայնորեն կիրառվում է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքում: Սակայն այդ եզրույթի որևէ մեկնաբանություն, ինչպես նաև հայցի հասկացության նորմատիվ սահմանում Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Հանրապետության օրենսդրության մեջ առկա չէ: Այն առկա չէ նաև Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և հետխորհրդային այլ պետությունների օրենսդրության մեջ: Տառացի և ընդհանուր նշանակությամբ «հայց» եզրույթն արտացոլում է տվյալ հասկացության բնույթը՝ «խնդրել», «փնտրել», «ուզեցնալ»<sup>1</sup>: Նշված եզրույթը նույն իմաստն ունի նաև ռուսերենում՝ «иск», «искать», «добиваться защиты»<sup>2</sup>: Չնայած նման, թվում է՝ պարզ բացատրությանը, դատավարագիտության մեջ, հավանաբար, չկա ավելի վիճահարույց հիմնախնդիր, քան հայցի հասկացության ու էության հարցը: Համընդհանուր ճանաչում ստացած տեսակետն այն է, որ հայցն իրավունքի պաշտպանության միջոց է, սակայն այդ սահմանումը չափազանց լայն /ընդհանուր/ է և չի բացահայտում «հայց» իրավական հասկացության էությունը, իսկ գործող օրենսդրության ուսումնասիրությունը

<sup>1</sup> Տե՛ս Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, ԵՊՀ հրատ., Եր., 1977, հատ. 3, էջ 32:

<sup>2</sup> Տե՛ս Մ. Փասեր, *Этимологический словарь русского языка*. Изд. "Прогресс", М., 1967, էջ 140:

նը մեզ բերում է այն հետևության, որ «հայց» եզրույթն օգտագործվում է տարբեր իմաստներով:

Այսպես, օրենսդրության մեջ «հայց» եզրույթը մի դեպքում օգտագործվում է իբրև դատական գործունեություն /հայցային վարույթ/ հարուցելու միջոց: Օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի Չանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի /այսուհետ՝ ՔԴՕ/ 2-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

Մեկ այլ դեպքում «հայց» եզրույթն օգտագործվում է իբրև հայցվորի՝ պատասխանողի դեմ կամ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջ, ընդ որում, այնպիսի պահանջ, որը բխում է իրավունքի մասին վեճից: Օրինակ՝ ՔԴՕ 77-րդ հոդվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ հայցադիմումում պետք է նշվեն հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս, հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները: ՔԴՕ 79-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի մեկ հայցադիմումում միացնել միմյանց հետ կապված մի քանի պահանջներ, իսկ ՔԴՕ 87-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ, կամ իր նախաձեռնությամբ, միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Չայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում /հասկանալի է, որ ապահովվել կարող է միայն նյութաիրավական պահանջը/: ՔԴՕ 122-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժե-

լու հարցը, իսկ ՔԴՕ 143-րդ հոդվածի համաձայն դատարանը կարող է թույլ չտալ հայցի հիմքի կամ առարկայի փոփոխություն, եթե այն բերում է հայցի էության փոփոխության: Նույն նշանակությամբ է «հայց» եզրույթն օգտագործվում նաև Լեռնային Ղարաբաղի Չանրապետության վարչական դատավարության օրենսգրքի /այսուհետ՝ ՎԴՕ/ համապատասխան հոդվածներում: ԼԴՅ քրեական դատավարության օրենսգրքի /այսուհետ՝ Քր. դատ. օր./ 169-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար<sup>3</sup>:

Դատական պրակտիկայում էլ «հայց» եզրույթը մեկնաբանվում, ընկալվում և օգտագործվում է հենց այդ երկու նշանակությամբ. որպես մեկ անձի կողմից մեկ այլ անձի դեմ ներկայացվող որոշակի նյութաիրավական պահանջ /հայցի առարկա/ և որպես որոշակի դատավարական կարգով քննելու և լուծելու համար դատարանին ներկայացված պահանջ: Այդ մասին են վկայում նաև դատական ակտերում օգտագործվող հետևյալ բառակապակցությունները՝ «հայցվորը հայց է հարուցել դատարան ընդդեմ պատասխանողի», «պատասխանողը հայցը չի ընդունում», «հայցը բավարարել», «հայցը մերժել» և այլն:

«Հայց» հասկացության բովանդակությունը լիարժեք կերպով չի բացահայտում նաև ՀՀ ՔԴՕ 26-րդ գլխի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից տրված

<sup>3</sup> Քրեական դատավարության օրենսդրության մեջ «հայց» և «պահանջ» եզրույթների օգտագործման մասին տես Ս.Սարաբյան, Քաղաքացիական հայց հարուցելու դատավարական կարգի հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում /ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2012/:

հայցի հետևյալ մեկնաբանությունը. «...հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից»<sup>4</sup>:

Այժմ փորձենք ներկայացնել դատավարագիտության մեջ այդ կապակցությամբ ձևավորված տեսակետները, քանի որ հայցի էության բացահայտումը չի կարող հիմնված չլինել կատարված տեսական հետազոտությունների վրա:

Հայցի էության վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ հայեցակարգեր, որոնք դատավարագիտության մեջ պայմանականորեն դասակարգվում են երեք հիմնական ուղղությունների<sup>5</sup>: Առաջին /դուալիստական կամ նյութաիրավական/ ուղղության ներկայացուցիչները /դատավարագետներ Վ.Ա.Ռյազանովսկի, Մ.Ա.Գուրվիչ, Ն.Բ.Ջեյդեր, Ա.Ն.Աբրամով, Պ.Ֆ.Ելիսեյկին, Մ.Ս.Շաքարյան, Ն.Ա.Չեչինա, Լ.Ա.Գրոս և ուրիշներ/, հենվելով գերմանացի դատա-

---

<sup>4</sup> Տե՛ս «Քաղաքացի Արտակ Չեյնալյանի դիմումի հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 28.11.2007թ. ՍԴՈ-719 որոշումը:

<sup>5</sup> Այդ մասին տե՛ս, օրինակ, *Рязановский В.А. Единство процесса.- М.: Юрид. бюро "Городец", 1996, 13-17 էջերը, Клейнман А.Ф. Новейшие течения в советской науке гражданского процессуального права, Гражданский процесс. Хрестоматия. Под ред. М.К. Треушников, М.: ОАО "Издательский дом "Городец", 2005, 432-437 էջերը, Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, Ոսկան Երևանցի, Եր., 2012, էջ 232-234, Исаенкова О.В., Демичев А.А., Соловьева Т.В, Ткачева Н. Н. Иск в гражданском судопроизводстве. Под ред. Исаенковой, «Волтер Клувер», 2009:*

վարագետ Ի.Ունգերի և նախահեղափոխական ռուս դատավարագետ Ա.Խ.Գոլմստենի գաղափարների վրա, հայցը բնութագրել են որպես երկու առանձին ճյուղերի՝ նյութական և դատավարության իրավունքի կատեգորիա և առանձնացրել են հայցի երկու ինքնուրույն հասկացություններ. ա/ հայց՝ նյութաիրավական իմաստով, բ/ հայց՝ դատավարական իմաստով: Նյութաիրավական իմաստով հայցը նշված ուղղության ներկայացուցիչները համարում են սուբյեկտիվ իրավունքը՝ որպես իրավահավակնության աստիճանի հասունացած պահանջ, իսկ դատավարական իմաստով հայցը՝ սուբյեկտիվ իրավունքը, ազատությունը կամ օրինական շահը պաշտպանելու մասին դատարանին ուղղված պահանջ: Ըստ նրանց՝ նյութական իրավունքում «հայց» եզրույթը պետք է օգտագործել նյութաիրավական իմաստով, իսկ դատավարությունում՝ դատավարական իմաստով, այսինքն՝ հայցի միասնական հասկացություն առկա չէ:

Երկրորդ /մոնիստական/ ուղղության ներկայացուցիչները, ովքեր կազմում են մեծամասնություն /դատավարագետներ Ա.Ֆ.Կլեյնման, Ա.Ա.Դոբրովոլսկի, Ս.Ի.Իվանովա, Ն.Ի.Ավդեենկո, Դ.Մ.Չեչոտ, Ռ.Ե. Ղուկասյան, Մ.Կ.Տրեուշնիկով և ուրիշներ/, անընդունելի համարելով գիտական առաջին ուղղության ներկայացուցիչների տեսակետը, հայցը դիտարկում են որպես միասնական հասկացություն երկու՝ նյութաիրավական և դատավարական կողմերով: Այստեղ հայցի երկու ինքնուրույն հասկացություններին փոխարինում է մեկը՝ կազմված երկու մասից /կողմից/՝ նյութաիրավական և դատավարական, որոնցից իրավունքը պաշտպանելու մասին դատարանին ուղղված պահանջը կազմում է հայցի դատավարական կողմը, իսկ հայցվորի կողմից պատասխանողին ուղղված պահանջը՝ հայցի նյութաիրավական կողմը, որը միաժամանակ նաև հայցի առարկան է: Այդ պահանջները, ըստ նշված ուղղության ներկայացուցիչների, միմյանց չեն



հակադրվում, ընդհակառակը՝ պայմանավորում են մեկը մյուսին՝ կազմելով որոշակի միասնություն. ներկայացված հայցով դատարանը գործ ունի հայցի միայն մեկ հասկացության հետ և իր վճռով տալիս է մեկ պատասխան: Պաշտպանության միջոց հայցն անխզելիորեն կապված է պաշտպանության օբյեկտի՝ սուբյեկտիվ իրավունքի հետ, անմիջականորեն բխում է նրանից: «Խախտված կամ վիճարկվող իրավունքը, պահանջը, - գրում է Ա.Ա.Դոբրովոլսկին, - դա դեռևս հայց չէ: Հայցը նյութական իրավունքի պաշտպանության միջոց է, ու հատկապես դրա համար այն չի կարելի նույնացնել պաշտպանության ենթակա նյութական իրավունքի հետ»: Ըստ Ա.Ա.Դոբրովոլսկու՝ հայցը հայտնվում է միայն այն ժամանակ, երբ իրավունքի պաշտպանության համար պահանջվում է դատարանի միջամտությունը, և երբ վիճելի պահանջը ենթակա է քննության որոշակի դատավարական կարգով: Ըստ որում, հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն առանձնացվում է որպես հայցի գլխավոր տարր: Ա.Ա.Դոբրովոլսկու կարծիքով՝ հայցն ամենից առաջ նյութաիրավական պահանջ է, որով հայցվորը դիմում է պատասխանողին՝ դատարանի միջոցով: Հետևաբար՝ իր բնույթով այն նյութաիրավական հասկացություն է: Սակայն, քանի որ այդ պահանջի դատական պաշտպանության պայմանները որոշվում են դատավարության իրավունքի նորմերով, հայցի ինստիտուտը հանդիսանում է նաև դատավարական ինստիտուտ<sup>6</sup>:

Ա.Ֆ.Կլեյնմանի կարծիքով՝ «Հայցի առարկան հայցվորի կողմից պատասխանողին ուղղված պահանջն է, որի կապակցությամբ հայցվորը դիմել է դատարան: Այդ պահանջի ծավալը, վավերության պայմանները կարգավորվում են նյութական իրա-

---

<sup>6</sup> *Տե՛ս Добровольский А.А. Исковая форма защиты права /основные вопросы учения об иске/, М., 1965, 42-44 էջերը:*

վունքի նորմերով: Հայցվորի՝ պատասխանողին ուղղված պահանջի հիմնավորվածության հարցը քննելիս դատարանը կիրառում է նյութական իրավունքի նորմերը: Դրա համար էլ հայցը, բացի դատավարական կողմից /իրավունքի պաշտպանության համար դատարանին ուղղված պահանջից/, ունի նաև նյութաիրավական կողմ՝ կապված հայցի առարկայի հետ: Հայցը հանդիսանում է քաղաքացիական դատավարության իրավունքի ինստիտուտ, քանի որ նրա ենթակայությունը դատարանին, բովանդակությունը, առարկան, հիմքը, դատական քննության և հետագա ընթացքի պայմանները որոշվում են քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերի օգնությամբ»<sup>7</sup>:

«Եթե իրավահավակնությունն ինքնին ընդունակ լիներ պաշտպանելու խախտված իրավունքը, այսինքն՝ լիներ ինքնապաշտպանության միջոց, ապա դատարան հայց ներկայացնելու իմաստ չէր լինի. բավական կլիներ պահանջ ներկայացնել, և հայցվորի սուբյեկտիվ իրավունքը պաշտպանություն կստանար», - նշում է Պ.Վ.Լոգինովը<sup>8</sup>:

Հետագայում հրատարակված իր աշխատություններում Ս.Ա.Գուրվիչը քաղաքացիական դատավարությունում հայցը սահմանում է հետևյալ կերպ. «Հայցը հայցվորի կողմից դատարան ներկայացված պահանջ է՝ օրենքով սահմանված որևէ եղանակով պաշտպանելու համար վիճելի քաղաքացիական իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը հայցվորի կողմից ցույց տրված փաստերի հիման վրա, որոնց հետ հայցվորը կապում է պատասխանողին ուղղված իր պահանջը»<sup>9</sup>:

<sup>7</sup> Տե՛ս *Гражданский процесс. Хрестоматия. Под ред. М.К. Треушниковой, М.: ОАО Издательский дом "Городец", 2005, էջ 896:*

<sup>8</sup> Տե՛ս *Логинов П.В. Понятие иска и исковая форма защиты права, Советское государство и право. 1983, N2:*

<sup>9</sup> Տե՛ս *Гурвич М.А. Учение об иске /состав, виды/, М., 1981, էջ 10:*

Այսպիսով, հայցի սահմանման մեջ հեղինակը պարզորոշ կերպով առանձնացրել է հայցվորի երկու տեսակի պահանջները՝ դատարանին ուղղված դատավարական պահանջը և պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը: Ընդամին, առաջնությունը տրվել է դատավարական տարրին: Այդ կապակցությամբ Գ.Լ.Օսոկինան իրավացիորեն առաջընթաց է նկատում Մ.Ա.Գուրվիչի հայացքներում, երբ նա հայցի սահմանման մեջ միավորում է երկու տարր՝ դատավարական և նյութաիրավական: Մ.Ս. Գուրվիչի և Ա.Ա. Դոբրովոլսկու հայացքների տարբերությունը կայանում է միայն նրանում, որ առաջինը դատավարական տարրը՝ պաշտպանության համար դատարանին դիմելը, դնում է առաջին տեղում, իսկ նյութաիրավական տարրը՝ հայցվորի կողմից պատասխանողի դեմ ուղղված պահանջը՝ երկրորդ տեղում: Սակայն սկզբունքային տարբերություններ նրանց մտեցումներում չկան<sup>10</sup>:

Հայցի դատավարական կողմն ընդգծել է նաև Ի. Ժերուլիսը՝ նշելով, որ «հայցն ամենից առաջ հայցվորի պահանջն է դատարանին՝ խախտված կամ վիճարկվող իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը պաշտպանելու մասին»<sup>11</sup>:

Հարկ է նշել, որ գիտական այս ուղղությունը ներկայացնող տեսաբանների ձևակերպումներում առկա են որոշ ոչ էական տարբերություններ:

Այսպես, օրինակ՝ պրոֆեսոր Ռ.Գ.Պետրոսյանն առաջարկում է հայցի հետևյալ սահմանումը. «Հայցը վիճելի նյութական իրավահարաբերություններից բխող և որոշակի իրավաբանական փաստերի վրա հիմնված նյութաիրավական պահանջ է, որը մեկ

<sup>10</sup> Տե՛ս *Осокина Г.Л. Иск /теория и практика/. «Городец». М., 2000, էջ 192:*

<sup>11</sup> Տե՛ս *Жерулис И.А. Понятие иска как процессуальной формы защиты права /проблемы, гарантии осуществления и защиты прав граждан/, Тарту, 1977, էջ 267:*

անձ /սուբյեկտիվ նյութական իրավունքի ենթադրյալ կրողը/ ներկայացնում է մեկ այլ անձի /սուբյեկտիվ պարտականության ենթադրյալ կրողին/, և միաժամանակ վեճը դատավարության օրենքով սահմանված որոշակի կարգով քննելու և լուծելու պահանջն է, որ ներկայացվում է դատարանին»<sup>12</sup>:

Գ.Լ.Օսոկինայի կարծիքով՝ հայցի նման ընբռնման դեպքում այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը հանդես եկող անձանց պահանջները չի կարելի հայց անվանել, քանի որ դրանք չեն պարունակում հայցի էական հատկանիշը՝ պատասխանողին ուղղված հայցվորի նութաիրավական պահանջը: Ըստ նրա՝ հայցի հասկացությունը պետք է լինի համապարփակ և ընդգրկի իրավունքի կամ օրինական շահի վեճերով գործ հարուցելու՝ օրենքով նախատեսված բոլոր դեպքերը: «Հայցի նպատակը,- գրում է Գ.Լ.Օսոկինան, - արդարացված կարող է լինել այն դեպքում, եթե անձը, անկախ այն բանից, թե ունի իրավունքն ու շահն է խնդրում պաշտպանել, իր պահանջը հիմնավորելու համար հենվում է համապատասխան իրավաբանական փաստերի վրա, որոնք հաստատում են ինչպես պաշտպանության ենթակա իր իսկ իրավունքի կամ շահի առկայությունը, այնպես էլ այդ իրավունքի կամ շահի խախտումը կամ վիճարկումը: Քանի որ այդ փաստերի համակցությունը որոշվում է նյութական իրավունքի նորմով, այն չի կարող փոխվել՝ կախված այն բանից, թե ով է հարուցել հայցը, այսինքն՝ չի կարող փոխվել կախված նրանից, թե շահագրգիռ անձը պաշտպանում է ի՞ր, թե՞ «օտար» իրավունքը»<sup>13</sup>:

Մեր կարծիքով՝ «օտար» իրավունքի մասին Գ.Լ.Օսոկինայի դատողությունը համոզիչ չէ, քանի որ բոլոր հայցերում առկա է

<sup>12</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., *նշվ. աշխ., էջ 234*:

<sup>13</sup> Տե՛ս *Осокина Г.Л. Иск /теория и практика/, «Городец», М., 2000, էջ 192*:

նյութաիրավական կողմը /նյութական իրավունքի վրա հիմնված պահանջը/, ու դատարանի վճռի օրինական ուժը տարածվում է միայն նյութական իրավահարաբերությունների սուբյեկտների վրա: Ուրիշի շահերի պաշտպանությամբ հայց հարուցելը բացառություն է ընդհանուր կանոնից, իսկ բացառությունների վրա, ինչպես հայտնի է, տեսություններ չեն կառուցվում:

Պետք է նաև նկատել, որ հայրենական օրենսդրությունը ոչ մի տարբերություն չի դնում նյութական իրավահարաբերության սուբյեկտ հանդիսացող հայցվորի և այլ անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության համար դատարան հայց ներկայացրած անձանց, այսպես կոչված՝ «դատավարական հայցվորների» միջև:

Այսպես, ՔԴՕ-ն ուղղակիորեն նախատեսում է, որ հայցվորներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք հայց են հարուցել: Պատասխանողներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնց դեմ հայց է հարուցվել /24 հոդվ. 2-րդ, 3-րդ կետեր/<sup>14</sup>: ՎԴՕ-ն նախատեսում է, որ հայցվորն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, վարչական մարմինը կամ պաշտոնատար անձն է, որը դիմել է վարչական դատարան /12 հոդվ./: Պատասխանողն այն վարչական մարմինն է, պաշտոնատար անձը, որի դեմ հայց է ներկայացվել վարչական դատարան /13 հոդվ./:

<sup>14</sup> Այլ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության ինստիտուտը խորհրդային ժամանակների ժնունդ է. նախախորհրդային ռուսական դատավարական իրավունքում հայց կարող էր հարուցել միայն վիճելի նյութաիրավական հարաբերության ենթադրյալ սուբյեկտը: ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, պահպանելով դատավարական հայցվորների ինստիտուտը, հիմնականում պահպանել է նաև քաղաքացիական դատավարությունում նրանց մասնակցության հիմքերին ու կարգին վերաբերող նորմերը: Հայրենական օրենսդիրն այլ անձանց իրավական վիճակը չի կարգավորել, ինչը դատական պրակտիկայում դժվարությունների տեղիք է տալիս:

Ըստ Յ.Ա.Պոպովայի և Ե.Վ. Խախալևայի՝ քաղաքացիական հայցը խախտված իրավունքի կամ օրինական շահի պաշտպանության նպատակով դատարանին՝ դատական իշխանության մարմնին ուղղված հայցվորի պահանջն է՝ քաղաքացիական իրավահարաբերությունների իրավահավասար սուբյեկտների միջև քաղաքացիիրավական վեճը լուծելու մասին, որը ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով: Վարչական հայցը դատարանին ուղղված պահանջ է՝ հանրային իշխանության մարմինների կամ նրանց պաշտոնատար անձանց, պետական և մունիցիպալ /տեղական ինքնակառավարման/ ծառայողների իրավական ակտերի, որոշումների, գործողությունների /անգործության/ օրինականությունը ստուգելու միջոցով վարչական վեճը լուծելու մասին, որը ենթակա է լուծման վարչական դատավարության կարգով<sup>15</sup>:

«Հայցը դատական պաշտպանության դիմած անձի ենթադրյալ խախտված կամ վիճարկվող իրավունքի պաշտպանության միջոց է, ուղղված է ենթադրյալ խախտողի դեմ և հիմնված է հայցվորի կողմից նշված վիճելի քաղաքացիական /լայն առումով/ իրավահարաբերության վրա», - նշում է Օ.Վ.Իսաենկովան<sup>16</sup>:

Քիտնականների երրորդ խումբը՝ հայցի դատավարական տեսության ներկայացուցիչները /Կ.Ս.Յուդելսոն, Կ.Ի.Կոմիսարով, Վ.Ս.Սենյոնով, Վ.Պ.Վոլոժանին, Գ.Ա.Աբրիլոնին, Վ.Վ.Յարկով, Վ.Ն.Շեգլով, Գ.Լ.Օսոկինա, Ս.Վ.Գևորգյան և ուրիշներ/, գտնում են, որ հայցը միայն դատական գործունեություն հարուցելու միջոց է հանդիսանում: Սուբյեկտիվ նյութական իրավունքը հայցի

<sup>15</sup> Ст'я Ю.А.Попова, Е.В.Хахалева. Административный иск как процессуальное средство защиты нарушенных прав, свобод, законных интересов граждан. Материалы Всероссийской научно-практической конференции. Краснодар -2006, էջ 25:

<sup>16</sup> Ст'я О.В. Исаенкова, А.А. Демичев, Т.В.Соловьева, Н.Н.Ткачева. Иск в гражданском судопроизводстве, «Волтер Клавер», 2009, էջ 33:

սահմանումը ձևակերպելիս էական դեր չի խաղում կամ ընդհանրապես գտնվում է հայցի հասկացության սահմաններից դուրս: Ըստ նրանց՝ այդ իրավունքը կազմում է հայցի նպատակը և ոչ թե բովանդակությունը:

Այսպես, Կ.Ս. Յուդելսոնի կարծիքով, հայցն ընդհանրապես կապված չէ նյութական իրավունքի հետ, այն իրենից ներկայացնում է միայն դատավարական գործունեություն հարուցելու միջոց, իրավունքը կամ օրինական շահը պաշտպանելու նպատակով դատարանին ուղղված դիմում<sup>17</sup>:

Ըստ Ս.Վ. Գևորգյանի՝ հայց է կոչվում խախտված կամ վիճարկվող քաղաքացիական սուբյեկտիվ իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը պաշտպանելու նպատակով առաջին ատյանի դատարանին ուղղված դիմումը: Նույն տեղում Ս.Վ.Գևորգյանը նաև ավելացրել է, որ հայցի էությունը բնութագրվում է դատավարական այն գործունեությամբ, որը նրանով ներկայացված պահանջի համաձայն իրագործում է դատարանը՝ խախտված քաղաքացիական սուբյեկտիվ իրավունքները սահմանված կարգով պաշտպանելու նպատակով<sup>18</sup>:

Գ.Ա. Աբուլոնինը գտնում է, որ ոչ մի անհրաժեշտություն չկա հետազոտելու այն հարցը, թե ինչպիսին է հայցվորի նյութական իրավունքը, որի կապակցությամբ նա հայց է ներկայացնում: Հայցի հասկացության մեջ ընդգրկելով նյութաիրավական իմաստ՝ դատավարագետներն այս կամ այն չափով ներխուժում են քաղաքացիական նյութական իրավունքի ոլորտ ու այդպիսով խուսափում քաղաքացիական դատավարության նորմերի հետազոտման ու կատարելագործման առաջնահերթ խնդիրներից: Ըստ նրա՝ «հայցը հանդիսանում է քաղաքացիական դատավարական

<sup>17</sup> Տե՛ս Юдельсон К.С., *Советский гражданский процесс*. М., 1965, էջ 199:

<sup>18</sup> Տե՛ս Գևորգյան Ս.Վ., *Սովետական քաղաքացիական դատավարություն, «Հայաստան» հրատ. եր., 1972, էջ 187:*

րության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված դիմում, որը կարող է բովանդակել դատարանին հասցեագրված խնդրանք՝ դատական պաշտպանության դիմած անձի անձնական իրավունքի և օրինական շահի պաշտպանության մասին, խնդրանք՝ տվյալ անձի անձնական իրավունքի և օրինական շահի հետ մեկտեղ մի քանի անձանց կամ անձանց բազմաքանակ խմբերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մասին, անձի խնդրանքը՝ ուրիշ անձի, մի քանի անձանց կամ անորոշ շրջանակի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մասին»<sup>19</sup>:

Ըստ Գ.Լ.Օսոկինայի՝ հայցն իրենից ներկայացնում է իր կամ օտար իրավունքի կամ օրինական շահի պաշտպանության մասին շահագրգիռ անձի՝ վիճելի նյութական իրավահարաբերությունից բխող պահանջ, որը ենթակա է քննության և լուծման օրենքով սահմանված կարգով: Քանի որ պաշտպանությունն իրականացնում է դատարանը, ապա նրա կարծիքով, հայցի սահմանման մեջ այդ մասին նշելն ավելորդ է: Համանման ձևով է հայցը սահմանում նաև Ա.Ա.Վլասովը<sup>20</sup>:

Ըստ Ե.Ա. Տրեշչևայի՝ հայցը սուբյեկտիվ իրավունքի կամ օրինական շահի պաշտպանության մասին առաջին ատյանի դատարանին ներկայացված պահանջն է<sup>21</sup>:

Ինչպես իրավափորձն նշվել է գրականության մեջ, հայցի դատավարական իրավական տեսության ներկայացուցիչների սահմանումները լայն են ու չեն արտացոլում «հայց» հասկացության

<sup>19</sup> *Տե՛ս* Аболонин Г.О. *Групповые иски. Изд. НОРМА, М., 2001, էջ 12:*

<sup>20</sup> *Տե՛ս* Осокина Г.Л. *Гражданский процесс. Особенная часть. М.: Норма, 2007, էջ 449:* Власов А.А. *Гражданский процесс: 7-е изд., перераб. и доп., М.Юрайт, 2015, էջ 200:*

<sup>21</sup> *Տե՛ս* Е.А.Трещева. *К вопросу о понятии иска и искового заявления в гражданском и арбитражном процессах. Материалы Всероссийской научно-практической конференции. Краснодар -2006, էջ 264:*



բուլոր կողմերը /բուլոր էական հատկանիշները/. դրանցում չափազանցվել է հայցի մի կողմը /դատավարական/ և թերազնահատվել կամ անտեսվել է մյուս կողմը /նյութաիրավական/:

Մինչդեռ, ինչպես նշվում է գրականության մեջ, դատարան դիմելն ընդամենն իրավաբանական փաստ է, հայցի իրացման գործում միայն առաջին քայլը: Եթե հայցը հասկացվի միայն որպես դատարան դիմելու, դատավարություն հարուցելու միջոց, ապա այն, որպես կանոն, գործ հարուցելուց հետո կդադարի գոյություն ունենալուց, այնինչ հայցի /հայցադիմումի/ միջոցով ոչ միայն գործն է հարուցվում, այլև իրականացվում է նրա քննությունն ու լուծումը: Հայցը դատավարական ինստիտուտ է ու առկա է դատավարության ցանկացած փուլում, այդ թվում՝ վերաքննիչ և վճարելի ատյաններում /հայցի քննության և լուծման սահմանների մասին տես սույն աշխատության վերջին գլուխը/:

Բացի դրանից, հայցի սահմանումը «դիմում» կատեգորիայի միջոցով ի վիճակի չէ բացատրելու այնպիսի հայցային ինստիտուտների գոյությունը, ինչպիսիք են՝ հայցային վաղեմությունը, հայցագինը, հայցապահանջները միացնելը և անջատելը, հայցից հրաժարվելը, հայցի հիմքը կամ առարկան փոփոխելը, հաշտության համաձայնությունը, հայցից հրաժարվելը, հայցի ընդունումը, հայց ներկայացնելը և այլն: «Միայն դատարանին դիմելն առանց հայցվորի կողմից պատասխանողին ներկայացվող որոշակի նյութաիրավական պահանջի, առարկայազուրկ է և անիմաստ: Դատարանը պաշտպանության օբյեկտ չի ունենա: Հայցի էությունը, հայցային վարույթում դատարանի խնդիրը հենց կայանում է նրանում, որ դատարանն իրեն տրվող հայցադիմումի հիման վրա և խստորեն սահմանված դատավարական կարգով ստուգի հայցվորի կողմից պատասխանողին ներկայացվող և հայցադիմումում ձևակերպված նյութաիրավական պահանջի օրինականությունն ու հիմնավորվածությունը և բավարա-

րի այն կամ մերժի վճռով», - նշում է պրոֆ. Ռ.Գ.Պետրոսյանը<sup>22</sup>:

Հարկ է նշել, որ հայցի զուտ դատավարական ընկալումը, երբ հայցի հասկացության տակ նկատի է առնվում միայն դատական գործունեություն հարուցելը, բացակայում էր նաև հին հռոմեական իրավաբանների մոտ, ովքեր, ինչպես հայտնի է, ունեին դատավարական - իրավական մտածողություն /նրանց համար բնորոշ էր իրավահարաբերությունն առավելապես դատավարական կատեգորիաներով բնութագրելը: Հայցը /actio/ հռոմեական իրավաբանի համար ուներ ոչ միայն դատավարական՝ իրավունքի պաշտպանության դատավարական միջոցի կամ ընդհանրապես դատավարության նշանակություն, այլև նյութական իմաստ, քանի որ մագիստրատի կողմից այն տրվում էր նախնական քննության հիման վրա՝ նախապատրաստական /in jure/ փուլից հետո, որից հետո միայն վրա էին հասնում դատարան դիմելու իրավական հետևանքները: Հայցը խախտված իրավունքի պաշտպանության անվերապահ միջոց չէր հանդիսանում. մագիստրատն էր որոշում, թե կոնկրետ ո՞ր պահանջներն են պաշտպանություն ստանում պետության կողմից, կոնկրետ ո՞ր դեպքում է պետության կողմից տրվում հայց, իսկ հայցերի ճյուղավորված համակարգն անվանվում էր կամ ըստ էության կամ այն սահմանած մագիստրատի անունով /գոյություն ունեին հարյուրից ավելի հայցատեսակներ, որոնցից շատերին բնորոշ էին հատուկ հայցային բանաձևեր/: Հռոմեական իրավաբանների կարծիքով՝ միայն դատական պաշտպանությունն է գոյություն ունեցող իրավունքին տալիս իրական արժեք և կատարելիություն: Միայն այն դեպքում, երբ պետական մարմինների կողմից հայտնի կատեգորիայի գործերով նախատեսվում էր հայց ներկայացնելու հնարավորություն, կարելի էր խոսել պետության կողմից

<sup>22</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ. .Գ., նշվ. աշխ., էջ 233:

պաշտպանվող իրավունքի մասին: Դատավարությունում հայցը պետք է հետամուտ լիներ տվյալ անձի շահերին համապատասխանող որոշում կայացնելուն: «Հայցը ոչ այլ ինչ է, եթե ոչ անձի իրավունքը՝ դատարանում հետամուտ լինել իր օգտին գոյություն ունեցող իրավունքին»<sup>23</sup>: Ֆորմուլյար դատավարության անձնական հայցերին վերաբերող այս սահմանումը, որը հետագայում վերարտադրվել է Հուստինյանոսի Ինստիտուցիաներում, ընկալվել է որպես ընդհանուր սկզբունք ու սահմանում էր նյութական իրավունքին հայցի համապատասխանության անհրաժեշտությունը:

Այդ նշանակությամբ էլ հետագայում հայցն ընկալվել է եվրոպական իրավագիտության կողմից: XIX դարի առաջին կեսում դատավարագիտության մեջ գերիշխող ուսմունքը /դոկտրինը/, այսպես կոչված, հայցի իրավունքի նյութաիրավական տեսությունը /դատավարագետ Ի. Ունգեր և մյուսներ/ նյութական քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության փոխադարձ կապն այսպես էին սահմանում. ով ունի սուբյեկտիվ քաղաքացիական իրավունք, նրան պատկանում է նաև հայցի իրավունքը: Հայցը համարվում էր սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքի բաղկացուցիչ մասը: Իրավունքի բոլոր համակարգերում օրենսդիրները քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը մտցնում էին նյութական օրենսգրքերի մեջ՝ որպես դրանց առանձին մասեր կամ գլուխներ. տարբերություն չէր դրվում նյութական և դատավարության իրավունքի ճյուղերի միջև. քրեական դատավարությունը մինչև անգամ քաղաքացիական դատավարության մաս էր կազմում: Այդ տեսանկյունից հայցը /հայցի իրավունքը/ դիտարկվում էր իբրև հակառա-

---

<sup>23</sup> *Стів Дождев Д.В. Римское частное право. Под ред. Нерсесянца В.С. - М.: Изд. группа ИНФРА М-НОРМА, 1997, էջ 171:*

կորդ կողմի՝ պատասխանողի նկատմամբ իրավունք, քանի որ նա էր խախտել սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքը:

Այսպիսով, հայցը /հայցի իրավունքը/ կախման մեջ էր դրվում նյութական իրավունքից, մինչդեռ միայն գործը քննելու արդյունքում կարող է պարզվել այդ իրավունքն իրականում հայցվորին պատկանելու հանգամանքը. հայց ներկայացնելու համար բոլորովին պարտադիր չէ սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքով օժտված լինելը, բավական է օժտված լինել դատավարական իրավունակությամբ:

Հայցի հանրային իրավունքի գաղափարը, նյութական և դատավարական իրավունքի տարանջատումը, որը նոր դարաշրջան բացեց հայցի մասին ուսմունքում, ըստ որի՝ դատավարական իրավունքը որակվում է որպես հանրային իրավունքի ճյուղ, իսկ հայցը՝ համապատասխանաբար ոչ թե պատասխանողին, այլ դատարանին ուղղված պահանջ, իրավաբանական գրականության մեջ երևան է եկել միայն XIX դարի երկրորդ կեսում՝ Գերմանիայում ու տարածվել ռուսական իրավունքում, իսկ հետագայում, ինչպես արդեն նշվել է, նաև՝ խորհրդային իրավունքում: Ինչ վերաբերում է հայցի իրավունքի գերմանական ժամանակակից տեսությանը, ապա այն իրենից ներկայացնում է նշված երկու ուղղությունների բուն էությունը /կվինտեսենցիան/. հայցը մի կողմից պահանջ է՝ ուղղված դատարանին, մյուս կողմից պահանջ՝ ուղղված պատասխանողի դեմ<sup>24</sup>:

Ի տարբերություն հռոմեական իրավունքի, որտեղ դատական պաշտպանություն հատկացնելն էր ստեղծում իրավունք, ժամանակակից իրավագիտությունը սուբյեկտիվ նյութական իրավունքը դիտարկում է իբրև առաջնային /բովանդակություն/, իսկ նրա

<sup>24</sup> Այդ մասին տես *Рязановский В.А. Единство процесса.- М.: Юрид. бюро "Городец", 1996, 13-34 էջերը, Давтян А.Г. Гражданское процессуальное право Германии. М.: Городец- издат. 2000, էջ 201:*

դատական պաշտպանությունը /դատավարությունը/ համարում է հետևանք /ձև/: Ոչ թե պրետորը, դատավորը կամ պետությունն է քաղաքացուն հայց ներկայացնելու «թուլտվություն» տալիս, այլ քաղաքացին, շնորհիվ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի, ինքն է որոշում՝ խախտվե՞լ է, արդյոք, իր իրավունքը, դիմե՞լ դատական պաշտպանության, թե ոչ: Հայցը միշտ հասցեագրվում /ներկայացվում/ է դատարանին, քանի որ դատարանն է պետության անունից իրականացնում իրավունքի պաշտպանություն:

Ցանկացած ընկալմամբ /մոնիստական, դուալիստական, դատավարական/ հայցն իր հիմքում ունի սուբյեկտիվ նյութական իրավունք, իսկ սահմանումների միջև տարբերությունները հիմնականում հայտնվում են այն ժամանակ, երբ փորձում են որոշել, թե ու՞մ է ուղղված հայցվորի պահանջը՝ դատարանին, թե՞ պատասխանողին<sup>25</sup>: Հայցը սուբյեկտիվ նյութական իրավունքի պաշտպանության միջոց է: Ընդ որում, դրա գոյությունը պայմանավորված է իրավունքի մասին վեճի առկայության ենթադրության գոյությամբ. եթե դիմողի մոտ չկա իրավունքը խախտվելու կամ վիճարկվելու մասին ենթադրություն, ապա չկա նաև հայց: Վեճը կարգավորելու նպատակով նյութաիրավական հարաբե-

<sup>25</sup> Այս առումով նույնպես առկա է «շփոթ» օրենսդրության մեջ՝ մի դեպքում օգտագործվում է «պատասխանողին», մյուս դեպքում՝ «պատասխանողի դեմ» եզրույթը /օրինակ՝ ՔԴՕ 24 հոդվ. 3-րդ կետ, 82 հոդվ. 1-ին կետի 6-րդ ենթակետ/: Հայրենական դատական պրակտիկայում հայցը ներկայացվում է ոչ թե պատասխանողին, ինչպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնության դատական պրակտիկայում է, այլ ընդդեմ պատասխանողի: Վերջին ժամանակներս էլ դատական ակտերում անհասկանալի պատճառով օգտագործվում է «ըստ հայցի ... ընդդեմ ... պահանջի մասին» ձևակերպումը՝ նախկինում օգտագործվող «ըստ հայցի ... ընդդեմ ... մասին», մեր կարծիքով, ավելի ճիշտ /տեսական հիմնավորում ունեցող/ ձևակերպման փոխարեն: Որևէ իրավական հիմնավորում չունի, մեր կարծիքով, նաև դատական ակտերում հանդիպող «ըստ հայցի ... ընդդեմ ... պատասխանողի և երրորդ անձի» ձևակերպումը /հայցը երրորդ անձի դեմ չի կարող ներկայացվել/:

րության մի մասնակցի պահանջը մյուսին, առանց դատարան դիմելու կամ մինչև դատարան դիմելը, հայց չի համարվում:

ՔԴՕ-ն չի բացահայտում նաև իրավունքի մասին վեճի բովանդակությունը, թեպետև «վեճ», «վեճի առարկա», «իրավունքի մասին վեճ ծագել» արտահայտությունները հիշատակվում են բազմաթիվ հոդվածներում /16, 29, 30, 81, 82, 88, 93, 94, 99, 123, 191 և այլն/<sup>26</sup>: Իրավաբանական գրականության մեջ վեճը համարվում է նյութական իրավահարաբերության ենթադրյալ մասնակիցների այնպիսի վիճակը, երբ նրանցից մեկի /ապագա պատասխանողի/ վարքագիծը /գործողությունը կամ անգործությունը/ ի վիճակի չէ բավարարելու մյուսի /ապագա հայցվորի/ շահերը՝ նրանց միջև սուբյեկտիվ իրավունքների և իրավաբանական պարտականությունների կապակցությամբ առաջացնելով բախում<sup>27</sup>:

Կարծում ենք, որ հայցի հասկացության տարբեր սահմանումներն իրենց օբյեկտիվ հատկանիշների միջոցով, ամբողջու-

---

<sup>26</sup> «Վեճ» բառի ստուգաբանությունը հետևյալն է՝ 1. բանավոր կամ գրավոր հակաճառություն, որի ժամանակ յուրաքանչյուրը ձգտում է հաստատել իր կարծիքը՝ իր ճշտությունը, 2. որևէ բանի առթիվ եղող տարաձայնությունից բխած հակաճառություն՝ վիճաբանություն և այլն /տես է.Բ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1976, հ. 2, էջ 1372/:

<sup>27</sup> Տես, օրինակ, Исаенкова О.В., Демичев А.А., Соловьева Т.В., Ткачева Н.Н. Иск в гражданском судопроизводстве, Под ред. Исаенковой О.В., "Волтерс Клубер", 2009, 2009, էջ 54:

ԼԴՅ աշխատանքային օրենսգրքի /այսուհետ՝ Աշխ. օր./ 263-րդ հոդվածը տալիս է աշխատանքային վեճի հետևյալ բնորոշումը. «Աշխատանքային վեճը աշխատողի և գործատուի միջև տարաձայնություն է, որն առաջանում է աշխատանքային օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, ներքին իրավական ակտերով, աշխատանքային կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված իրավունքների և պարտականությունների կատարման ժամանակ»:

Աշխատանքային վեճերի մասին տես Պետրոսյան Գ.Վ. Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք (հատուկ մաս), 2-րդ հրատարակություն, Եր., «Հայրապետ» հրատ., 2015, 576-589 էջերը:

թյամբ վերցրած, արտահայտում են հայցի էությունը: Միևնույն ժամանակ, ավելի ճիշտ ենք համարում հայցի միասնական հասկացության կողմնակիցների տեսակետը: Հայցը միասնական հասկացություն է, որն ունի երկու կողմ՝ նյութաիրավական և դատավարաիրավական: Երկու կողմերն էլ գտնվում են անքակտելի միասնության մեջ: Հայցի նման ընկալումը համապատասխանում է ինչպես օրենսդրությանը, այնպես էլ դատական պրակտիկային:

Ակնհայտ է նաև, որ հայցի հասկացության սահմանումը վերաբերում է տեսական, հիմնականում՝ եզրաքանական տարածայնությունների թվին, իսկ հայցի այս կամ այն կողմին կամ հատկանիշին շեշտադրումը շատ դեպքերում թելադրված է կոնկրետ նպատակներով և համատեքստով, որից հայցի էությունը չի փոխվում, և հայցի իրավական ինստիտուտը չի կորցնում իր գիտական ու գործնական նշանակությունը:

Հայցը չի կարելի նույնացնել հայցադիմումի հետ, որը հայցի ձևակերպման դատավարական միջոցն է՝ հայցի արտահայտման արտաքին ձևը: Դատարան հայց ներկայացնելը, այսինքն՝ դատարան դիմելու իրավունքի իրացումը հանդիսանում է այն իրավաքանական փաստը, որը հիմք է հանդիսանում հայցային վարույթ հարուցելու համար: Դատարան հայցադիմում ներկայացնելով էլ հենց իրականացվում է հայց ներկայացնելը:

Որպես իրավունքի պաշտպանության դատավարական միջոց՝ հայցը կիրառվում է քաղաքացիական, քրեական և վարչական դատավարությունում: Ընդ որում, քաղաքացիական ու քրեական դատավարությունում հայցը սուբյեկտիվ քաղաքացիական /մասնավոր/ իրավունքների պաշտպանության միջոց է, իսկ վարչական դատավարությունում՝ սուբյեկտիվ հանրային իրավունքների պաշտպանության միջոց: Այսինքն՝ հայրենական իրավունքում հայցը հանդիսանում է այն ընդհանուր գիտաիրա-

վական կատեգորիան, որը միավորում է քաղաքացիական, քրեական և վարչական դատավարությունները: Ի դեպ, հայցը վարչական դատավարությունում կիրառելու գաղափարը, որը դեռևս 20-րդ դարի երկրորդ տասնամյակում առաջ է քաշել ռուս ակադեմիկոս դատավարագետ Բ.Ա.Ռյազանովսկին<sup>28</sup>, հայկական իրավունքում կյանքի է կոչվել ավելի շուտ, քան Ռուսաստանի Ռազնությունում /ՌԴ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունվել է 08.03.2015թ. և գործողության մեջ է դրվել 2015 թվականի սեպտեմբերի 15-ից/:

Հեղինակը գտնում է, որ քաղաքացիական հայցի սպառիչ բնութագրությունը հետևյալն է՝ **քաղաքացիական հայցը հայցվորի՝ պատասխանողի դեմ ուղղված և իր կողմից ցույց տրված իրավաբանական փաստերի վրա հիմնված քաղաքացիաիրավական պահանջ է, ինչպես նաև դատարանին ուղղված պահանջ՝ քաղաքացիական իրավունքի վերաբերյալ վեճը քաղաքացիական դատավարության ձևով քննելու և լուծելու համար:**

Քանի որ հայցը ներկայացվում է առաջին ատյանի դատարան, ուստի հայցի սահմանման մեջ այդ մասին նշելն ավելորդ է:

Ինչ վերաբերում է դատավարության հայցային ձևին, ապա դրան բնորոշ են հետևյալ հատկանիշները՝ 1/ սուբյեկտիվ քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, հողային և այլ մասնավոր /քաղաքացիական՝ լայն առումով/ իրավունքի մասին վեճի առկայությունը, 2/ հայցի առկայությունը, 3/ հակադիր իրավական շահերով օժտված վիճող սուբյեկտների՝ կողմերի առկայությունը, 4/ հայցային ձևը մրցակցային է, ինչը պայմանավորված է հակադիր շահերով օժտված երկու կողմերի հավասար իրավական վիճակով, հայցվորի և պատասխանողի մրցակցությամբ, ինչպես նաև վեճը լուծող սուբյեկտի՝ վեճի ելքում չչա-

<sup>28</sup> *Տե՛ս Рязановский В.А. նշվ. աշխ., 20-34 էջերը:*



հագրագրված դատարանի դերով:

Հայցային վարույթը գրականության մեջ ընդունված է անվանել «ընդհանուր» վարույթ, որովհետև դրան համապատասխան են սահմանվում մնացած վարույթների գործերի քննության ընդհանուր կանոնները՝ այդ գործերի բնույթով պայմանավորված որոշ առանձնահատկություններով: Ընդ որում, հայցային և հատուկ վարույթների բաժանման հիմքում օրենսդիրը մշտապես դրել է իրավունքի մասին վեճի առկայության կամ բացակայության հատկանիշը: Նյութաիրավական վեճի բացակայությունն իր հերթին պայմանավորում է հատուկ վարույթի մյուս տարբերությունները: Այսպես, հատուկ վարույթում դատական պաշտպանության առարկա հանդիսանում է ոչ թե իրավունքը, այլ օրինական շահը, իսկ օրինական շահի պաշտպանությունը դիմողին անհրաժեշտ է ոչ թե լուր հանուն պաշտպանության, այլ ապագայում սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքն իրականացնելու կամ սուբյեկտիվ քաղաքացիական իրավունք ձեռք բերելու, կամ սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքի իրացման խոչընդոտները վերացնելու համար: Այստեղ չկա հայց, վարույթ հարուցելու միջոցը դիմումն է, որում դիմողը խնդրում է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այս կամ այն փաստը կամ անվիճելի իրավունքը, քաղաքացու իրավական վիճակը /օրինակ՝ քաղաքացու անգործունակությունը, լրիվ գործունակությունը/, չկան հակադիր շահերով օժտված կողմեր՝ հայցվոր և պատասխանող, չկան երրորդ անձինք, բացակայում են հայցի հետ անխզելիորեն կապված որոշ դատավարական ինստիտուտներ /օրինակ՝ հայցից հրաժարվելը, հայցն ընդունելը, հաշտության համաձայնություն կնքելը, հակընդդեմ հայց հարուցելը/, մրցակցության և տնօրինչականության սկզբունքները գործում են ոչ լրիվ չափով և այլն:

## 1.2. Հայցի տարրերը

Հայցի էությունը բնութագրվում է ոչ միայն նրա արտաքին հատկանիշներով, այլև ներքին կառուցվածքով՝ բովանդակությամբ: Քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության մեջ ու իրավակիրառական պրակտիկայում հայցի բովանդակությունը բնութագրելու համար օգտագործվում է «հայցի տարրեր» եզրույթը: ՔԴՕ-ն ներկայումս օգտագործում է նաև «հայցի էություն» եզրույթը /143 հոդվ. 1-ին կետ/, սակայն դրա բովանդակությունը չի բացահայտում<sup>29</sup>:

Հայցի տարրերի մասին հարցը նույնպես քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության մեջ ամենավիճելիներից է: Հեղինակների մի մասը առանձնացնում է հայցի երեք տարր՝ առարկա, հիմք և բովանդակություն: Մյուսները /ովքեր ճնշող մեծամասնություն են կազմում/ հայցի երկանդամ կառուցվածքի կողմնակիցներ են ու հայցի կառուցվածքում առանձնացնում են միայն դրա առարկան ու հիմքը: Տեսական վեճերն ընթացնում են հայցի ոչ միայն քանակական, այլև որակական կազմի /բովանդակության/ հարցում: Սակայն նշված հիմնախնդրով

---

<sup>29</sup> Հայերենում «տարր» բառն օգտագործվում է բաղադրիչ, որևէ բանի կազմող՝ բաղադրող, բաղկացուցիչ մասերից յուրաքանչյուրը, որևէ բանի առանձին մաս՝ կողմ, որը նրան բնորոշ առանձնահատկություն է տալիս և մնան այլ իմաստներով: «Բովանդակություն» բառն օգտագործվում է ինչ որ պարունակվում՝ բովանդակվում է մի բանի մեջ, պարունակություն, երևույթի կամ գործընթացի ներքին էությունը բնորոշող հիմքը՝ հիմունքը, առարկաների դասի՝ հասկացության մեջ արտացոլված հատկանիշների ամբողջությունը. որևէ բանի էությունը իմաստներով: «Էություն» բառի ստուգաբանությունը հետևյալն է՝ 1. որևէ բանի ամենահիմնականը, ամենաէականը, ներքին բովանդակությունը, 2. /փիլ/ առարկաների և երևույթների ներքին բնույթը՝ բովանդակությունը, որ բնութագրվում է երևույթների մեջ դրսևորվող և ճանաչվող նրանց ներքին կապերով ու հարաբերություններով /տե՛ս Է.Ք.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1976, հ. 2, էջ 1424, հ. 1, էջ 201, հ. 1, էջ 397/:

զբաղվող տեսաբանների աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ հաճախ վեճերն ընթանում են եզրույթների, այլ ոչ թե դրանց բովանդակության էության կապակցությամբ, իսկ քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ ու դատական պրակտիկայում օգտագործվում են հենց «հայցի առարկա» ու «հայցի հիմք» եզրույթները:

Հայցի առարկայի շուրջ գոյություն ունեն գիտական տարբեր տեսակետներ, որոնք համապատասխանում են հայցի վերոնշված մոնիստական, դուալիստական և դատավարական հայեցակետերին:

Այսպես, որոշ տեսաբանների կարծիքով վճռող հայցերում հայցի առարկան վիճելի իրավահարաբերությունն է և հայցվորի՝ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը, իսկ ճանաչողական և վերափոխիչ հայցերում՝ հայցվորի ու պատասխանողի միջև գոյություն ունեցող վիճելի նյութաիրավական հարաբերությունը<sup>30</sup>:

Կարծիքներ են հայտնվել նաև այն մասին, որ հայցի առարկան իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է կամ էլ իրավունքի պաշտպանության եղանակը /եղանակները/<sup>31</sup>:

---

<sup>30</sup> Տե՛ս Գրվիչ *М.А. Учение об иске /состав, виды/. М., ВЮЗИ, 1981: Гражданский процесс. Под ред. Мусина В.А., Чечиной Н.А., Чечота Д.М. - М., 2001, гл. "Иск", авт. гл. А.А. Ференс - Сороцкий, Гражданское процессуальное право. Под ред. Шакарян М.С. М., 2004, էջ 199: Գևորգյան *Ս.Վ., Սովետական քաղաքացիական դատավարություն, «Հայաստան» հրատ. Ե.1972, էջ 159: Власов А.А. Гражданское процессуальное право: М.: ТК Велби, 2004, էջ 201, Юдельсон К.С. Советский гражданский процесс. М., 1956, էջ 206, Гражданский процесс. Под ред. Абрамова С.Н., М., 1948, էջ 170, Коршунов Н.М., Мареев Ю.Х., Гражданский процесс. Изд. Норма, М., 2008, 322-328 էջերը:**

<sup>31</sup> Տե՛ս Щеглов *В.Н. Иск о судебной защите гражданского права. Томск, Томский ун-т, 1987, էջ 20, Осокина Г.Л. Гражданский процесс. Общая часть. Учебник. -3-е изд. Перераб. Норма: ИНФРА- М.: 2013, 449, Власов А.А. Гражданский процесс: 7-е изд., перераб. и доп. ,М.Юрайт, 2015, էջ 200:*

Վ.Եսայանի կարծիքով՝ հայցի առարկան հայցվորի կողմից դատական կարգով պատասխանողին ներկայացվող նյութաիրավական այն պահանջների ամբողջությունն է, որոնք բխում են վիճելի իրավահարաբերությունից և իրենց մեջ ներառում են պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքը /օրինական շահը/ և իրավունքի պաշտպանության եղանակները: Հետևում է, որ հեղինակը պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքը իրավունքի պաշտպանության եղանակի հետ միասին դիտարկում է որպես հայցի առարկայի բաղկացուցիչ մաս /բաղադրատարր/<sup>32</sup>:

Հեղինակների գերակշիռ մեծամասնության կարծիքով՝ հայցի առարկան հայցվորի նյութաիրավական պահանջն է՝ ուղղված պատասխանողին: Ըստ նշված տեսակետի՝ վիճելի իրավահարաբերությունը հայցի առարկա չի կարող հանդիսանալ, քանի որ օրենքում ասվում է, որ հայցադիմումում պետք է ցույց տրվի պահանջը, այլ ոչ թե իրավահարաբերությունը: Վիճելի իրավահարաբերությունը չի կարող հանդիսանալ հայցի առարկա նաև այն պատճառով, որ հենց նրանից է բխում հայցվորի՝ պատասխանողի դեմ ուղղված պահանջը: Բացի դրանից, միևնույն իրավահարաբերությունից կարող է առաջանալ ոչ թե մեկ, այլ մի քանի պահանջ, ու նրանցից յուրաքանչյուրը կարող է ծառայել որպես հայցի առարկա: Հայցի առարկա չի կարող հանդիսանալ նաև պաշտպանությունը, քանի որ այն ոչ թե հայցի առարկան է, այլ հայցի նպատակը, այն էլ՝ յուրաքանչյուր հայցի: Պաշտպանության միջոցը /հայցը/ և պաշտպանության առարկան /սուբյեկտիվ իրավունքը/, տարբեր բաներ են: Պաշտպանության միջոցը /հայցը/ հարկավոր է, որպեսզի դրա միջոցով պաշտպանվի այն,

<sup>32</sup> Տե՛ս Վ.Եսայան, Հայցի առարկան փոխելու իրավունքը և եղանակները քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», հունիս, 2014, էջ 59:

ինչը համարվում է պաշտպանության առարկա, այսինքն՝ սուբ-յեկտիվ իրավունք<sup>33</sup>:

Այս մոտեցումը, մեր կարծիքով, ճիշտ է, և այն բխում է դատավարության օրենսդրության վերլուծությունից:

Այսպես, ՔԴՕ 77-րդ հոդվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ հայցադիմումում պետք է նշվեն հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս՝ հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները: ՔԴՕ 79-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի մեկ հայցադիմումում միացնել միմյանց հետ կապված մի քանի պահանջներ: ՔԴՕ 123-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի յուրաքանչյուր պահանջը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու մասին կամ գործի վարույթը կարճելու մասին դատարանի եզրակացությունը: Նույնաբովանդակ իրավակարգավորումներ առկա են նաև ՎԴՕ-ում:

Դատական պրակտիկայում էլ հայցի առարկան մեկնաբանվում է իբրև հայցվորի՝ պատասխանողի կամ պատասխանողների դեմ ուղղված նյութաիրավական պահանջ /պահանջներ/:

Հայցի առարկա հանդիսացող կոնկրետ նյութաիրավական պահանջն իր մեջ ներառում է իրավունքի դատական պաշտպանության՝ նյութական օրենսդրությամբ նախատեսված կոնկրետ

---

<sup>33</sup> Տե՛ս Добровольский А.А. Исковая форма защиты права /основные вопросы учения об иске/, М. Изд. МГУ, 1965, 126-127 էջերը, Гражданский процесс. Под ред. Треушникова М.К. „Спарк,, М., 1996, авт. главы Иванова С.А., Добровольский А.А. Исковая форма защиты права /основные вопросы учения об иске/, М. Изд. МГУ, 1965, էջ 128, Щеглов В.Н. Иск о судебной защите гражданского права. Под ред. Осокиной Г.Л., Томск, Томский ун-т, 1987, էջ 19, Осокина Г.Л. Гражданский процесс. Общая часть. Учебник. 3-е изд. Перераб. Норма: ИНФРА-М.: 2013, էջ 121, Власов А.А. Гражданский процесс: 7-е изд., перераб. и доп. М.Юрайт, 2015, էջ 201, Պետրոսյան Ռ.Գ., նշվ. աշխ., էջ 235:

եղանակ /եղանակներ/<sup>34</sup>: Քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակների ընդհանուր թվարկումը տրված է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի /այսուհետ՝ Քաղ. օր./ 14-րդ հոդվածում, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է իրավունքը ճանաչելով, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելով, իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելով, առջինգ գործարքի անվավերության հետևանքները կիրառելով, վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելով և դրա անվավերության հետևանքները կիրառելով և այլն /հոդվածը իրավունքի պաշտպանության դատական եղանակները չի առանձնացնում, հասկանալի է, որ որոշ եղանակներ չեն կարող դատական լինել/: Ըստ այդմ, հայցի առարկա համարվում է պատասխանողին ուղղված հայցվորի նյութաիրավական պահանջը՝ որոշակի գործողություններ կատարելու, դրանց կատարումից ձեռնպահ մնալու, իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը ճանաչելու, այն փոփոխելու կամ դադարեցնելու մասին:

Իրավունքի պաշտպանության վերոնշյալ եղանակների բովանդակությունը հստակեցվել /մանրամասնվել/ է Քաղ. օր. այլ նորմերում և այլ իրավական ակտերում: Այսպես, օրինակ՝ Քաղ. օր. 14-րդ հոդվածը գրեթե նույնությամբ վերարտադրվել է Աշխ. օր. 38-րդ հոդվածում<sup>35</sup>: Իրավունքի պաշտպանության տարբեր եղանակներ են պարունակում ԼՂՀ ընտանեկան օրենսգիրքը

<sup>34</sup> Այդ մասին տես Արզումանյան Գ.Մ. Իրավունքների պաշտպանության հայցային ձևը, իրավ. գիտ. թեկն. ...ատենախոսություն, Երևանի պետական համալսարան-2006, էջ 48:

<sup>35</sup> Աշխատանքային իրավունքների պաշտպանության եղանակների վերլուծությունը տես Պետրոսյան Գ.Վ. Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք (ընդհանուր մաս), 2-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով, Եր., «Հայրապետ» հրատ., 2015, 336-352 էջերը:

/այսուհետ՝ Ընտ. օր./, ԼՂՀ հողային օրենսգիրքը և այլ օրենքներ:

Հասկանալի է, որ հայցի առարկայի կազմում իրավունքի՝ օրենքով չնախատեսված եղանակ չի կարող ներառվել, հակառակ դեպքում հայցապահանջը /հայցը/ կհամարվի ոչ իրավական պահանջ, ինչը ՔԴՕ 2-րդ հոդվածի ուժով ընդհանրապես դատական պաշտպանության ենթակա չէ: Տ. Վ. Սախնովայի արտահայտությամբ՝ պաշտպանության եղանակը չի կարող հայցվորի կողմից ձևակերպվել ըստ հայեցողության: Պաշտպանության եղանակը «ուղեկցում է» սուբյեկտիվ իրավունքին՝ ներառվելով այդ իրավունքից բխող նյութաիրավական պահանջի բովանդակության մեջ<sup>36</sup>:

Այսպիսով, հայցի առարկան միշտ բխում է կոնկրետ /վիճելի/ իրավահարաբերությունից: Դատարանը ցանկացած հայցով պարտավոր է որոշակի դատավարական կարգով /հայցային ձևով/ ստուգել պատասխանողի դեմ ուղղված հայցվորի պահանջը, որի հետ գործ է ունենում ամբողջ վարույթի ընթացքում: Հենց հայցվորի կողմից պատասխանողի դեմ ուղղված նյութաիրավական պահանջի կապակցությամբ է դատարանն արտահայտում իր կարծիքը դատական ակտում: Հայցը բավարարելով՝ դատարանը բավարարում է հայցվորի՝ պատասխանողի դեմ ուղղված պահանջը, հայցը մերժելով՝ դատարանը մերժում է այդ պահանջը:

Հայցի առարկան ձևակերպվում է հայցադիմումի ներածական մասում: Այն ձևակերպվում է նաև հայցադիմումի խնդրամասում՝ այդ պահանջը բավարարելու մասին դատարանին ուղղված խնդրանքում /պահանջում/: Ընդ որում, հայցվորի պահան-

---

<sup>36</sup> *Стѝ Сахнова Т.В. Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. - "Волтерс Клувер", 2008 г., <https://clck.ru/AQUkW>:*

ջի բնույթը որոշվում է վիճելի նյութական իրավահարաբերության բնույթով, ինչով էլ պայմանավորված է իրավունքի պաշտպանության տարբեր եղանակների ու հայցի տարբեր տեսակների ընտրությունը:

Դատավարագիտությունը և դատական պրակտիկան հայցի առարկան տարբերում են հայցի նյութական օբյեկտից: Նյութական օբյեկտը նյութական աշխարհի այս կամ այն գույքն է /իրը, առարկան/ կամ գույքային իրավունքը, ինչի մասին ներկայացվել է /որին ուղղված է/ հայցային պահանջը: Միևնույն օբյեկտի նկատմամբ կարող են ներկայացվել տարբեր` գույքը հետ պահանջելու, գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և այլ պահանջներ, հետևաբար և` յուրաքանչյուր դեպքում հայցի տարբեր առարկաներ միևնույն օբյեկտի նկատմամբ: Միևնույն ժամանակ հայցի նյութական օբյեկտը մտնում է հայցի առարկայի մեջ, վերջինիս բաղկացուցիչ մասն է կազմում կամ որ նույնն է` հայցի առարկայի նյութական հիմքն է<sup>37</sup>:

Հետևաբար` ակնհայտ է, որ հայցի նյութական օբյեկտը փոխվելու դեպքում փոխվում է նաև հայցի առարկան, ինչը բացառում է սկզբնական և կրկին ներկայացված հայցերի նույնությունը /այդ մասին տե՛ս հետագա շարադրանքում/:

**Այսպիսով, քաղաքացիական դատավարությունում հայցի առարկա է հանդիսանում վիճելի քաղաքացիական /լայն առումով/ իրավահարաբերությունից բխող ու հայցվորի կողմից պատասխանողի դեմ ուղղված նյութաիրավական պահանջը /պահանջները/, որն իր մեջ ներառում է քաղաքացիական /լայն առումով/ իրավունքի դատական պաշտպանության որևէ եղա-**

<sup>37</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., *նշվ. աշխ.*, էջ 236: Հայցի առարկայի ու նրա նյութական օբյեկտի վերաբերյալ ասվածը վերաբերում է նաև վարչական հայցերին: Այսպես, օրինակ, վիճարկման հայցի առարկայի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է:



**նակ /եղանակներ/ ու հայցի օբյեկտ, և որի կապակցությամբ դատարանը պետք է վճիռ կայացնի:**

«Չայցի հիմք» օրենսդրական հասկացության մեկնաբանումը հայրենական օրենսդրության մեջ նույնպես տրված չէ: Գրականության մեջ հայցի հիմքի տակ հասկացվում են հայցվորի կողմից ցույց տրված /ներկայացված/ իրավաբանական փաստերը, որոնցից նա բխեցնում է պատասխանողի դեմ ուղղված իր նյութաիրավական պահանջը՝ հայցի առարկան: Չայցի հիմքի հասկացության նման մեկնաբանումը բխում է դատավարական օրենսդրության վերլուծությունից: Մասնավորապես, որպես հայցադիմումի պարտադիր վավերապայման, ՔԴՕ-ն սահմանում է, որ հայցադիմումում պետք է նշված լինեն այն հանգամանքները, որոնց վրա հիմնված են հայցապահանջները և դրանք հաստատող ապացույցները /ՔԴՕ 77 հոդվ. 2-րդ կետի 4-րդ, 5-րդ ենթակետեր/: Այդպիսով, օրենսդիրը հայցի հիմքի իրավաբանական փաստերը տարբերակում է ապացույցներից՝ իրավաբանական փաստերի մասին տեղեկություններից /ՔԴՕ 43 հոդվ. 1-ին կետ./, որոնք հիմնավորում են հայցի հիմքը կազմող իրավաբանական փաստերը և ի վերջո՝ հայցվորի պահանջը: Չարկ է նշել, որ դատավարական օրենսդրության մեջ ու իրավակիրառական պրակտիկայում օգտագործվող «իրավաբանական փաստեր» և «հանգամանքներ» հասկացությունները նույնական են, հետևաբար՝ ճիշտ կլիներ միևնույն հասկացությունը կոչել միևնույն եզրույթով, ինչը նաև «Իրավական ակտերի մասին» ԼԴՅ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջն է: Ի դեպ, ՎԴՕ-ում օգտագործվում է հենց «փաստեր» եզրույթը:

Չայցի հիմքը, որպես հայցի բովանդակության տարր, հայցը բնութագրում է այն տեսանկյունից, թե ինչ իրավաբանական փաստերի հիման վրա է հայցվորը խնդրում պաշտպանել իր նյութաիրավական պահանջը: **Այդ իրավաբանական փաստերն**

### **Էլ հենց հանդիսանում են հայցի հիմքը:**

Քանի որ սուբյեկտիվ նյութական իրավունքը, որպես կանոն, հիմնվում է ոչ թե մեկ, այլ մի քանի իրավաբանական փաստերի վրա, ապա հայցի հիմքը նույնպես, որպես կանոն, բաղկացած է լինում ոչ թե մեկ, այլ մի քանի փաստերից՝ փաստերի համակցությունից, որը գտնվում է իրավունքի համապատասխան նորմի հիպոթեզի ազդեցության ներքո և իրավունքի տեսության մեջ կոչվում է «փաստական կազմ» կամ «փաստակազմ»:

Այսպես, ըստ կտակի ժառանգման համար անհրաժեշտ է օրենքով նախատեսված ձևով կազմված կտակը, կտակարարի մահը և ժառանգությունն ընդունելու մասին ժառանգի համաձայնությունը: Կամ Քաղ.օր. 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում: Տվյալ դեպքում հայցի փաստական հիմքում կարող են ընդգրկվել, օրինակ, պայմանագրի առկայության, հայցվորի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորության կատարման, պատասխանողի կողմից պայմանագրի էական խախտման փաստերը և այլն:

Հայցի հիմքի մեջ կարող են մտնել նաև այնպիսի փաստեր, որոնք ուղղակիորեն նշված չեն կիրառվող իրավանորմում, սակայն, այդուհանդերձ, կարևոր նշանակություն ունեն իրավաբանական հետևանքները վրա հասնելու առումով: Դրանց այդպիսի նշանակությունը պայմանավորված է, այսպես կոչված, կացության կամ իրավիճակային նորմերի կիրառմամբ: Օրինակ՝ ծնողական իրավունքներից զրկելու, երեխային դաստիարակության հանձնելու, բարոյական վնասը փոխհատուցելու, ընդհանուր գույքից բաժինն առանձնացնելու հարաբերություններն օրենսդիրն իրավական նորմերով լրիվությամբ չի կարգավորել, քանի

որ հնարավորություն չունի բացահայտելու այդ իրավահարաբերությունների բոլոր էական հատկանիշները, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պահանջվում է կոնկրետ մոտեցում՝ դատարանին իրավունք վերապահելով վեճը լուծել գործի կոնկրետ փաստերը հաշվի առնելով<sup>38</sup>:

ՔԴՕ 77-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայցի հիմք կազմող իրավաբանական փաստերը հայցադիմումում ցույց է տալիս հայցվորը: Ի տարբերություն օբյեկտիվորեն գոյություն ունեցող նորմերի՝ հայցի հիմքի իրավաբանական փաստերը հայցվորը ձևակերպում է ինքնուրույն ու տարբեր պատճառներով /այդ թվում՝ մասնագիտական իրավագիտակցության բացակայության/ միշտ չէ, որ դրանք համապատասխանում են իրականությանը կամ իրավական նորմին կամ առաջացնում են իրավական հետևանքներ կամ վերաբերելի են տվյալ գործով: Հայցի հիմքում դրված իրավաբանական փաստերը միայն վերացական հիմք են պահանջ ներկայացնելու համար. դատարանի համար դրանք համարվում են վիճելի, ենթադրվող: ՔԴՕ-ն հայցվորից չի պահանջում հայցադիմումում պարտադիր հենվել իրավական նորմերի վրա, տալ պատասխանողի հետ ունեցած իր իրավահարաբերությունների իրավական գնահատականը, հայցվորից պահանջվում է միայն նշել այն իրավաբանական փաստերը /օրենսդրի եզրաբանությամբ՝ հանգամանքներ-

<sup>38</sup> *Իրավունքի տեսությունից հայտնի է, որ ի տարբերություն բացարձակ որոշակի /հնչվերատիվ/ նորմերի, որոնք բացարձակ ճշտությամբ սահմանում են հասարակական հարաբերությունների մասնակիցների գործողությունների պայմանները, իրավունքներն ու պարտականությունները կամ դրանց խախտման համար իրավական պատասխանատվության չափը, հարաբերական որոշակի /իրավիճակային նորմերը/ հասարակական հարաբերությունների մասնակիցների գործողությունների, նրանց իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև իրավաբանական պատասխանատվության մասին բավարար ամբողջական տվյալներ չեն պարունակում և իրավակիրառողին հնարավորություն են տալիս վեճը լուծելիս հաշվի առնել կոնկրետ գործի փաստերը:*

րը/, որոնց վրա հիմնված են հայցապահանջները:

Հայրենական օրենսդիրը վերոնշյալ իրավակարգավորմամբ նպատակ է ունեցել ապահովելու դատական պաշտպանության մատչելիության իրավունքը, քանի որ դատարան դիմող շահագրգիռ անձը կարող է չիմանալ օրենքը, որն ընկած է իր խախտված կամ վիճարկվող իրավունքի հիմքում, և շահագրգիռ անձից պահանջել, որ նա, որպես հայցի հիմք, ցույց տա օրենքը, կարող է խոչընդոտել դատական պաշտպանության իրավունքի իրականացմանը<sup>39</sup>:

Ավելորդ չէ նշել, որ հայցադիմումի պատասխանի պարագայում նույնպես օրենսդիրը բավարարվել է առարկությունների փաստական հիմնավորման պահանջ սահմանելով /ՔԴՕ 85 հոդվ. 2-րդ, 3-րդ կետեր/: Քաղաքացիական դատավարությունում գործում է դատավորի կողմից օրենքի պատշաճ իմացության կանխավարկածը /«Jura novit curia»/. դատարանն ինքն է պարտավոր իմանալ ու կիրառել այն նորմերը, որոնք կարգավորում են տվյալ վեճը /կազուսը/, անգամ այն դեպքում, երբ հայցվորը դրանք սխալ է վկայակոչել կամ ընդհանրապես չի վկայակոչել<sup>40</sup>:

Այսպիսով, դատարանը կաշկանդված չէ հայցվորի հայտարարած փաստերի իրավական որակմամբ և պարտավոր է իրավական գնահատական տալ, իրավաբանորեն որակել հենց

---

<sup>39</sup> Անգամ հայցի ակնհայտ անհիմն լինելը հայրենական օրենսդրությամբ համարվում է ոչ թե հայցադիմումի ընդունումը մերժելու, այլ արագացված դատաքննություն կիրառելու հիմք:

<sup>40</sup> Անգլիական իրավունքում դատավորը, օրինակ, պարտավոր է իմանալ՝ ա/ Անգլիայի դատարանների կողմից կիրառվող բոլոր չգրված օրենքները, կանոնները, բ/ խորհրդարանի ակտերը, գ/ օրենքի ուժ ունեցող սովորույթները, դ/ դատավարության կարգը և այլն /տե՛ս Треушников М.К. Судебные доказательства. М., ОАО. Издательский дом “Городец”, М. 2004, էջ 60:

հայցվորի ցույց տված իրավաբանական փաստերը: Ընդ որում, ի տարբերություն հայցի հիմքի իրավաբանական փաստերի, հայցի իրավական հիմնավորումը հայցվորի կողմից կարող է փոփոխվել վարույթի բոլոր փուլերում, այդ թվում՝ դատաքննության ժամանակ, ինչպես նաև վերաքննիչ ու վճռաբեկ վերանայման ընթացքում: Քաղաքացիական գործի քննության և լուծման համար անհրաժեշտ իրավանորմերը որոշելը, մեկնաբանելը և կիրառելը դատարանի պարտականությունն է, ավելի ճիշտ՝ մեկնաշնորհը: Դատարանը բոլոր դեպքերում դատական քննության ենթակա վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նորմը /նորմերը/ ընտրում և կիրառում է՝ ելնելով հայցի հիմքում ընկած իրավաբանական փաստերից, այլ ոչ թե հայցվորի ցույց տված նորմից /նորմերից/:

Այս հարցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումն այն է, որ հայցվորը պետք է ներկայացնի վիճելի հարցը՝ հստակեցնելով փաստերը և իր հայցապահանջը, սակայն նա չի կրում որևէ պարտականություն՝ հստակեցնելու դրա բնութագիրն իրավունքում: Եթե նույնիսկ հայցվորը տալիս է իր հայցի իրավական բնութագիրը, դատարանը կաշկանդված չէ դրանով: Դատարանը պետք է տա իր ինքնուրույն գնահատականը /տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ժողովածու, գիրք 6-րդ, Ե. 2000, էջ 299/:

Սակայն ասվածն ամենևին չի նշանակում, թե հայցվորը չպետք է նշի այն իրավունքը, որի պաշտպանությունը հայցում է: Ավելին՝ հայցվորի շահերի օգտին է հայցադիմումում այն իրավական ակտերը նշելը, որոնք, նրա կարծիքով, պիտի կիրառի դատարանը, քանի որ մրցակցային դատավարությունում հայցի հիմնավորումն անմիջականորեն կապված է իր պահանջն ապացուցելու հայցվորի պարտականության հետ /ԲԴՕ 44 հոդվ. 1-ին

կետ/։ Նույնը վերաբերում է նաև պատասխանողին, ով նույնպես զրկված չէ իրավական նորմերի վրա հղումների անելու իրավունքից<sup>41</sup>։

Հարկ է նշել, որ ՎԴՕ-ն հայցադիմումին առաջադրում է ավելի խիստ պահանջներ. հայցադիմումը պետք է բովանդակի այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը և հայցվորի պահանջի իրավական հիմքերը /ՎԴՕ 72 հոդվ. 2-րդ մասի 1-ին, 6-րդ կետեր/<sup>42</sup>։

Ներկայումս գրականության մեջ վիճելի է հայցի իրավական հիմքի առանձնացման, դրա բովանդակային ծանրաբեռնվածության հարցը։ Հայցի իրավական հիմքի գոյությունը պնդող տեսաբանների կարծիքով՝ հայցի իրավական հիմք են կազմում նյութական իրավունքի նորմերը, որոնք, ըստ հայցվորի, կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը։ Կարելի է պաշտպանել միայն այն պահանջը, որը հիմնված է օրենքի վրա։ Դատարան դիմող հայցվորը հույս ունի, որ իր սուբյեկտիվ իրավունքը կպաշտպանվի։ Եվ որպեսզի դա տեղի ունենա, նա պետք է իր պահանջները հիմնավորի ոչ միայն փաստերով, այլև իրավունքի

---

<sup>41</sup> Փաստաբան-ներկայացուցչի ներկայացրած հայցադիմումում պատշաճ փաստարկման բացակայությունը կարող է վկայել նաև այդ անձանց մասնագիտական անհրազեկության կամ վստահողների հանդեպ ստանձնած պարտականությունների ոչ պատշաճ կատարման մասին։ ԼԴՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցում /2015թ./ արձանագրվել է, որ ԼԴՀ - ուն փաստաբանության հնստիտուտը դեռևս չի կայացել /տես նշված զեկույցի 15-րդ էջը/։ Պատշաճ զարգացած փաստաբանությունը, անշուշտ, կարող է ուժեղացնել կողմերի իրավունքների երաշխիքները մրցակցային դատավարությունում։

<sup>42</sup> Խոսնելով քաղաքացիական դատավարությունում հայցադիմումին ներկայացվող պահանջները խստացնելու մասին՝ Վ.Ն.ժույկովը նշել է, որ տվյալ դեպքում տեղին է հայցադիմումի համանմանությունը քրեական դատավարությունում մեղադրական եզրակացության հետ /տես Ջյնկոս Բ.Մ. *Проблемы гражданского процессуального права. М.: Городец- издат. 2001, էջ 27/*։

նորմով /նորմերով/<sup>43</sup>:

Ըստ գրականության մեջ շրջանառվող մեկ այլ տեսակետի՝ իրավական հիմքի տակ պետք է հասկանալ իրապես պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքը /օրինական շահը/, ինչպես նաև նյութաիրավական նորմը<sup>44</sup>:

Վ.Եսայանի կարծիքով՝ հայցի հիմքն այն փաստական հանգամանքների և իրավական նորմերի ամբողջությունն է, որը դրված է ներկայացված հայցապահանջների հիմքում և հիմնավորում է սուբյեկտիվ իրավունքի կամ օրինական շահի դատական պաշտպանության պահանջը<sup>45</sup>:

Ի դեպ, տեսակետն այն մասին, որ հայցի հիմքի տակ պետք է հասկանալ ոչ միայն այն իրավաբանական փաստերը /հանգամանքները/, որոնցից հայցվորը բխեցնում է իր պահանջը /թեկուզև սխալմամբ/, այլև սուբյեկտիվ իրավունքը, որից այն իրականում բխում է, ժամանակին անընդունելի է համարել ռուս հայտնի դատավարագետ Վ.Վ.Վասկովսկին՝ նշելով, որ դա հայցի հիմքի նյութաիրավական հասկացությունն է, և որ դատարանը չի որոնում հայցվորի պահանջի իրական հիմքը, այլ ընդամեն-

---

<sup>43</sup> Տե՛ս, օրինակ, Պետրոսյան Ռ.Գ., նշվ. աշխ., էջ 238: *Гражданский процесс. Под ред. М.К. Треушниковой, М. 2010: ОАО Издательский дом "Городец", էջ 46: Արզումանյան Գ.Ս., Իրավունքների պաշտպանության հայցային ձևը, իրավ. գիտ. թեկն. ...ատենախոսություն, Երևանի պետական համալսարան-2006, 55, 57 էջերը:*

<sup>44</sup> Տե՛ս *Осокина Г.Л. Гражданский процесс. Общая часть. Учебник.-3-е изд. Перераб. Норма: ИНФРА- М.: 2013, էջ 454: Добровольский А.А. Исковая форма защиты права /основные вопросы учения об иске/, М. Изд. МГУ, 1965, էջ 128: Щеглов В.Н. Иск о судебной защите гражданского права. Под ред. Осокиной Г.Л., Томск, Томский ун-т, 1987, էջ 19: Власов А.А. Гражданский процесс: 7-е изд., перераб. и доп. М. Юрайт, էջ 201:*

<sup>45</sup> Տե՛ս Վ.Եսայան, Հայցի հիմքի փոփոխման հիմնախնդիրը քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», հոկտեմբեր-նոյեմբեր, 2014, էջ 67:

նը ստուգում է այն հիմքը, որը ներկայացվել է հայցվորի կողմից ու պարզելով, որ հայցի իրական հիմքը չի համապատասխանում հայցվորի կողմից ներկայացվածին, դատարանը համոզվում է հայցի ոչ ճիշտ լինելու մեջ: Դրա համար դատավարական իմաստով հայցի հիմքն անհրաժեշտ է խստորեն տարբերել նյութաիրավական իմաստով հայցի հիմքից<sup>46</sup>:

Տեսակետ է հայտնվել նաև այն մասին, որ օրենքին հղում կատարելը չպետք է մտցնել հայցի հիմքի մեջ, քանի որ, գործող օրենսդրության համաձայն, հայցի հիմքը կազմում են միայն հանգամանքները, որոնք էլ ենթակա են ապացուցման, իսկ իրավաբանական որակումը ենթակա չէ ապացուցման: Իրավական հիմքը կարելի է օրենսդրորեն ամրագրել որպես հայցի առանձին /ինքնուրույն/ տարր<sup>47</sup>:

Ներկայումս հայրենական դատական պրակտիկան ընդունում է հայցի իրավական հիմքի գոյությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանման՝ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են՝ հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Միաժամանակ, հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վրա: Հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն

---

<sup>46</sup> Տե՛ս *Гражданский процесс. Хрестоматия. Под ред. М.К. Треушниковой, М., 2005, էջ 459:*

<sup>47</sup> Տե՛ս *Амосов С. Предмет доказывания в арбитражном процессе, [http://www.juristlib.ru/book\\_386.html](http://www.juristlib.ru/book_386.html):*



այն իրավական նորմերի համակցությունն է, որ կարգավորում է վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը, բացի փաստական հանգամանքներից, կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ<sup>48</sup>:

Այնուամենայնիվ, հարցին, թե ինչ հասկանալ հայցի իրավական հիմքի տակ՝ հայցվորի ցույց տված իրավական նորմը /որը կարող է նաև սխալ լինել/, թե՞ իրապես պաշտպանության ենթակա իրավունքը, ՀՀ վճռաբեկ դատարանը, մեր կարծիքով, սպառնիչ պատասխան չի տվել: Տարակուսանք է առաջացնում նաև այն հանգամանքը, որ վերոնշված որոշման մեջ նաև նշվել է, որ «նույն հիմքերով» օրենսդրական եզրույթը ներառում է հայցի փաստական և իրավական հիմքերը, քանի որ հայցի հիմքի տակ, ըստ էության, ներառվել է ինչպես փաստական հիմքը, այնպես էլ հայցվորի իրավական հիմնավորումը:

Մեր կարծիքով՝ հայցի կամ հայցի հիմքի բովանդակության կազմում իրավական հիմքն առանձնացնելու տեսակետը ճիշտ չէ, անկախ նրանից, թե ինչ է հասկացվում հայցի իրավական հիմքի տակ՝ իրավաբանական փաստերի հետ միասին հայցադիմումում նշված նյութական իրավունքի նորմերը, որոնք, ըստ հայցվորի, կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը,

---

<sup>48</sup> Տե՛ս, օրինակ, Վիգեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27. 05. 2011թ. որոշումը:

թե՞ իրապես պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքը, թե՞ հայցվորի իրավական հիմնավորումը: Եթե օրենսդիրը հայցվորի ցույց տված իրավունքի նորմը դատարանի համար պարտադիր չի համարում, ապա կարծում ենք, որ հայցի տարրերը կազմում են այն, ինչը հայցի բովանդակության մեջ /կառուցվածքում/ պարտադիր պարունակվում է, այն է՝ նյութաիրավական պահանջը և իրավաբանական փաստերը: Հայցի, ինչպես նաև դրա կառուցվածքային տարրերի՝ հայցի առարկայի և հայցի հիմքի սերտ կապը իրավահարաբերության /սուբյեկտիվ իրավունքի/ հետ, մեր կարծիքով, ամենևին այդ հասկացությունների նույնություն չի նշանակում:

Հայցի հիմքի բովանդակության կազմում հայցվորի իրավական հիմնավորումը ներառելու տեսակետն արդարացված չէ նաև գործնական տեսանկյունից:

Այսպես, եթե հայցի հիմքի մեջ մտցվեն իրավաբանական փաստերը և իրավական նորմերը, ապա ստացվում է, որ այն դեպքերում, երբ հայցվորն իր պահանջների հիմքում դնում է կիրառման ոչ ենթակա իրավունքի նորմերը, ապա դատարանը, չունենալով հայցի հիմքը փոփոխելու իրավունք, պետք է մերժի հայցը, ինչն անհեթեթություն կլիներ. գործող օրենսդրությամբ հայցվորի իրավական հիմնավորումը կարող է դատարանի կողմից փոխվել վճիռ կայացնելիս, եթե, իհարկե, դրա հետ մեկտեղ չեն փոփոխվում հայցի առարկան և հայցի հիմքը:

Հայցվորի կողմից իր գիտելիքների ու բարեխղճության սահմաններում ցույց տրված իրավական նորմերը կամ սուբյեկտիվ իրավունքը «հայցի հիմք» օրենսդրական հասկացության մեջ ներառելու դեպքում դատական պրակտիկայում խնդիրները, մեր կարծիքով, ավելի կշատանան՝ նաև հայցի արտաքին նույնությունը որոշելու հետ կապված: Դա կարող է հանգեցնել նաև

հայց հարուցելու իրավունքի չարաշահումների<sup>49</sup>:

Ուշագրավ է, որ հետխորհրդային ոչ մի պետության իրավունքում «հայցի իրավական հիմք» օրենսդրական եզրույթը չի ներդրվել:

Հարկ է նշել, որ ռուս դատավարագետ Գ.Լ. Օսոկինան, ով հայցի իրավական հիմք է համարում իրապես պաշտպանության ենթակա իրավունքը, նույնպես այն կարծիքին է, որ հայցի իրավական հիմքի փոփոխությունն անթույլատրելի է, քանի որ դրա արդյունքում հայցը ոչ թե փոփոխվում, այլ փոխարինվում է սկզբնականի հետ որևէ առնչություն չունեցող այլ հայցով, խաթարվում է սկզբնապես ներկայացված հայցի ներքին նույնությունը<sup>50</sup>:

Մ.Ա. Ռոժկովայի կարծիքով՝ «հայցի հիմք» հասկացությամբ ինչպես նրա փաստական հիմքի, այնպես էլ իրավական հիմնավորման միավորումը կհանգեցնի դատական գործունեության անչափ ձևականացմանը՝ սկզբունքորեն սահմանափակելով դատարանին՝ իր գործառույթներն իրականացնելիս<sup>51</sup>:

Այսպիսով, հայցի առարկան և հայցի հիմքը հանդիսանում են միմյանց փոխկապակցված, միմյանց փոխլրացնող և միմյանց կազմավորող հայցի կառուցվածքային տարրերը՝ հայցի բաղ-

---

<sup>49</sup> Այդ կապակցությամբ Վ. Եսայանը, ով իրավական նորմը /որն ընկած է ցանկացած սուբյեկտիվ իրավունքի հիմքում/ դիտարկում է որպես հայցի կառուցվածքի առանձին տարր, առաջարկում է հայցի հիմքի փոփոխության տակ հասկանալ ոչ թե դրա իրավական, այլ փաստական մասի փոփոխությունը /տես Վ.Եսայան, Հայցի հիմքի փոփոխման հիմնախնդիրը քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», 2014, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 67/:

<sup>50</sup> Տե՛ս *Осокина Г.Л. Иск. Теория и практика, М. “Городец”, 2000, էջ 149, Осокина Г.Л. Гражданский процесс. Общая часть. Учебник.-3-е изд. Перераб. Норма: ИНФРА- М.: 2013, էջ 463:*

<sup>51</sup> Տե՛ս *Рожкова М.А. Теория юридических фактов гражданского и процессуального права: понятия, классификация, основы взаимодействия. Диссертация на соискание ученой степени доктора юридических наук. М. 2010, էջ 345:*

կացուցիչ մասերը, որոնք որոշում են հայցի բովանդակությունը /ՔԴՕ եզրաբանությամբ՝ հայցի էությունը/ ու անհատականությունը:

Հայցի հիմք կազմող իրավաբանական փաստերը չի կարելի շփոթել ապացույցների՝ ՔԴՕ 43-րդ հոդվածի 1-ին կետի եզրաբանությամբ՝ իրավաբանական փաստերի մասին տեղեկությունների հետ, ինչը երբեմն տեղի է ունենում դատական պրակտիկայում<sup>52</sup>:

Հայցի հիմք կազմող իրավաբանական փաստերը պետք է տարբերել նաև դատարանի իրավական որակումներից ու իրավական գնահատականներից, որոնք կատարվում են ապացույցների հետազոտման ու գնահատման արդյունքում:

Հայցի երրորդ տարրի՝ հայցի բովանդակության գոյությունը պնդող հեղինակները՝ Մ.Ա.Գուրվիչ, Ն.Ի.Ավդեենկո, Ա.Ֆ.Կլեյնման, Ի.Մ.Պյատիլետով և ուրիշներ /հիմնականում՝ դասականներ/ դա համարում են հայցի «խնդրանքային կետը», հայցվորի կողմից պահանջվող «դատական պաշտպանության տեսակը», կամ այն գործողությունը, որի կատարումը խնդրում է հայցվորը, այսինքն՝ քաղաքացիական իրավունքների դատական պաշտ-

---

<sup>52</sup> *Դատավարագիտության մեջ դատական ապացույց են անվանում ոչ միայն գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունները, այլև այդ տեղեկությունների ստացման դատավարական միջոցները /գրավոր և իրեղեն ապացույցները, փորձագետի եզրակացությունը, վկայի ցուցմունքը, գործին մասնակցող անձանց ցուցմունքները: «Ապացույց» հասկացության բազմիմաստությունը պայմանավորված է այն դիալեկտիկական կապով, որն առկա է տեղեկության /փաստական տվյալի/, այն կրող սուբյեկտի կամ իրի և դրա ստացման դատավարական եղանակների միջև: Արդյունքում գիտական միտքը դատական ապացույցի մեջ տեսնում է բովանդակության և դատավարական ձևի միասնություն, որտեղ բովանդակությունը տեղեկություններն /ապացույցներն/ են, իսկ դատավարական ձևը՝ ապացուցման միջոցները /տես Պետրոսյան Ռ.Գ., նշվ. աշխ., էջ 277/:*

պանության՝ գործող օրենսդրությամբ սահմանված եղանակները: Սակայն, ինչպես արդեն նշվել է, ժամանակակից իրավունքում իրավունքի պաշտպանության եղանակը ներառվում է հենց հայցի առարկայի բովանդակության կազմում:

Քաղաքացիական դատավարության իրավունքում հայցի հիմքի մեջ մտնող նյութաիրավական փաստերն ավանդաբար բաժանվում են երկու խմբի՝ օրինականացնող կամ իրավաստեղծ փաստեր /լատիներեն՝ Legitimus՝ օրինականությունը ճանաչող կամ հաստատող/ և հայցի առիթ հանդիսացող փաստեր: Օրինականացնող փաստերն իրենց հերթին լինում են հայցի ակտիվ հիմքի փաստեր /ակտիվ լեգիտիմացիա/ և հայցի պասիվ հիմքի փաստեր /պասիվ լեգիտիմացիա/: Նման դասակարգումը գործնական նշանակություն ունի ոչ պատշաճ կողմը պատշաճ կողմով փոխարինելու հարցում:

Տեսության մեջ հայցի ակտիվ հիմքի փաստերի տակ հասկացվում են վիճելի իրավահարաբերության հետ հայցվորի կապը հաստատող, այսինքն՝ կողմերի միջև նյութական իրավահարաբերության առկայությունը և վիճելի իրավունքը հայցվորին պատկանելը հաստատող փաստերը, օրինակ՝ պայմանագիրը, որը հաստատում է հայցվորի կողմից պատասխանողին փոխառություն տալու հանգամանքը կամ վնասի առկայությունը, որը հաստատում է ուրիշի հակաօրինական գործողությունը:

Հայցի պասիվ հիմքի փաստերի տակ մտնում են վիճելի իրավահարաբերության հետ պատասխանողի կապը հաստատող, այսինքն՝ վիճելի պարտականությունը պատասխանողին պատկանելը հաստատող փաստերը, օրինակ՝ պայմանագիրը, որը հաստատում է վարձակալած գույքի հիմնական վերանորոգման պարտականությունը պատասխանողի /վարձակալի/ վրա ընկնելը, պատասխանողի կողմից իր պարտականությունների կա-

տարման խախտումը հաստատող փաստերը /սահմանված ժամկետում պարտքը չվճարելը, անձին կամ նրա գույքին վնաս պատճառելը, կապալի պայմանագրով աշխատանքը չկատարելը և այլն/:

Հայցի առիթն այն է, ինչը շահագրգիռ անձին ստիպում է իր իրավունքների պաշտպանությունը որոնել դատարանում: Հայցի առիթի փաստերը ցույց են տալիս, որ վրա է հասել դատական պաշտպանության նպատակով դատարան դիմելու ժամանակը: Հայցի առիթի փաստեր կարող են հանդիսանալ, օրինակ, ժամկետի վրա հասնելը և պարտապանի՝ պարտավորությունը կամովին կատարելուց հրաժարվելը կամ պարտավորության կատարումից խուսափելը, կամ ոչ պատշաճ կատարելը և այլն: Ընդ որում, հայցի առիթ կարող է հանդիսանալ ոչ միայն ինքնին խախտումը, այլև դրա մասին ենթադրությունը:

Ակտիվ հիմքը հատուկ է առանց բացառության բոլոր հայցերին: Ի տարբերություն ակտիվ հիմքի փաստերի՝ պասիվ հիմքի փաստերը հատուկ են ոչ բոլոր հայցերին: Դրանք, որպես կանոն, առկա են միայն վճռող հայցերում: Ինչ վերաբերում է ճանաչողական ու վերափոխիչ հայցերին, ապա այստեղ, որպես կանոն, առկա են միայն հայցի ակտիվ հիմքի փաստերը և հայցի առիթի փաստերը: Բացառություն են կազմում միայն ճանաչողական այն բացասական /նեգատիվ/ հայցերը, որոնց հիմքը կազմում են պատասխանողի ոչ իրավաչափ գործողությունները /օրինակ՝ խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի՝ մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կամ ծանր հանգամանքների բերումով կնքված գործարքն անվավեր ճանաչելու մասին հայցերը /Քաղ.օր. 313 հոդվ./: Իսկ վերափոխիչ հայցերում պասիվ հիմքն առկա է լինում այն ժամանակ, երբ վերափոխիչ իրավագործությունը ծագում է

սկզբնական իրավահարաբերությանը պատասխանողի կողմից իր պարտականությունները խախտելու հետևանքով /օրինակ՝ ծնողական իրավունքներից զրկելու մասին հայցերը/:

Հայցի ցանկացած հիմքի բացակայությունը հանգեցնում է հայցի մերժման: Սակայն հայցի պասիվ հիմքի բացակայության պատճառով հայցը մերժելու դեպքում հնարավոր է այն կրկին ներկայացնել: Մինչդեռ հայցի ակտիվ հիմքի բացակայության պատճառաբանությամբ հայցը մերժելը բացառում է նույն պահանջով, նույն հիմքով կրկին հայց ներկայացնելը՝ բացառությամբ, այսպես կոչված, տևող իրավահարաբերություններից ծագող հայցերի /այդ մասին տե՛ս հետագա շարադրանքում/:

Գրականության մեջ հանրաճանաչ է նաև հայցի հիմքի նյութաիրավական փաստերի հետևյալ դասակարգումը՝ իրավունքներ ու պարտականություններ առաջացնող փաստեր, իրավունքներ ու պարտականություններ դադարեցնող փաստեր, իրավունքներ ու պարտականություններ փոփոխող փաստեր, իրավունքների ու պարտականությունների առաջացմանն արգելակող փաստեր: Մասնագիտական գրականության մեջ, մինչև նույն ժամանակ, կարծիք է հայտնվել, որ նման դասակարգումը միանշանակ ու վերջնական չի կարող համարվել, քանի որ մինչև նույն փաստը մի դեպքում կարող է դիտարկվել իբրև իրավունքներ և պարտականություններ առաջացնող, մյուս դեպքում՝ իբրև իրավունքներ ու պարտականություններ դադարեցնող փաստեր և այլն<sup>53</sup>:

Հակընդդեմ և երրորդ անձի հայցերին հատուկ են հայցի բո-

---

<sup>53</sup> Տե՛ս Րոջկովա Մ.Ա. *Теория юридических фактов гражданского и процессуального права: понятия, классификация, основы взаимодействия. Диссертация на соискание ученой степени доктора юридических наук. М., 2010, էջ 164:*

լոր հատկանիշները: Դրանք նույնպես ունեն առարկա և հիմք, հարուցվում են հայցադիմումի ձևով:

Հայցի տարրերի առանձնացումն ունի գիտական և գործնական կարևոր նշանակություն:

Այսպես, հայցի հիմքը և առարկան, վեճի կողմերի հետ միասին, համարվում են այն հատկանիշները, որոնք անհրաժեշտ են հայցերն անհատականացնելու, նրանց ներքին ու արտաքին նույնությունը որոշելու համար:

Հայցերի նույնության տակ հասկացվում է ներկայացված հայցի առարկայի և հայցի հիմքի նույնությունն այն հայցի առարկայի և հայցի հիմքի հետ, որը կամ արդեն իսկ ըստ էության քննվել և լուծվել է դատարանի /այդ թվում՝ միջնորդ դատարանի կամ տրիբունալի/ օրինական ուժի մեջ մտած վճռով կամ գտնվում է դատարանի վարույթում: Համեմատվող գործերը ճանաչվում են նույնական, եթե համընկնում են վեճի կողմերը, հայցի առարկան ու հայցի հիմքը: Նույնության այս տեսակը տեսության մեջ ստացել է «հայցերի արտաքին նույնություն» անվանումը, քանի որ համեմատվում են երկու տարբեր հայցերի տարրերը և վեճի կողմերը:

Գործող օրենսդրությամբ, միաժամանակ, նախատեսված է, որ վիճելի իրավահարաբերության սահմաններում հայցվորն իրավունք ունի փոփոխելու հայցը՝ փոփոխելու հայցի հիմքը կամ հայցի առարկան: Իսկ դա որոշվում է հայցի հիմքը և հայցի առարկան դատական վճռի բովանդակության հետ համեմատելով: Տեսության մեջ սա կոչվում է «հայցի ներքին նույնություն», քանի որ համեմատվում են ոչ թե տարբեր հայցերի, այլ նույն հայցի տարրերը:

Հայցի առարկան և հիմքն են որոշում գործի քննության և լուծման սահմանները, դատական քննության ուղղվածությունը



և առանձնահատկությունները:

Հայցի տարրերն էական նշանակություն ունեն պատասխանողի շահերի պաշտպանության համար, քանի որ դրանց միջոցով է պատասխանողը տեղեկանում, թե հայցվորն ինչ է պահանջում իրենից, ինչ փաստերի հիման վրա և կարողանում է պաշտպանվել հայցից՝ ժամանակին դատարան ներկայացնել հայցադիմումի գրավոր պատասխան կամ հակընդդեմ հայց և այլն:

Հայցի առարկան առնչվում է նաև պետական տուրքի չափերի որոշման հարցին: «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածը պետական տուրքի դրույքաչափը տարբերակում է՝ կախված պահանջի գույքային կամ ոչ գույքային լինելուց, գույքային պահանջներով՝ նաև հայցագնից: Քանի որ այդ օրենքը «գույքային պահանջ» և «ոչ գույքային պահանջ» հասկացությունների բովանդակությունը չի բացահայտում, դատական պրակտիկայում երբեմն դժվարություններ են առաջանում՝ կապված պետական տուրքի դրույքաչափի որոշման հետ: Կոնկրետ գործով /գույքն արգելանքից հանելու հայցապահանջով/ ԼՂՀ Գերագույն դատարանը մեկնաբանել է, որ «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածում օգտագործվող «գույքային պահանջ» և «ոչ գույքային պահանջ» հասկացությունների տակ օրենսդիրը նկատի ունի հենց հայցի առարկան /տվյալ դեպքում՝ գույքն արգելանքից հանելու պահանջը/, այլ ոչ թե հայցի նյութական օբյեկտը /տվյալ դեպքում՝ տունը և հողամասը/: Նշվել է, որ ի տարբերություն հայցի նյութական օբյեկտ հանդիսացող բնակելի տան և հողամասի, այդ գույքն արգելանքից հանելու մասին հայցապահանջը չի կարող ունենալ հայցագին /ենթակա չէ դրամական գնահատման/: Հետևաբար՝ դատարան ներկայացվող գույքն արգելանքից հանելու պահանջներով պետական տուրք պետք է գանձվի ոչ գույքային բնույթի հայցապահանջներ-

րի համար օրենքով սահմանված դրույքաչափով՝ բազային տուրքի քառապատիկի չափով<sup>54</sup>:

Հայցի առարկան հինք է հանդիսանում դատավարական - իրավական հատկանիշով հայցերի դասակարգման համար:

### 1.3. Հայցի տեսակները

Քաղաքացիական դատավարության տեսության մեջ հանրաճանաչ է հայցերի դասակարգումն ինչպես ըստ դատավարական կոնկրետ նպատակի կամ ըստ հայցի առարկայի, այսինքն՝ դատավարական-իրավական հատկանիշով, այնպես էլ՝ ըստ նյութաիրավական պահանջի բնույթի կամ նյութաիրավական հատկանիշով:

Դատավարական-իրավական հատկանիշով հայցերն ընդունված է բաժանել երեք տեսակի՝ վճռող, ճանաչողական և վերափոխիչ:

**Վճռող հայցեր:** Քաղ. օր. 14-րդ հոդվածում թվարկված քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակների մեջ մեծամասնություն են կազմում այն եղանակները, որոնցով վերացվում են կատարված իրավախախտման հետևանքները: Այդպիսիք են՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելը, իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելը, առջինջ գործարքի անվավերության հետևանքները կիրառելը, վիճահա-

---

<sup>54</sup> Տե՛ս ըստ հայցի Գուրգեն Սարգսյանի ընդդեմ Նորա Գասպարյանի, ԼԴՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Գարիկ Սարգսյանի՝ արգելադրված բնակելի տունը և հողամասն արգելանքից հանելու պահանջի մասին ԸԻԴ 185/հղ/15 թ. նյութերով ԼԴՀ Գերագույն դատարանի 03. 04. 2015 թ. որոշումը:

րույց /հայերենում ճիշտը «վիճարկելի» եզրույթն է/ գործարքն անվավեր ճանաչելը և դրա անվավերության հետևանքները կիրառելը, պարտականությունը բնեղենով կատարելուն պարտավորեցնելը, վնասներ հատուցելը, տուժանք բռնագանձելը:

Վճռող համարվում են այն հայցերը, որոնց առարկան բնութագրվում է քաղաքացիական իրավունքների պաշտպանության վերը նշված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ եղանակներով, եթե դրանք ապահովում են խախտված իրավունքը վերականգնելը կամ կանխում են իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները: Դրանցով հայցվորը դատարանից պահանջում է պարտավորեցնել պատասխանողին՝ իր օգտին կատարելու որոշակի գործողություններ, օրինակ՝ վերադարձնելու գույքը, վերականգնելու նախկին աշխատանքում, վճարելու տուժանք, հատուցելու պատճառված վնասը, վերացնելու կատարված աշխատանքի թերությունները, վերացնելու սեփականատիրոջ իրավագործությունների իրականացման խոչընդոտները, դադարեցնելու հեղինակային իրավունքի խախտումները և այլն:

Հայցվորը պատասխանողին ոչ միայն ակտիվ գործողությունների կատարման կարող է պարտավորեցնել: Անհրաժեշտության դեպքում նա կարող է պատասխանողից պահանջել ձեռնպահ մնալ հայցվորի իրավունքը խախտող կոնկրետ գործողություններից: Օրինակ՝ շենքի մուտքը չփակել, չխոչընդոտել երեխաների դաստիարակությանը: Սրանք քաղաքացիական դատավարության տեսության մեջ կոչվում են արգելող կամ նախականիչ հայցեր<sup>55</sup>: Որոշ տեսաբաններ ժխտել են նման հայ-

<sup>55</sup> Տե՛ս, օրինակ, Яркoв В.В. Юридические факты в цивилистическом процессе, М. Берлин Инфотропик Медиа 2012, էջ 223:

ցերի գոյությունը՝ պատճառաբանելով, թե վճռող բոլոր հայցերում ու վճիռներում պատասխանողը պարտավորեցվում է հայցվորի օգտին որոշակի գործողություններ կատարելուն<sup>56</sup>: Մեր կարծիքով՝ նման տեսակետը ճիշտ չէ: Արգելող հայցերի համար իրավական հիմք է հանդիսանում, օրինակ, Քաղ. օր. 14-րդ հոդվածի 3-րդ կետը, որը նախատեսում է իրավունքի պաշտպանության այնպիսի եղանակ, ինչպիսին իրավունքը խախտող կամ խախտման վտանգ սպառնացող գործողությունները կանխելն է: Դատական պրակտիկայում նման հայցերը հանդիպում են ոչ հազվադեպ:

Վճռող հայցերը քաղաքացիական իրավունքների պաշտպանության հիմնական միջոցն են կամ որ նույնն է՝ դատական պրակտիկայում դրանք ամենատարածվածն են:

Վճռող հայցերը նաև պատմականորեն ամենահին հայցերն են ու դեռևս հռոմեական իրավունքում ծառայում էին որպես սեփականության, տիրապետման իրավունքների, փոխատվության, վարձակալության, փոխառության, գրավի պայմանագրերից, վնաս պատճառելուց, անհիմն հարստացումից ծագող իրավունքների պաշտպանության միջոց:

Վճռող հայցերով իրավունքի պաշտպանությամբ դատարան դիմելու անհրաժեշտությունը սովորաբար պայմանավորված է լինում նրանով, որ պարտապանը վիճարկում է հայցվորի իրավունքը, չի կատարում իր պարտականությունները: Վեճի հետևանքով իրավունքը զրկվում է որոշակիությունից, այն հնարավոր չի լինում հարկադիր իրականացնել, քանի դեռ պարզված չէ, թե իրականում առկա՞ է, արդյոք, վիճելի իրավունքը և ինչպիսի՞ն է նրա բովանդակությունը:

---

<sup>56</sup> Տե՛ս, օրինակ, *Добровольский А.А. Исковая форма защиты права /основные вопросы учения об иске/, М., 1965, էջ 167:*

Վճռող հայցի բնութագրիչ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն միաժամանակ ներառում է հայցվորի երկու պահանջներ՝ 1/ ճանաչել իր վիճելի իրավունքը, 2/ պարտավորեցնել պատասխանողին՝ իր օգտին կատարելու վիճելի իրավահարաբերությունից բխող որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու որոշակի գործողություններ կատարելուց:

Նման հայցերով դատարանը պարտավոր է առաջին հերթին պարզել հայցադիմումում ցույց տրված իրավահարաբերության առկայության կամ բացակայության հանգամանքը և դրանից հետո միայն կայացնել պատասխանողին այս կամ այն գործողությունը կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն պարտավորեցնող վճիռ: Օրինակ՝ գույքային վարձակալության իրավահարաբերության առկայության փաստը հաստատելուց հետո միայն դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հասանելիք վարձը պատասխանողից հայցվորի օգտին բռնագանձելու մասին: Կամ սեփականատիրոջ ներկայացրած վինդիկացիոն հայցը կարող է բավարարվել պահանջվող գույքի նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքի, ինչպես նաև այդ գույքը հայցվորի կամքից անկախ նրա տիրապետությունից դուրս եկած լինելու փաստերը հաստատվելուց հետո միայն: Կամ երկը լույս ընծայելու վերաբերյալ հեղինակի և հրատարակչության միջև իրավահարաբերության առկայության փաստը հաստատելուց հետո միայն նույն հրատարակչության պահանջով դատարանը կարող է հեղինակի նկատմամբ կայացնել պարտավորեցնող վճիռ՝ ձեռնպահ մնալու իր համանուն երկն այլ հրատարակչությանը հանձնելուց այնքան ժամանակ, քանի դեռ չի մարվել հրատարակչական պայմանագրի գործողության ժամկետը և այլն:

Վճռող /արգելող/ հայցի առարկա է հանդիսանում հայցվորի կողմից պատասխանողի դեմ ուղղված նյութաիրավական պահանջը, ըստ որի՝ պատասխանողը պետք է կատարի հայցվորի

սուբյեկտիվ իրավունքի խախտումը վերացնելուն ուղղված որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնա որոշակի գործողություններ կատարելուց:

Վճռող հայցի հիմք են հանդիսանում՝ 1/ փաստերը, որոնց հետ կապված է սուբյեկտիվ իրավունքի ծագումը, օրինակ՝ պայմանագիրը կնքելը, գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելը, շենք կառուցելը և այլն, 2/ սուբյեկտիվ իրավունքի /օրինական շահի/ խախտման կամ վիճարկման փաստերը /օրինակ՝ պայմանագրով ստանձնած պարտականությունները չկատարելը, հեղինակային իրավունքները խախտելը և այլն/:

Վճռող հայցով օրինական ուժի մեջ մտած վճիռը պարտապանի կողմից կամովին չկատարվելու դեպքում այն կատարվում է հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով, դրա համար էլ դատավարագիտության մեջ հայցի այս տեսակը կոչվում է նաև «կատարողական» հայց:

**Ճանաչողական հայցեր:** Ճանաչողական համարվում են հայցերը, որոնց առարկան բնութագրվում է վիճելի իրավունքների կամ օրինական շահերի առկայության կամ բացակայության ճանաչման հետ կապված պաշտպանության եղանակներով: Դրանց մեջ իրավունքի ճանաչումը քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակների շարքում առաջին տեղն է զբաղեցնում /Քաղ.օր. 14 հոդվ.1-ին կետ/: Այդ հայցերն ավանդաբար կոչվում են նաև հաստատողական հայցեր, քանի որ ուղղված են վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության հաստատմանը: Այդպիսիք են, օրինակ, ամուսնությունն անվավեր ճանաչելու, հեղինակային իրավունքը ճանաչելու, գործարքն անվավեր ճանաչելու, սեփականության իրավունքը ճանաչելու, սեփականության նկատմամբ համասեփականատեր

ճանաչելու մասին հայցերը:

Ճանաչողական հայցերով հայցվորի պահանջն ուղղված է իր ու պատասխանողի միջև վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության ճանաչմանը: Այստեղ հայցվորը դատարանից չի պահանջում պատասխանողին պարտավորեցնել իր օգտին կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու որոշակի գործողություններ կատարելուց, այլ պահանջում է միայն ճանաչել իր մոտ սուբյեկտիվ իրավունքների, իսկ պատասխանողի մոտ՝ համապատասխան սուբյեկտիվ պարտականությունների առկայությունը: Ճանաչողական հայցերը դեռևս չխախտված իրավունքների պաշտպանության միջոց են, քանի որ դրանց նպատակն այն է, որպեսզի վերացվի իրավունքի վիճելիությունը և անորոշությունը: Ճանաչողական հայցի անհրաժեշտությունն առաջանում է, երբ հայցվորի մոտ առկա սուբյեկտիվ իրավունքը ենթարկվում է կասկածանքի, սուբյեկտիվ իրավունքը վիճարկվում է, սուբյեկտիվ իրավունքը ժխտվում է կամ առկա է դրա իրական վտանգ: Իրավունքի մասին վեճով, նրա գոյության ժխտմամբ կամ բովանդակության վիճարկմամբ անորոշություն է ստեղծվում կողմերի փոխհարաբերություններում, որն իր հերթին ապագայում պարտականության կատարման կամ անպատշաճ /հայերենում ճիշտը «ոչ պատշաճ» եզրույթն է/ կատարման վտանգ է ստեղծում: Մինչդեռ, քաղաքացիական շրջանառության մեջ կարևոր է որոշակիությունը իրավահարաբերություններում. յուրաքանչյուրը պետք է իմանա իր իրավունքները և պարտականությունները ու իր վարքը համապատասխանեցնի դրանց: Հետևում է, որ ճանաչողական հայցերը կարող են ներկայացվել նախականիսիչ նշանակությամբ՝ հայցվորի իրավունքի խախտումը կանխելու ու նրա իրավական կարգավիճակին կայունություն հաղորդելու նպատակով: Օրինակ՝ հայցվորը, ով հանդիսանում է ընդհանուր համատեղ սե-

փականության մասնակից, սակայն չունի սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ, կարող է հայց ներկայացնել ընդհանուր գույքի նկատմամբ սեփականության իր բաժինը ճանաչելու մասին: Դրանով նա կանխում է համասեփականատերերի հնարավոր հավակնությունները սեփականության այդ մասի նկատմամբ ու հնարավորություն է ստանում, օրինակ, իր մասի նկատմամբ իրավունքը գրանցելու և օտարելու համար:

Դրա հետ մեկտեղ, ճանաչողական հայցերը մի շարք դեպքերում ծառայում են որպես խախտված իրավունքի պաշտպանության միջոց, երբ անհրաժեշտ է ոչ միայն որոշակիություն ստացնել վիճելի իրավահարաբերություններում, այլև վերացնել հայցվորի սուբյեկտիվ իրավունքի խախտումը: Իսկ խախտումը կայանում է նրանում, որ պատասխանողը հաշվի չի նստում հայցվորի իրավունքի հետ ու չի կատարում վիճելի իրավահարաբերությունից բխող իր պարտականությունները: Օրինակ՝ հեղինակային իրավունքի պաշտպանության հայցերով երբեմն վեճ առաջանում է այն պատճառով, որ պատասխանողը, յուրացնելով հայցվորին պատկանող հեղինակային իրավունքը, դրանով իսկ կոպիտ կերպով խախտում է վերջինիս հեղինակային իրավունքը: Հայց հարուցելով վիճելի իրավունքն իրեն պատկանելու մասին՝ հայցվորն ըստ էության խնդրում է վերականգնել իր հեղինակային իրավունքները, իսկ պատասխանողին՝ զրկել այդ իրավունքներից: Բավարարելով ճանաչողական հայցը՝ դատարանը դրանով իսկ վերականգնում է հայցվորի խախտված /և ոչ միայն վիճարկվող/ իրավունքը, սակայն իրավունքի վերականգնումը կատարվում է ոչ թե պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելով, այլ հայցվորի վիճելի և խախտված իրավունքը ճանաչելով: Դրանով իսկ պատասխանողը զրկվում է այն իրավունքից, որը նա ապօրինի յուրացրել է: Մինչդեռ, վճռող հայցերով բավարար չէ պարզելը, որ վիճելի



իրավունքը պատկանում է հայցվորին, և որ վիճելի իրավունքը խախտվել է պատասխանողի կողմից: Հայցի նպատակը արդարացված /վրա հասած/ չի կարող լինել, եթե դատարանը կանգ առնի այդ փուլում. հարկավոր է, որպեսզի դատարանն իր վճռով պարտավորեցնի պատասխանողին՝ հայցվորի օգտին կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու որոշակի գործողություններ կատարելուց:

Ճանաչողական հայցերը ոչ միայն վիճելի իրավունքի, այլև վիճելի պարտականության հաստատման միջոց են, օրինակ՝ որոշակի չափով վարձակալության վճար մուծելու պատասխանողի պարտականությունը ճանաչելու մասին հայցը:

Ճանաչողական հայցերն իրենց հերթին ավանդաբար բաժանվում են ճանաչողական դրական /պոզիտիվ/ հայցերի, որոնք ուղղված են որոշակի իրավահարաբերությունների առկայության հաստատմանը /օրինակ՝ շենքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին հայցը/ և ճանաչողական բացասական /նեգատիվ/ հայցերի, որոնք ուղղված են որոշակի իրավահարաբերությունների բացակայության հաստատմանը /օրինակ՝ գործարքն անվավեր ճանաչելու մասին հայցը/:

Ճանաչողական հայցի առարկան է հանդիսանում վիճելի իրավունքի առկայությունը կամ բացակայությունը ճանաչելու մասին հայցվորի՝ պատասխանողի դեմ ուղղված կոնկրետ պահանջը:

Ճանաչողական դրական հայցի հիմքը իրավաբանական այն փաստերն են, որոնց հետ հայցվորը կապում է վիճելի իրավահարաբերության առաջացումը, իսկ ճանաչողական բացասական հայցի հիմքը կազմում են հայցվորի նշած իրավաբանական փաստերը, որոնց պատճառով վիճելի իրավահարաբերությունն առաջանալ չի կարող:

Ճանաչողական դրական հայցերով դատական պաշտպանության առարկա է հանդիսանում սուբյեկտիվ իրավունքը, իսկ ճա-

նաչողական բացասական հայցերով՝ օրինական շահը<sup>57</sup>:

Ճանաչողական հայցով կայացված դատական վճիռը կարող է նախադատելի /լատիներեն՝ *preadudicalis*/ նշանակություն ունենալ հետագայում հարուցվելիք վճռող և վերափոխիչ հայցերի համար, քանի որ հետագայում հարուցված հայցերը լուծելիս դատարանը հիմք կընդունի իրավահարաբերության, նույն իրավահարաբերությունից բխող կողմերի իրավունքների ու պարտականությունների առկայության մասին արդեն իսկ հաստատված փաստը: Օրինակ՝ բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման մասին վճիռը կարող է հիմք դառնալ նշված բնակելի տունը հետագայում բնեղենով համասեփականատերերի միջև բաժանելու համար: Կամ ամուսնության պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին վճիռը կարող է հետագայում հիմք դառնալ գույքը բաժանելու մասին հայցի հարուցման համար: Կամ տան առուվաճառքի պայմանագիրը դատարանի վճռով անվավեր ճանաչելուց հետո այդ վճռի համաձայն կողմերը միմյանց նկատմամբ փոխադարձաբար կարող են ներկայացնել վճռող հայցեր՝ իրենց կատարած ծախսերի կամ կրած վնասների հատուցման պահանջով և այլն:

Այսպիսով, վճռող և ճանաչողական հայցերի միջև կան էական տարբերություններ, սակայն դրանց համար ընդհանուրն այն է, որ երկու հայցերն էլ ուղղված են իրավունքների ու պարտականությունների դատական հաստատմանն այն տեսքով ու բովանդակությամբ, որում նրանք ձևավորվել ու գոյություն են ունեցել մինչև դատավարությունը և դատավարությունից անկախ: Երկու դեպքում էլ վճիռը փոփոխություններ չի մտցնում գոյություն

<sup>57</sup> *Տե՛ս, օրինակ, Васьковский Е.В. Курс гражданского процесса. М., 1913, էջ 620, Лукасян Р.Е. Проблема интереса в советском гражданском процессуальном праве. Саратов, Изд. СЮИ, 1970, Осокина Г.Л. Гражданский процесс. Общая часть. Учебник.-3-е изд. Перераб. Норма: ИНФРА-М.: 2013, էջ 453:*

ունեցող իրավահարաբերության մեջ, որը դատարանի վճռից հետո մնում է այնպիսին, ինչպիսին որ եղել է մինչև դատավարությունը: Այդ հայցերով կարելի է հասնել միայն գոյություն ունեցող իրավահարաբերության դատական հաստատմանը: Դրա համար էլ քաղաքացիական դատավարության տեսության մեջ հայցերի այդ երկու տեսակները համարվում են «հռչակագրային» /դեկլարատիվ/<sup>58</sup>:

Չետաքրքիր է, որ ճանաչողական հայցերի նախատիպ համարվում էր միջին դարերում կիրառվող «սադրիչ հայցը», որը հարուցվում էր, եթե որևէ անձ հայտարարում էր, թե ունի իրավական պահանջ որևէ մեկի դեմ կամ որևէ անձ ունենում էր այնպիսի առարկություններ, որոնք հնարավոր է, որ կորցնեին իրենց նշանակությունը ժամկետն անցնելու հետևանքով: Նման դեպքերում շահագրգիռ անձը դիմում էր դատարան, որպեսզի վերջինս պարտավորեցնի հակառակ կողմին՝ անհապաղ ներկայացնելու հայց, հակառակ դեպքում հայցվորը կորցնում էր հայց ներկայացնելու իրավունքը, իսկ հայցի դեմ առարկությունները իրական էին համարվում ապագա ժամանակի համար: Չետագայում «սադրիչ հայցերը» վերացան, քանի որ չէին համապատասխանում քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքին, իսկ դրանց փոխարինելու եկան ճանաչողական հայցերը<sup>59</sup>:

**Վերափոխիչ հայցեր:** Քաղ. օր. 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից, իսկ

<sup>58</sup> *Տե՛ս Գурвич М.А. Учение об иске /состав, виды/. М., ВЮЗИ, 1981, էջ 14:*

<sup>59</sup> *Տե՛ս Васильковский Е.В. Курс гражданского процесса. М., 1913, т.1, 607-608 էջերը: Коршунов Н.М., Мареев Ю.Х., Гражданский процесс. Изд. Норма, М., 2008, էջ 332:*

նույն օրենսգրքի 14-րդ հոդվածում, որպես իրավունքի պաշտպանության եղանակ, նշված է իրավահարաբերությունը դադարեցնելը կամ փոփոխելը: Վերափոխիչ հայցերը նյութաիրավական բնույթի իրավահարաբերություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն ուղղված հայցեր են, օրինակ՝ պայմանագիրը լուծելու, ընդհանուր սեփականությունը բաժանելու, սերվիտուտ /օգտակալություն/ սահմանելու, ամուսնալուծության, ալիմենտի չափը փոփոխելու, առաջին գործարքը վավեր ճանաչելու մասին հայցերը:

Վերափոխիչ հայցով փոփոխություն է մտցվում կողմերի իրավահարաբերություններում, դրա համար էլ վերափոխիչ հայցը անվանում են նաև «կոնստիտուտիվ» հայց կամ վերափոխիչ /կոնստիտուտիվ/ վճիռ կայացնելուն ուղղված հայց: Իրավունքի պաշտպանության նման տեսակի հայցերի անհրաժեշտությունը ծագում է, եթե համապատասխան իրավահարաբերությունը սահմանելու, փոփոխելու կամ դադարեցնելու իրավագործությունը չի իրականացվում շահագրգիռ անձանց՝ իրենց իսկ կողմից փոխադարձ համաձայնությամբ կնքված պայմանագրով կամ եթե իրավահարաբերության վերափոխումը, օրենքի համաձայն, հնարավոր է միայն դատական կարգով:

Այսպես, հայտնի է, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցները հանդես են գալիս, իրենց իրավահարաբերությունները փոփոխում կամ դադարեցնում են սեփական կամքով՝ առանց դատարանի մասնակցության, այսինքն՝ երկկողմանի գործարքի միջոցով: Օրինակ՝ Քաղ. օր. 430-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը դադարում է կողմերի միջև գոյություն ունեցող սկզբնական պարտավորությունը նույն անձանց միջև մեկ այլ պարտավորությամբ փոխարինելու մասին համաձայնությամբ, որը նախատեսում է դրա այլ առարկա կամ կատարման այլ եղանակ /նորացում/: Դրա հետ մեկտեղ, որոշ դեպքերում

օրենքը կողմերին իրավունք է վերապահում իրավահարաբերությունը դադարեցնել միակողմանի կամարտահայտությամբ:

Այսպես, հանձնարարության պայմանագիրը կարող է դադարել հանձնարարողի կողմից հանձնարարությունը վերացնելու և հանձնակատարի հրաժարվելու հետևանքով /Քաղ. օր. 787 հոդվ. 1-ին և 2-րդ մասեր/: Նշված գործողությունները հանդիսանում են միակողմանի կամարտահայտություններ ու կարիք չեն զգում այս կամ այն, այդ թվում՝ դատական հաստատման:

Միակողմանի կամարտահայտության միջոցով իրավահարաբերությունը դադարեցնելու իրավունքն օրենքն ամենից հաճախ կապում է պայմանագրի խախտման հետ: Սակայն, քանի որ իրավահարաբերությունը դադարեցնելը և նույնիսկ դրա փոփոխելը շատ դեպքերում կարող են էական վնաս պատճառել մյուս կողմին, ապա օրենքը նման գործողության կատարման /այսպես կոչված՝ վերափոխման/ իրավազրույթությունը ենթարկում է դատական վերահսկողության՝ վերափոխիչ վճռի տեսքով, առանց որի միակողմանի կամարտահայտությունը անբավարար է ճանաչվում: Դա հատկապես կարևոր է այն դեպքում, երբ նման կամարտահայտության համար պահանջվում է օրենքով նախատեսված հիմք: Օրինակ՝ դատարանով վարձակալության պայմանագրի վաղաժամկետ լուծման իրավունքը վարձատուի պահանջով առաջանում է Քաղ. օր. 621-րդ հոդվածում նախատեսված դեպքերում, իսկ վարձակալի համանման իրավունքը՝ Քաղ. օր. 622-րդ հոդվածով թվարկված դեպքերում:

Սակայն նաև այն ժամանակ, երբ վերափոխիչ իրավազրույթության համար հարկավոր չեն հատուկ հիմքեր, և, հետևաբար, այն կարող է իրականացվել իրավազոր անձի ազատ կամարտահայտությամբ, օրենքը դրա իրացման համար որոշ դեպքերում պարտադիր կերպով պահանջում է դիմել դատարան: Այսպես, համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը

բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո, սակայն միայն հայցի միջոցով /Քաղ. օր. 198 հոդվ., 200 հոդվ. 3-րդ մաս/:

Որոշ դեպքերում իրավահարաբերության դադարեցումը հնարավոր է միայն դատարանի վճռով: Այսպես, Ընտ. օր. 60-րդ հոդվածի համաձայն՝ ծնողական իրավունքներից զրկելը կատարվում է միայն դատական կարգով:

Վերափոխիչ հայցով դատական վճիռը հանդես է գալիս որպես նյութաիրավական բնույթի իրավաբանական փաստ /Քաղ. օր. 10 հոդվ. 3-րդ կետ/:

Վերափոխիչ հայցերը տեսության մեջ բաժանվում են իրավաստեղծ, իրավափոփոխիչ և իրավադադարեցնող հայցերի:

**Իրավաստեղծ հայցի** դեպքում դատարանն իր վճռով սահմանում է նախկինում գոյություն չունեցող իրավունք: Օրինակ, Քաղ. օր. 213-րդ հոդվածի համաձայն՝ կամավոր սերվիտուտ սահմանվում է սերվիտուտ պահանջող անձի և հարևան հողամասի սեփականատիրոջ՝ նոտարական կարգով վավերացված գրավոր համաձայնությամբ: Այդ պայմանագրում պետք է նշվեն սերվիտուտի գործողության ժամկետը և այլ պայմաններ: Համաձայնության չգալու դեպքում հարկադիր սերվիտուտը սահմանվում է դատարանով՝ սերվիտուտ պահանջող անձի հայցով:

**Իրավափոփոխիչ հայցի** դեպքում դատարանի վճիռը փոփոխում է կողմերի իրավահարաբերությունները: Այսպես, համաձայն Քաղ. օր. 198-րդ հոդվածի 3-րդ մասի՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից մասնակիցներից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում ընդհանուր գույքից բաժինը բնեղենով առանձնացվում է շահագրգիռ անձի հայցով: Կամ ելնելով երեխայի շահ

հերից՝ դատարանը կարող է վճիռ կայացնել ծնողներից /նրանցից մեկից/ երեխային վերցնելու մասին /ծնողական իրավունքների սահմանափակում/ առանց ծնողական իրավունքներից զրկելու /Ընտ. օր. 63 հոդվ. 1-ին մաս/:

Վերափոխիչ հայցը կարող է ուղղված լինել նաև պայմանագրի պայմանների փոփոխմանը:

**Իրավադադարեցնող** հայցի դեպքում դատարանի վճիռը կողմերի իրավահարաբերությունները դադարեցնում է ապագայում: Այսպես, Քաղ. օր. 223-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքը դադարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում այդ իրավունքը կարող է սեփականատիրոջ պահանջով դադարեցվել դատական կարգով՝ սեփականատիրոջ կողմից փոխհատուցում տրամադրելու միջոցով: Կամ եթե ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայությանը ալիմենտի չափը դատական կարգով որոշելուց հետո փոփոխվել է կողմերից մեկի գույքային և ընտանեկան դրությունը, ապա դատարանը կարող է յուրաքանչյուր կողմի պահանջով փոփոխել ալիմենտի սահմանված չափը կամ ալիմենտ վճարելու պարտավոր անձին ազատել դա վճարելուց /Ընտ. օր. 107 հոդվ. 1-ին մաս./:

Ինչպես արդեն նշվել է, մի շարք դեպքերում կողմերն իրենք չեն կարող դադարեցնել իրենց իրավահարաբերությունները: Դրանք ապագա ժամանակի համար դադարեցվում են միայն դատարանի վճռով՝ շահագրգիռ անձի հայցով:

Վերափոխիչ հայցերի կարևորագույն հատկանիշ է այն, որ դատարանը նման վճիռներ կարող է կայացնել միայն օրենքով նախատեսված դեպքերում: Վերափոխիչ պաշտպանության, հետևաբար և՛ վերափոխիչ հայցի առանձնահատկությունը կայանում է նաև նրանում, որ եթե վճռող ու ճանաչողական հայցե-

րով դատարանը ոչ մի փոփոխություն չի մտցնում վիճելի իրավահարաբերության մեջ, ապա, բավարարելով վերափոխիչ հայցը, դատարանը փոփոխում է այդ իրավահարաբերությունը կամ կողմերի համար սահմանում է նոր իրավունքներ ու պարտականություններ:

Վերափոխիչ հայցի առարկան է հանդիսանում որոշակի իրավահարաբերություն սահմանելու, փոփոխելու կամ դադարեցնելու մասին հայցվորի՝ պատասխանողի դեմ ուղղված պահանջը:

Վերափոխիչ հայցի հիմքը, կախված նրա ենթատեսակից, տարբեր է: Այն վերափոխիչ հայցերում, որոնք ուղղված են իրավահարաբերություններ սահմանելուն, դրանք իրավաստեղծ փաստերն են, իրավահարաբերությունները դադարեցնելու մասին վերափոխիչ հայցերում՝ իրավադադարեցնող փաստերը, իրավահարաբերությունները փոփոխելու մասին վերափոխիչ հայցերում՝ իրավադադարեցնող և իրավաստեղծ փաստերը միասին: Օրինակ՝ սերվիտուտ սահմանելու մասին հայցով դրանք որոշակի առումով իր հողամասից օգտվելու հնարավորության բացակայության փաստերն են /դեպի ճանապարհը ելքի բացակայությունը/ և սեփականատիրոջ հետ համաձայնության չհասնելը. ծնողական իրավունքներից զրկելու մասին հայցով՝ ծնողական իրավունքների չարաշահման փաստերը. ընդհանուր սեփականությունը բաժանելու հայցով՝ ժառանգություն ստանալու փաստը, որն առաջացրել է բաժնային սեփականության հարաբերություններ ու բաժինն առանձնացնելու պահանջ, ինչպես նաև համասեփականատերերի միջև համաձայնության չհասնելը և այլն:

Վերափոխիչ հայցերով դատական պաշտպանության առարկան հանդիսանում է սուբյեկտիվ իրավունքը: Որոշ դեպքերում, օրինակ՝ առչինչ գործարքը վավեր ճանաչելու /այսպես կոչված՝ «վերակենդանացնող»/ հայցերով դատական պաշտպա-



նության առարկա կարող է հանդիսանալ օրինական շահը<sup>60</sup>:

Վերափոխիչ հայցերը հայտնի էին դեռևս նախախորհրդային ռուսական գիտությանը /իսկ ավելի վաղ՝ գերմանական իրավունքին/ ու ստացել են «կոնստիտուտիվ հայց» անվանումը, քանի որ դատարանն իր վճռով «վերափոխում էր վիճելի իրավահարաբերությունը»<sup>61</sup>:

Խորհրդային իրավագիտության մեջ վերափոխիչ հայցերի գաղափարն ընդունել ու զգալիորեն կատարելագործել /տեսությունը մշակել/ է Մ.Ա.Գուրվիչը<sup>62</sup>: Միևնույն ժամանակ շատ հեղինակներ /Ա.Ֆ.Կլեյնման, Ա.Ա.Դոբրովոլսկի, Ա.Ա.Իվանովա, Կ.Ս.Յուդելսոն և ուրիշներ/ ժխտել են վերափոխիչ հայցերն առանձնացնելու անհրաժեշտությունը՝ գտնելով, որ դրանք հայցերի առանձին տեսակ չեն կազմում, այլ ըստ էության հանդիսանում են ճանաչողական հայցեր: Առարկության հիմնական դրույթը /թեզը/ կայանում էր նրանում, որ վերափոխիչ հայցերի տեսությունն իբր ելնում է դատարանների մոտ իրավաստեղծ գործառույթների առկայության ենթադրությունից՝ այն դեպքում, երբ նման գործառույթները յուրահատուկ չեն դատարանին, որի խնդիրը ոչ թե իրավունքներ ու պարտականություններ սահմանելն է, այլ դրանք պաշտպանելը: Սակայն Մ.Ա.Գուրվիչի հայացքների ճշտությունը հաստատվել է օրենսդրության հետագա զարգացմամբ: Այսպես, Քաղ. օր.-ը, նախկինում գործող քաղաքացիական օրենսգրքի նման, ուղղակիորեն նախատեսում է, որ

<sup>60</sup> Ընտանեկան օրենսդրությամբ նույնպես նախատեսված է նման հայցատեսակ: Այսպես, Ընտ. օր. 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը կարող է ամուսնությունը վավերական ճանաչել, եթե ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին գործի քննության պահին վերացել են դրա կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքները:

<sup>61</sup> Տե՛ս Васильковский Е.В. Курс гражданского процесса. М., 1913, հատ. 1, էջ 610:

<sup>62</sup> Տե՛ս Гурвич М.А. Учение об иске /состав, виды/. М., ВЮЗИ, 1981, 21-38 էջերը:

քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է նաև իրավահարաբերությունը փոփոխելով կամ դադարեցնելով /Քաղ. օր. 14 հոդվ. 12-րդ կետ/, իսկ Քաղ. օր. 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ որպես նորույթ, սահմանում է, որ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից: Բացի դրանից, ինչպես արդեն նշվել է, նյութական օրենսդրությունը սահմանում է այդ եղանակով իրավունքի պաշտպանության կոնկրետ դեպքեր, որոնք կիրառվում են դատական պրակտիկայում: Որպես հայցի ինքնուրույն տեսակ՝ այդ հայցերը ներկայումս ճանաչվում են նաև արտասահմանյան մի շարք երկրներում, օրինակ՝ Գերմանիայում, Բուլղարիայում, Յունգարիայում, Լեհաստանում, Ռումինիայում: Ներկայումս դատավարագետների շրջանում վերափոխիչ հայցերի գոյությունը գրեթե կասկած չի հարուցում<sup>63</sup>:

Հայցի տեսակի ընտրությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կատարում է հայցվորն ինքը, ելնելով խախտման բնույթից, անկախ նրանից, թե նյութական իրավունքի որ ճյուղի նորմերով կկարգավորվի վեճը:

Նշված հայցատեսակներից անհրաժեշտ է տարբերել այն հայցապահանջները, որոնք միացվում են մեկ հայցադիմումում ու վարույթում՝ հայցերի օբյեկտիվ միացման կարգով /ՔԴՕ 79 հոդվ./: Դատական պրակտիկայում նման հայցերը հաճախ են հանդիպում: Այսպես, գործարքն անվավեր ճանաչելու մասին

---

<sup>63</sup> *Տե՛ս, օրինակ, Օ.Յ. Իսաևնովա, Ա.Ա. Դեմիչև, Կ.Յ. Սոլովևա, Կ.Կ.Տրակաչևա. Իսկ в гражданском судопроизводстве. “Волтер Клувер”, 2009, էջ 65, Гражданское процессуальное право. Под ред. Шакарян М.С.-М.: ТК Велби. Изд. “Проспект”, 2004, էջ 106: Հակառակ կարծիքին է, օրինակ, Տ.Վ.Սախնովան /տե՛ս Сахнова Т.В. Курс гражданского процесса: теоритические начала и основные институты. М., «Волтер Клувер», 2008, /<https://elck.ru/AQUkW>:*

ճանաչողական հայցը սովորաբար միացվում է գործարքով ստացածը վերադարձնելու մասին վճռող հայցի հետ, ընդհանուր սեփականությունը բաժանելու կամ նրանից բնեղենով բաժինն առանձնացնելու մասին վերափոխիչ հայցն ուղեկցում է գույքի այդ մասը հանձնելու մասին վճռող հայցին, ամուսնալուծության մասին վերափոխիչ հայցը՝ երեխաների դաստիարակությունը հայցվորին հանձնելու մասին վճռող հայցին և այլն: Տարբեր տեսակի հայցապահանջների միացումը մեկ հայցադիմումում ու վարույթում բարձրացնում է դրանց նշանակությունը, խնայում դատարանի և կողմերի ժամանակը: Լուծելով գործը տվյալ հայցադիմումով՝ դատարանը պարտավոր է սպառիչ և ինքնուրույն պատասխան տալ յուրաքանչյուր հայցապահանջով՝ նրանց համար ընդհանուր վճռով:

Միայն շահագրգիռ անձն իրավունք ունի ընտրելու, թե ինչ եղանակով դատարանը պետք է պաշտպանի իր իրավունքները: Միևնույն ժամանակ, կարևոր նշանակություն ունի հայցային պաշտպանության միջոց հանդիսացող հայցի տեսակի ճիշտ ընտրությունը հայցվորի կողմից, քանի որ դատարանի կողմից պաշտպանության այս կամ այն եղանակի կիրառումն ամբողջովին կախված է ներկայացված հայցի տեսակից. դատարանը չի կարող սեփական նախաձեռնությամբ փոխել հայցի տեսակը: Հայցի տեսակի ու համապատասխան դատական վճռի միջև գոյություն ունի պատճառահետևանքային կապ: Հայցը բավարարվելու դեպքում վճռի տեսակը<sup>64</sup> կախված է հայցի տեսակից, իսկ

<sup>64</sup> Հայցերի վերոնշված տեսակներին համապատասխան՝ դատավարագիտության մեջ առանձնացվում են վճիռների հետևյալ տեսակները՝ վճռող, ճանաչողական և վերափոխիչ: Ի տարբերություն ՔԴՕ-ի՝ վարչադատավարական օրենսդրությամբ հայցի տեսակների հարցն ուղղակիորեն կարգավորված է. ՎԴՕ-ն նախատեսում է հետևյալ հայցատեսակները՝ վիճարկման հայց, պարտավորեցման հայց, գործողության կատարման հայց, ճանաչման հայց /65-68 հոդվածներ/:

հայցը մերժվելու դեպքում վճիռը միշտ կլինի հաստատողական - ժխտողական, քանի որ դատարանը ճանաչում է, որ հայցվորը չունի հայցի բավարարման իրավունք:

Նյութաիրավական հատկանիշով հայցերի դասակարգումը նույնպես ունի կարևոր տեսական ու գործնական նշանակություն: Այս հատկանիշով հայցերը տեսակների են բաժանվում ըստ նյութական իրավունքի ճյուղերի՝ քաղաքացիական իրավահարաբերություններից բխող հայցեր, ընտանեկան իրավահարաբերություններից բխող հայցեր, հողային իրավահարաբերություններից բխող հայցեր և այլն:

Նյութաիրավական հատկանիշով հաջորդ դասակարգումը կատարվում է ըստ իրավունքի առանձին ճյուղերի իրավական ինստիտուտների, օրինակ՝ սեփականության իրավունքի պաշտպանության հայցեր, ժառանգման իրավունքի պաշտպանության հայցեր, հեղինակային իրավունքի պաշտպանության հայցեր, պարտավորական իրավահարաբերություններից բխող հայցեր: Վերջիններս իրենց հերթին կարող են բաժանվել առուվաճառքի, նվիրատվության, փոխանակության և այլ պայմանագրերից բխող հայցերի: Այդ բոլոր հայցերը միմյանցից տարբերվում են ոչ միայն իրենց նյութաիրավական էությանը, այլև դատավարական առանձնահատկություններով, որոնք օրենքով սահմանված են դրանց հարուցման, քննության և լուծման համար: Չետևաբար՝ պատահական չէ, որ հայցերի նյութաիրավական դասակարգումն ընկած է դատական պրակտիկայի ամփոփումների հիմքում: Նյութաիրավական դասակարգումն իրավագետների կողմից օգտագործվում է հայցի ու հայցային վարույթի տարբեր հիմնախնդիրների հետազոտման ժամանակ: Այն ընկած է նաև դատական վիճակագրության հիմքում, որի տվյալները կարող են օգտագործվել օրենսդրության ու դատական գործունեության կատարելագործման նպատակով: Սակայն հայցե-

րի նյութաիրավական դասակարգումը, նպատակ ունենալով առանձնացնելու և ընդգծելու առանձին կատեգորիայի գործերով դատավարական առանձնահատկությունները, չի կարող սպառնիչ ու համընդգրկուն լինել, ինչը ցանկացած գիտական դասակարգման հիմնական պահանջն է: Հետևաբար՝ քաղաքացիական դատավարության իրավունքի տեսության մեջ հիմնական նշանակություն ունի հայցերի դատավարական - իրավական դասակարգումը, քանի որ այն ընդգրկում է դատական պաշտպանության բոլոր եղանակները և բոլոր հայցերն ու ծառայում է առանձին հայցերի նպատակի, հայցի առարկայի, հայց հարուցելու իրավունքի նախադրյալների, ինչպես նաև քաղաքացիական դատավարության տեսության բազմաթիվ այլ կարևոր հարցերի խորը հետազոտության նպատակին:

Դատավարագիտության մեջ գոյություն ունեն հայցերի նաև այլ դասակարգումներ<sup>65</sup>:

---

<sup>65</sup> Հայցի տեսակների ու դրանց հիմնախնդիրների մասին մանրամասն տես Արզումանյան Գ.Մ. Իրավունքների պաշտպանության հայցային ձևը, իրավ. գիտ. թեկն. ....ատենախոսություն, Երևանի պետական համալսարան-2006, 63-88 էջերը:

## ԳԼՈՒԽ 2.

### ՀԱՅՏԻ ՓՈՓՈԽՈՒՄ

Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Հանրապետության գործող օրենսդրությունը, քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքի<sup>66</sup> համահունչ, հայցվորին վերապահում է ներկայացված հայցը փոփոխելու իրավունք: Հայցի փոփոխումը հայցի առարկան կամ հայցի հիմքը փոփոխելն է, ինչը, որպես կանոն, պայմանավորված է լինում հայց ներկայացնելիս հայցվորի թույլ տված սխալներով: Եվ քանի որ դատավարության նպատակը սուբյեկտիվ իրավունքների իրական պաշտպանությունն է, ուստի հայցվորը չի կարող տուժել սխալմամբ կամ անիրազեկության պատճառով սկզբնապես հայցի ոչ ճիշտ հիմք կամ առարկա նշելու պատճառով: Դրա համար էլ հայրենական օրենսդիրը հայցվորին հնարավորություն է տալիս ուղղելու հայցադիմումը ներկայացնելիս իր կողմից թույլ տրված սխալները և հայտարարելու հայցի այն հիմքը կամ առարկան, որոնք համապատասխանում են կողմերի իրական փոխհարաբերություններին: Հայցվորը դրանով ազատվում է նույն իրավունքը պաշտպանելու համար նոր հայց հարուցելու, հայցադիմումի համար վերստին պետական տուրք վճարելու անհրաժեշտությունից: Հայցը փոփոխելու անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել նաև հայց ներկայացնելուց հե-

---

<sup>66</sup> *Տնօրինչականության սկզբունքի համաձայն՝ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք իրենց պատկանող նյութական իրավունքներն ու դրանց պաշտպանության դատավարական միջոցները տնօրինում են իրենց հայեցողությամբ:*

տո ծագած փաստերով: Հայցի առարկան կամ հիմքը փոփոխելը բխում է նաև դատավարական տնտեսման սկզբունքից. դատարանը հնարավորություն է ստանում առանձին քաղաքացիական գործերով ժամանակը, միջոցները և ջանքերը կրճատելու՝ դրանք ավելի բարդ գործերի վարույթի համար օգտագործելու համար:

Տեղին է նշել, որ դասական քաղաքացիական դատավարությունում հայցի հիմքին ու առարկային տրվում էր կանխորոշիչ նշանակություն. դատարանը կարող էր գործը քննել միայն հայցվորի կողմից հայցադիմումում ի սկզբանե նշված հայցի հիմքի և առարկայի սահմաններում: «Բանաձևն է որոշում դատավեճի բովանդակությունը: Հայցվորը չի կարող ո՛չ պահանջել այլ առարկա, ո՛չ ներկայացնել իր իրավունքի այլ հիմք, իսկ պատասխանողն իրավազոր չէ ներկայացնելու այլ առարկություններ՝ բանաձևում նշվածից բացի: Հայցը, մեկ անգամ ներկայացված լինելով, չի կարող ներկայացվել փոփոխված տեսքով՝ դատավարությունը չչարաշահելու համար», - նշել է նախախորհրդային ռուս դատավարագետ Ի.Ե. Էնգելմանը<sup>67</sup>: Սակայն ամբողջ վարույթի ընթացքում հայցի առարկայի ու հայցի հիմքի անփոփոխելիության կանոնը դժվարացնում /ձգձգում/ էր դատական պաշտպանության հասնելն ու ժամանակի ընթացքում, բնականաբար, ենթարկվեց փոփոխության:

«Հայցի հիմքը կամ առարկան փոխելը, հայցային պահանջների չափը փոփոխելը, հայցից հրաժարվելը, հայցը ընդունելը» վերտառությամբ ՔԴՕ 27-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն,

---

<sup>67</sup> *Տե՛ս Гражданский процесс. Хрестоматия: Под редакцией М.К.Треушников-ва, М. 2005, էջ 150: Նշված ժամանակաշրջանում տնօրինչականության սկզբունքը դիտարկվում էր իբրև մրցակցության սկզբունքի մաս, նրանից վերացարկված չէր: Հիմնական ուշադրությունը սևեռված էր հատկապես «կողմերի մրցակցության» վրա, ի տարբերություն քննչական դատավարության, որը դարձրով գերիշխում էր դատավարական ինստիտուտների զարգացման ընթացքում:*

եթե գործով քննությունն իրականացվում է դատաքննության նախապատրաստության փուլով, ապա հայցվորն իրավունք ունի փոփոխելու հայցի հիմքը կամ առարկան՝ մինչև առաջին ատյանի դատարանում գործով դատաքննության սկսվելը: «Հայցի հիմքը և առարկան լրացնելու իրավունքը» վերտառությամբ ՔԴՕ 143-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցվորի կողմից հայցի հիմքը կամ առարկան կարող է փոփոխվել մինչև դատաքննությունն նշանակելը: Դատարանը կարող է թույլ չտալ նման փոփոխությունը, եթե այն հանգեցնում է հայցի էության փոփոխության: Ի դեպ, ՔԴՕ 143-րդ հոդվածի 1-ին կետում վերջին նախադասությունն ավելացվել է օրենսդրական փոփոխությունների ընթացքում: Ակնհայտ է, որ դա կատարվել է իրավական որոշակիության ապահովման ու պատասխանողի շահերի պաշտպանության նկատառումներից ելնելով: Նույնաբովանդակ կարգավորում ունի նաև ՎԴՕ-ն /85 հոդվ. 2-րդ մաս/:

Նախևառաջ հարկ է արձանագրել վերոնշված հոդվածներում թույլ տրված օրենսդրական տեխնիկայի կանոնների խախտումները:

Այսպես, ՔԴՕ 27-րդ հոդվածի վերնագրում և 143-րդ հոդվածի դիսպոզիցիայում նշվում է հայցի հիմքի կամ առարկայի, իսկ ՔԴՕ 27-րդ հոդվածի դիսպոզիցիայում և ՔԴՕ 143-րդ հոդվածի վերնագրում՝ հայցի հիմքը և առարկան փոփոխելու մասին: Ակնհայտ է, որ ՔԴՕ 143-րդ հոդվածի վերտառության մեջ «և» շաղկապի փոխարեն պետք է նշվեր «կամ» շաղկապը<sup>68</sup>: Առկա է

<sup>68</sup> «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները... Նույն օրենքի 44-րդ հոդվածի 10-րդ մասի 6-րդ պարբերության համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:



նաև եզրույթների «շփոթ». մի հողվածում նշվում է հայցի հիմքը կամ առարկան փոխելու, մյուս դեպքում՝ փոփոխելու մասին: Ինչպես արդեն նշվել է, հայցերն անհատականացվում /մեկը մյուսից տարբերվում/ են հենց հայցի հիմքով և առարկայով: Չետևաբար՝ կասկած չի հարուցում, որ հայցի ներքին կառուցվածքը /բովանդակությունը/ կազմող տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի միաժամանակյա փոփոխության դեպքում ամբողջովին կփոխվի սկզբնապես ներկայացված հայցի էությունը, ու ներկայացված հայցը փաստացի կփոխարինվի մեկ այլ՝ էությամբ ուրիշ հայցով:

Օրենսդրական տեխնիկայի վերոնշյալ խախտումները վճռաբեկ բողոքի առիթ են դարձել: Չինք ընդունելով ՔԴՕ 27-րդ հոդվածի 1-ին կետի և ՔԴՕ 143-րդ հոդվածի 1-ին կետի ձևակերպումները՝ բողոքաբերը նշել է, որ հայցվորն ունի միաժամանակ թե՛ հայցի հիմքը և թե՛ հայցի առարկան փոփոխելու իրավունք: Չինք ընդունելով ՔԴՕ 143-րդ հոդվածի 2-րդ կետում օգտագործված «հայցադիմումի լրացում» բառակապակցությունը՝ բողոքաբերը նաև նշել է, որ ՔԴՕ 143-րդ հոդվածի կարգով ընդունված դատարանի որոշումը հայցադիմումի ընդունումը մերժելու և հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումների պես դասվում է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շարքին, ինչի մասին վկայում է հենց «հայցադիմումի լրացում» բառակապակցությունը: ԼԴՅ Գերագույն դատարանը մեկնաբանել է, որ իրականում նշված հոդվածներում խոսքը գնում է հայցի հիմքի կամ առարկայի, այսինքն՝ դրանցից որևէ մեկի, այլ ոչ թե միաժամանակ երկուսի փոփոխման մասին: Գերագույն դատարանը միաժամանակ նշել է, որ հայցի փոփոխումը չթույլատրելու որոշումը բողոքարկման ենթակա չէ, իսկ հայցադիմումի ընդունումը մերժելը, հայցադիմումը վերադարձնելը, հայցի փոփոխելը տարբեր դատավարա-

կան ինստիտուտներ են և չեն կարող նույնացվել<sup>69</sup>:

Հայցը փոփոխելու ինստիտուտին վերաբերող իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը հայցը փոփոխելու իրավունքի տակ նկատի ունի միայն հայցի ներքին կառուցվածքի փոփոխության այն սահմանները, որոնցից դուրս գալը գործող օրենսդրությամբ արգելվում է, այն է՝ հայցվորը կարող է փոփոխել կա՛ն հայցի առարկան, կա՛ն հայցի հիմքը: Հակառակ դեպքում կփոխվի հայցի էությունը. ներկայացված հայցը փաստացի կփոխարինվի ուրիշ հայցով: Այսպիսով, հայցի թույլատրելի փոփոխման սահմանների չափանիշը, ըստ գործող օրենքի իմաստի, հանդիսանում է այն իրավահարաբերությունը, որից ծագել են հայցվորի սկզբնական պահանջները: Իսկ դա որոշվում է հայցի հիմքը և հայցի առարկան դատական վճռի բովանդակության հետ համեմատելով:

Այնուամենայնիվ, դատական պրակտիկայում անորոշությունը, կապված հայցի փոփոխման ու, դրա հետ կապված՝ գործի քննության և լուծման սահմանների որոշման հետ, ամբողջությամբ չի վերացել նաև ՔԴՕ 143-րդ հոդվածի 1-ին կետում կատարված փոփոխությունից հետո, ինչը, մեր կարծիքով, նաև հայցի հիմքի և առարկայի օրենսդրական սահմանումների բացակայության հետևանք է, իսկ ԼԴՀ Գերագույն դատարանի մեկնաբանումն այդ հարցով առկա չէ: Հարկ է նշել, որ Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Հանրապետությունը, հիմնականում ընդօրինակելով ՀՀ իրավական համակարգի էական տարրերը, ներդրել է նաև երկրի բարձրագույն դատական ատյան հանդիսացող ԼԴՀ Գերագույն դատարանի /որը նաև սահմանադրական ատյան է/

<sup>69</sup> Տե՛ս ըստ հայցի Արմեն Հարությունյանի ընդդեմ Հովիկ Բաղասյանի և մյուսների՝ բնակարանում բնակվելու խոչընդոտները վերացնելու մասին ԸԻԴ 2525/02/2015 թ. քաղաքացիական գործով ԼԴՀ Գերագույն դատարանի 19. 04. 2016 թ. որոշումը:

կայացրած ակտերուն առկա իրավական հիմնավորումների և մեկնաբանությունների պարտադիրության սկզբունքը (ԴՕ 15 հոդվ. 4-րդ մաս): Իրավական նորմերը մեկնաբանելիս հանրապետության դատարանները հաշվի են առնում նաև Եվրոպական դատարանի վճիռները, որոնց շրջանակներում Եվրոպական դատարանը կատարել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի՝ տվյալ գործով կիրառման ենթակա առանձին դրույթների մեկնաբանությունը: ԼՂՀ դատարանները գործնականում չեն անտեսում նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նմանատիպ փաստական հանգամանքներ ունեցող քաղաքացիական գործերով օրենքի մեկնաբանությունները, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնցով լուծվել է այս կամ այն իրավական ակտի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Հայցի հիմքը փոփոխելը մի իրավանորմի հիպոթեզից այլ իրավանորմի հիպոթեզին անցնելն է: Դա կարող է արտահայտվել՝

1. հայցի նախկին հիմքը նոր փաստերով /հանգամանքներով/ լրացնելով: Օրինակ՝ վնասի հատուցման հայցի պասիվ հիմքը /Քաղ. օր. 1061 հոդվ./ կարող է հայցվորի կողմից լրացվել այն փաստով, որ վնասը պատճառվել է առավել վտանգի աղբյուրով: Նման լրացումը անհրաժեշտություն կառաջացնի կիրառելու այլ՝ Քաղ.օր. 1077-րդ հոդվածի նորմը.

2. կարող է լինել հակառակ իրավիճակը. հայցի հիմքն այդ դեպքում փոփոխվում է՝ նրանից հանելով հայցվորի կողմից նախկինում նշված այս կամ այն փաստը /հանգամանքը/: Օրինակ՝ մի քանի անձանց հանցավոր գործողություններով պատճառված վնասը հատուցելու մասին հայցի պասիվ հիմքից կարող է հանվել վնասը համատեղ պատճառելու հանգամանքը

/Քաղ. օր 1078 հոդվ./, որի հիմքով նրանց դեմ ներկայացված հայցը կքննվի արդեն այլ նորմի /Քաղ. օր 359, 1061, 1065 հոդվածների/ հիման վրա.

3. հայցի հիմքը կարող է փոփոխվել նաև հայցի հիմքում դրված փաստը /փաստերը/ այլ փաստով /փաստերով/ ամբողջությամբ փոխարինելու միջոցով: Այսպես, Քաղ. օր. 622-րդ հոդվածը նախատեսում է վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու չորս պայման, ինչը հայցվորին իրավունք է վերապահում անհրաժեշտության դեպքում դրանք փոխարինելու մեկը մյուսով: Նշված բոլոր դեպքերում փոփոխվում է հայցի հիմքը, իսկ հայցի առարկան չի փոփոխվում:

Գործնականում հայցի հիմքը փոփոխելը ունենում է տարատեսակ դրսևորումներ: Ընդամին, կարող են փոփոխվել հայցի թե՛ ակտիվ և թե՛ պասիվ հիմքերը: Անփոփոխ է մնում միայն փոփոխման բնույթը՝ մի հիպոթեզից մյուսին անցնելը և որպես հետևանք՝ մի իրավանորմից մյուսին անցնելը: Դրա համար էլ այն բոլոր դեպքերում, երբ իրավանորմի հիպոթեզը չի փոխվում, հայցի հիմքի փաստերի փոփոխումը կդիտարկվի ոչ թե հայցի հիմքի փոփոխում, այլ հայցի հիմքի փաստերի պարզ հստակեցում /ճշտում/: Օրինակ, եթե հայցվորը, ով հայց է հարուցել դատարան պատասխանողին ծնողական իրավունքից զրկելու մասին ու հայցապահանջը հիմնավորում է այն հանգամանքով, որ պատասխանողը երեխային արգելում է դպրոց հաճախել, այնուհետ սկսում է պնդել, որ պատասխանողը երեխային դրդում է թափառաշրջիկության, ապա հանգամանքների նման փոխարինումը մեկը մյուսով, մեր կարծիքով, կլինի պարզ հստակեցում, քանի որ երկու դեպքում էլ խոսքը գնում է միևնույն հիմքի՝ ծնողական իրավունքների չարաշահման մասին /Ընտ. օր. 59 հոդվ. 1-ին մասի 3-րդ կետ/:

Բոլոր դեպքերում, հայցի հիմքը փոփոխելը հնարավոր է, եթե

հայցվորի պահանջը հիմնված է այլընտրանքային հիպոթեզով նյութաիրավական նորմի վրա:

Հայցվորի կողմից կարող է փոփոխել նաև հայցի իրավական հիմքը կամ իրավական հիմնավորումը: Սակայն, ինչպես արդեն նշվել է, դրանց փոփոխությունը գործող օրենսդրությամբ հայցի փոփոխություն չի համարվում: Եիշտ նույն կերպ, հայցի հիմքի փոփոխություն չեն համարվում նաև հայցի հիմքի փաստերից արվող դատարանի իրավական հիմնավորումները /հիարկե, եթե դա չի վկայում հայցի հիմքում ընկած իրավաբանական փաստերի փոփոխության մասին/: Դատարանը, դատական ակտի պատճառաբանական մասում ցույց տալով իրավունքի այլ նորմեր, հայցը չի փոփոխում, գործի լուծման սահմաններից դուրս չի գալիս, այլ, ղեկավարվելով օրինականության սկզբունքով, դատական ակտ է կայացնում ըստ հայցի /վեճի/ էության:

Հայցվորի կողմից նոր կամ լրացուցիչ ապացույցներին հղում կատարելը նույնպես հայցի հիմքի փոփոխություն չի համարվում և գործի լուծման սահմանների վրա չի ազդում:

Հայցի փոփոխման մյուս ձևը հայցի առարկան փոփոխելն է: Այս դեպքում փոփոխվում է հայցի առարկան, իսկ հայցի հիմքը չի փոփոխվում: Այսինքն՝ հայցի էությունը չի փոխվում, չի փոխվում այն իրավահարաբերությունը, որից ծագել են հայցվորի սկզբնական պահանջները:

Դատական պրակտիկայում հայցի առարկան փոփոխելը, ամենից հաճախ, իրականացվում է կամ մի իրավական նորմի դիսպոզիցիայից մյուսին անցնելով կամ իր սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության այլ եղանակի ընտրությամբ /«սանկցիան փոխելը»/: Օրինակ՝ պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով փոխարինելու մասին պատասխանողի /վաճառողի/ դեմ ուղղված հայցվորի /գնորդի/ պահանջը կարող է փոխարինվել վճարված գումարը վերադարձնելու

մասին պահանջով /Քաղ. օր. 491 հոդվ. 2-րդ մասի 1-ին կետ/: Կամ Քաղ. օր. 414-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անհատապես որոշվող գույքը պարտատիրոջ սեփականությանը կամ հատուցելի օգտագործմանը հանձնելու պարտավորությունը չկատարելու դեպքում վերջինս իրավունք ունի պահանջել, որ այդ գույքը վերցվի պարտապանից և իրեն հանձնվի պարտավորությամբ նախատեսված պայմաններով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորության առարկա գույքն իրեն հանձնելու պահանջի փոխարեն պարտատերը կարող է պահանջել հատուցելու վնասները: Նշված իրավանորմերում /նույն հոդվածի տարբեր մասերը տարբեր նորմեր են/ խոսքը գնում է պարտավորական իրավունքների պաշտպանության երկու այլընտրանքային եղանակների մասին, այն է՝ գույքը պատասխանողից վերցնելը և հայցվորին հանձնելը ու վնասները հատուցելը, իսկ հիմքը նույնն է՝ կողմերի միջև պայմանագրի առկայությունը և պատասխանողի կողմից պայմանագրային պարտավորությունները խախտելը: Հայցվորն այդ եղանակները կարող է փոխարինել մեկը մյուսով, ինչով հայցի առարկայի մեջ կմտցվի փոփոխություն:

Երեխայի՝ պատշաճ դաստիարակության, ֆիզիկական, հոգեբանական, հոգևոր և բարոյական դաստիարակության իրավունքը նրա ծնողների կողմից խախտվելու կամ նսեմացվելու դեպքում կարող է պաշտպանվել երկու եղանակով՝ ծնողական իրավունքներից զրկելով /Ընտ. օր. 59 հոդվ./ և ծնողական իրավունքների սահմանափակմամբ /Ընտ. օր. 63 հոդվ./: Հայց հարուցելուց հետո հայցվորը, գտնելով, որ բացակայում են ծնողական իրավունքներից զրկելու բավարար հիմքերը, կարող է ծնողական իրավունքներից զրկելու պահանջը փոխարինել ծնողական իրավունքները սահմանափակելու պահանջով: Այս դեպքում նույնպես հայցի հիմքը չի փոփոխվում: Այլ կերպ ասած՝

այլընտրանքային պահանջներ ներկայացնելու հնարավորության դեպքում հայցվորը կարող է դրանք փոխարինել մեկը մյուսով՝ հայցի առարկայի փոփոխման ձևով: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ միևնույն իրավաբանական փաստերը /հայցի հիմքը/ միևնույն իրավահարաբերության պայմաններում կարող են առաջացնել նյութաիրավական տարբեր պահանջներ:

Հայցվորը հայցի առարկան կարող է փոփոխել նաև պատասխանողի դեմ ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով լրացնելով, գործնականում՝ իրավունքի պաշտպանության եղանակներն ավելացնելով:

Օրինակ՝ առուվաճառքի պայմանագրով ապրանքի համար վճարելու պահանջը /հայցի առարկան/ կարող է լրացվել Քաղ. օր. 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները բռնագանձելու պահանջով /502 հոդվ. 3-րդ մաս/: Կամ աշխատանքում վերականգնելու պահանջը կարող է լրացվել հարկադիր պարապուրդի համար վճարելու պահանջով /Աշխ. օր. 265 հոդվ. 1-ին մաս/: Ընդ որում, տվյալ վարույթի շրջանակներում լրացուցիչ պահանջներ չներկայացնելը չի բացառում հետագայում դրանք ինքնուրույն հայցի շրջանակներում ներկայացնելու հնարավորությունը:

Հայցի առարկան նման եղանակով փոփոխելը դատական պրակտիկան տարբերում է այն հայցապահանջներից, որոնք միացվում են մեկ հայցադիմումում կամ վարույթում հայցերի օբյեկտիվ միացման կարգով /ՔԴՕ 79 հոդվ./: Ի դեպ, դատական պրակտիկայում երբեմն հայցի փոփոխության անվան տակ ներկայացվում են նոր կամ լրացուցիչ պահանջներ: Ի տարբերություն հայցերի օբյեկտիվ միացման՝ հայցի առարկայի փոփոխության դեպքում իրավունքի պաշտպանության մի եղանակը մյուսով չի փոխարինվում, նոր պաշտպանության եղանակները սկզբնապես հայցված եղանակների կիրառումը չեն բացառում: Ընդլայնվում են միայն միևնույն հիմքի վրա հիմնված հայցի առարկայի շրջա-

նակները, և դատարանի մոտ ծագում է ոչ միայն սկզբնապես, այլև լրացուցիչ հայցված պաշտպանության եղանակների իրավաչափությունը ստուգելու և հայցվորի լրացված /փոփոխված/ պահանջներին վճռով պատասխան տալու պարտականություն:

Ինչպես արդեն նշվել է, հայցի թույլատրելի փոփոխման սահմանների չափանիշը հանդիսանում է այն իրավահարաբերությունը, որից ծագել են հայցվորի սկզբնական պահանջները: Չի թույլատրվում, օրինակ, փոխառության պայմանագրով գումարը պահանջելու մասին հայցը փոխարինել նույն գումարը պահանջելու մասին հայցով՝ հայցվորի գույքին վնաս պատճառելու փաստի հիման վրա, քանի որ դա փոփոխում է հայցի էությունը, և փոխառության պարտավորության փոխարեն դատարանը ստիպված կլինի քննելու վնաս պատճառելուց առաջացող պարտավորությունը: Կամ հնարավոր չէ ալիմենտի պահանջը փոխարինել բնակարանից վտարելու պահանջով, գույքային վարձակալությունից բխող պահանջը՝ ժառանգման կամ աշխատանքային իրավահարաբերություններից բխող պահանջներով և այլն:

Մասնագիտական գրականության մեջ, միևնույն ժամանակ, տեսակետ է արտահայտվել, որ որոշ դեպքերում ամբողջությամբ իրավահարաբերության փոփոխություն հնարավոր է, եթե տվյալ հայցով պաշտպանվող շահը չի փոխվում<sup>70</sup>: Գրականության մեջ նաև հնչեցվել է դատավարության օրենսդրության մեջ փոփոխություն մտցնելու առաջարկություն՝ նախատեսելով հայցի առարկան և հայցի հիմքը միաժամանակ փոփոխելու հնարավորություն այն հիմնավորմամբ, որ հայցի առարկան և հայցի հիմքը միաժամանակ փոփոխելու հնարավորություն չընձեռող օրենսդրական կարգավորումը դժվարացնում է դատական

---

<sup>70</sup> *Տե՛ս Գրաճանկոսկո ընդ ընդ. Մ. Մ. Մ., 2004, էջ 216:*



պաշտպանության հասնելը: Որպես օրինակ է բերվել վինդիկացիոն հայցի պարագայում դատական պրակտիկայում տարածում գտած այն դեպքը, երբ հայց ներկայացնելուց հետո պարզվում է, որ գույքը բնեղենով առկա չէ<sup>71</sup>:

Գործող օրենսդրությամբ հայցը փոփոխելու սուբյեկտ հանդիսանում է ոչ միայն հայցվորը /այդ թվում՝ ՔԴՕ 2-րդ հոդվ. 2-րդ պարբ. ուժով այլ անձանց իրավունքների, օրինական շահերի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձինք/, այլև նրա ներկայացուցիչը: Ընդ որում, հայցը փոփոխելու լիազորությունը ներկայացվողի տված լիազորագրում պետք է հատուկ նախատեսված լինի /ՔԴՕ 37 հոդվ. 4-րդ, 5-րդ կետեր./: Հակառակ դեպքում գործը քննվում և լուծվում է սկզբնապես ներկայացված հայցի սահմաններում:

Հայցի օբյեկտը հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում: Հետևաբար՝ ակնհայտ է, որ հայցի նյութական օբյեկտը փոխվելու դեպքում փոխվում է նաև հայցի առարկան:

Տնօրինչականության սկզբունքի համաձայն՝ հայցվորին է պատկանում նաև հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու իրավունքը: ՔԴՕ 27-րդ հոդվածի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի ավելացնել կամ նվազեցնել հայցային պահանջների չափը<sup>72</sup>: Դատավարագիտության մեջ միասնական կարծիք չկա այն հարցում, թե հայցային պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը կարելի՞ է համարել հայցի առարկայի փոփոխություն, թե՞ ոչ: Գերիշխող տեսակետի համաձայն՝

<sup>71</sup> Տե՛ս Приходько И.А. Доступность правосудия в арбитражном и гражданском процессе: основные проблемы, С.-Петербург, Издательство юридического факультета государственного С.-Петербургского университета, 2005, էջ. <http://www.twirpx.com/file/461372/>:

<sup>72</sup> Դատական պրակտիկայում հայցային պահանջների չափը նվազեցնելը, որպես կանոն, դիտարկվում է իբրև հայցից մասնակի հրաժարում:

հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու տակ նկատի է առնվում հայցի նյութական օբյեկտի /գույքի/ քանակական, այլ ոչ թե հայցի առարկայի որակական փոփոխությունը: Հայցի առարկայի քանակական կողմի փոփոխությունը հնարավոր է բացառապես գույքային բնույթի պահանջներով՝ այնպիսի պահանջներով, որոնց շրջանակներում հայցվորը պահանջում է պատասխանողից բռնագանձել դրամական միջոցներ, վերցնել տեսակային հատկանիշներով որոշվող գույք, իրավունքում կամ գույքում որոշել բաժնեմաս և այլն: Օրենսդիրը տվյալ նորմով հայցվորին հնարավորություն է տվել հստակեցնել, իրականությանը համապատասխանեցնել իր պահանջի ծավալը<sup>73</sup>: Ինչ վերաբերում է վեճի ոչ նյութական օբյեկտին, ապա դրա փոփոխության անհնարինությունը կասկած չի հարուցում, թեպետև ՔԴՕ-ում այդ մասին ուղղակիորեն նշված չէ:

Հայցը փոփոխելու իրավունքը պատկանում է հայցվորին և ոչ թե դատարանին: Հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու, հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու մասին հայցադիմումի լրացումը<sup>74</sup> /միջնորդությունը/ բավարարելու դեպքում դատարանը պարտավոր է գործը քննել և լուծել այդ սահմաններում:

Հաշվի առնելով հայցի տարրերի՝ հայցի հիմքի և հայցի առարկայի փոխկապվածությունն ու փոխայնամավորվածությունը, գործնականում հնարավոր է, որ հայցի էությունը փո-

<sup>73</sup> Ժամանակին քաղաքացիական դատավարությունում հայցվորը կարող էր միայն նվազեցնել հայցապահանջի չափը, ընդ որում, դա բոլորովին չէր դիտարկվում իբրև հայցի առարկայի փոփոխություն, այլ համարվում էր հայցից մասնակի հրաժարում:

<sup>74</sup> ՔԴՕ- ն ներկայումս օգտագործում է «հայցադիմումի լրացում» արտահայտությունը՝ որպես հայցի փոփոխման դատավարական ձև /143 հոդվ. 2-րդ կետ/, սակայն դատական պրակտիկայում շարունակվում է կիրառվել նաև «հայցը փոփոխելու մասին միջնորդություն» արտահայտությունը:

փոխվի նաև հայցի տարրերից որևէ մեկի փոփոխմամբ: Օրենսդիրը սահմանում է, որ դատարանը կարող է թույլ չտալ հայցի հիմքի կամ հայցի առարկայի փոփոխություն, եթե այն հանգեցնում է հայցի էության փոփոխության /ՔԴՕ 143-րդ հոդվ. 1-ին կետ/: Հայցի հիմքի կամ առարկայի փոփոխություն թույլ չտալու դեպքում դատարանը հայցը քննում և լուծում է հայտարարված սահմաններում:

Հայցը փոփոխելը որոշ դեպքերում կարող է հանգեցնել գործի ենթակայության /ՔԴՕ եզրաբանությամբ՝ առարկայական ընդդատության/ փոփոխության: ՔԴՕ-ն, հավանաբար հաշվի առնելով, որ ԼԴՀ դատական օրենսգրքի /այսուհետ՝ ԴՕ/ 21-րդ և 23-րդ հոդվածների համաձայն Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Հանրապետությունում գործում է առաջին ատյանի միայն մեկ դատարան, որին ընդդատյա են քաղաքացիական, քրեական և վարչական գործերը, ՀՀ ՔԴՕ 149-7-րդ հոդվածի 1-ին կետում տեղ գտած կարգավորումն այն մասին, որ հայցի հիմքը կամ առարկան կարող է փոփոխվել գործը քննող դատարանի առարկայական ընդդատության սահմաններում, չի ներմուծել: Այսպիսով, փաստորեն առանց կարգավորման է մնացել հարցն այն մասին, թե հայցի փոփոխմամբ դատական ենթակայությունը /օրենսդրի եզրաբանությամբ՝ առարկայական ընդդատությունը/ փոխվելու դեպքում ինչպե՞ս պետք է վարվի դատարանը:

### ԳԼՈՒԽ 3. ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԴՐԱ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

#### 3.1. Հայց հարուցելու իրավունքի հասկացությունը

Նախ պարզաբանենք, թե ինչ է իրենից ներկայացնում քաղաքացիական դատավարության իրավունքի տեսության մեջ ավելի քան մեկ հարյուրամյակ օգտագործվող «հայցի իրավունք» հասկացությունը:

Ըստ դատավարագիտության տեսության մեջ տարածված տեսակետի՝ «հայցի իրավունք» հասկացությունն ունի նյութաիրավական և դատավարական իմաստներ: Հայցի իրավունքը նյութաիրավական իմաստով սահմանվում է իբրև հայցվորի՝ իր խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքի դատական պաշտպանությունը պահանջելու իրավունք, այսինքն՝ հասնելու իր օգտին դատական վճռի կայացմանը, պատասխանողի կողմից իր պարտականությունների հարկադիր կատարմանը: Նյութաիրավական իմաստով հայցի իրավունքը տեսության մեջ անվանվում է նաև «հայցի բավարարման իրավունք»: Դատավարական իմաստով հայցի իրավունքը հասկացվում է իբրև «հայց հարուցելու իրավունք», այսինքն՝ շահագրգիռ անձի կողմից իր նյութական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավունքը՝ դրանց ենթադրյալ խախտման կամ վիճարկման պատճառով: Եվ երբ հայցի իրավունքի մասին խոսվում է դատական պաշտպանության դիմելու նշանակությամբ, նկատի է առնվում հայցի իրավունքը՝ դատավարական իմաստով<sup>75</sup>:

<sup>75</sup> Տե՛ս, օրինակ, Власов А.А. *Гражданский процесс: 7-е изд., перераб. и доп. М., Юрайт, 2015, էջ 271: Коршунов Н.М., Мареев Ю.Х., Гражданский процесс. Изд. Норма, М., 2008, էջ 355:*

Դատավարական իմաստով հայցի իրավունքը Մ.Ա.Գուրվիչը համարում էր հայց ներկայացնելու իրավունք, որի տակ նկատի էր ունենում կոնկրետ քաղաքացիաիրավական վեճի դատական քննությունը հարուցելու ու պաշտպանելու իրավունքը: Նյութական իմաստով հայցի իրավունքի տակ նա նկատի էր ունենում սուբյեկտիվ նյութական իրավունքը /պահանջը/ խախտված կամ վիճարկվող վիճակում: Նա այդ իրավունքներից յուրաքանչյուրը համարում էր ինքնուրույն կատեգորիա. հայց ներկայացնելու իրավունքը՝ սուբյեկտիվ քաղաքացիական դատավարական իրավունք, իսկ հայցի բավարարման իրավունքը՝ սուբյեկտիվ քաղաքացիական իրավունք: Նյութական իմաստով հայցի իրավունքը նույնացնելով իր իսկ սուբյեկտիվ իրավունքի հետ՝ Մ.Ա.Գուրվիչն առաջարկել է վերացնել «հայցի իրավունք» եզրույթի բազմիմաստությունը, այն օրենքում պահպանել միայն նյութական իմաստով՝ սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքի նշանակությամբ՝ հարկադիր իրականացնելուն ընդունակ վիճակում: Նրա կարծիքով՝ հայց ներկայացնելու իրավունքը և հայցի բավարարման իրավունքն ունեն տարբեր ճյուղային բնույթ. առաջինը հանդիսանում է քաղաքացիական դատավարական, քանի որ նախատեսված է այդ օրենսդրությամբ, իսկ երկրորդը հանդիսանում է նյութական ու նախատեսված է քաղաքացիական օրենսդրությամբ: Տարբեր են նաև նշված իրավունքների հիմքերը: Հայց ներկայացնելու իրավունքի ծագումը պայմանավորված է դատավարական հանգամանքներով /նախադրյալներով/, իսկ հայցի բավարարման իրավունքի հիմքում ընկած են քաղաքացիական, ընտանեկան և իրավունքի այլ ճյուղերով նախատեսված նյութաիրավական փաստերը<sup>76</sup>:

---

<sup>76</sup> *Ст'ю Гурвич М.А. Право на иск. Изд. АН СССР, М.-Л., 1949. 47, 145 էջերը:*

Հայցի իրավունքի երկու ինքնուրույն հասկացությունների զաղափարը պաշտպանել են նաև այլ տեսաբաններ /Ն.Բ.Ջեյ-դեր, Մ.Ս.Շաքարյան և ուրիշներ/:

Տեսաբանների մյուս խումբը /Ա.Ֆ.Կլեյնման,Դ.Ա.Չեչոտ, Ա.Ա.Դոբրովոլսկի և ուրիշներ/ հայցի իրավունքը դիտարկել է իբրև միասնական հասկացություն, որը համապատասխանում է հայցի միասնական հասկացությանը: Քանի որ հայցը, իբրև միասնական հասկացություն, ունի երկու կողմ՝ դատավարական և նյութական, դրա համար էլ «հայցի իրավունք» հասկացությունը նունպես ունի երկու կողմ՝ դատավարական և նյութաիրավական: Հայցի իրավունքն ինքնուրույն սուբյեկտիվ իրավունք է: Եվ ինչպես յուրաքանչյուր սուբյեկտիվ իրավունք, հայցի իրավունքն առկա է ոչ թե բոլոր անձանց, այլ միայն կոնկրետ անձանց մոտ, կոնկրետ գործերով, որոշակի նախադրյալների առկայության դեպքում: Հայց ներկայացնելու իրավունքը և հայցի բավարարման իրավունքը երկու իրավագործություններ են, որոնք մտնում են հայցի իրավունքի կազմի մեջ: «Մեր կարծիքով,- գրում է Ա.Ա.Դոբրովոլսկին, - չկա նյութական իմաստով հայցի իրավունք՝ առանց որոշակի դատավարական կարգով սուբյեկտիվ իրավունքի իրականացման մասին պահանջի ստուգման, առանց որոշակի իրավական երաշխիքների ինչպես հայցվորի, այնպես էլ պատասխանողի համար, ու չկա դատավարական իմաստով հայցի իրավունք՝ առանց հայցվորի՝ պատասխանողին ուղղված պահանջի: Նշված իրավունքները կարող են գոյություն ունենալ միայն որպես միասնական հասկացության՝ հայցի միասնական իրավունքի երկու կողմեր»<sup>77</sup>:

<sup>77</sup> Տե՛ս *Клейнман А.Д. Советский гражданский процесс. М., 1954, էջ 148, Добровольский А.А. Исковая форма защиты права /основные вопросы учения об иске/, М., Изд. МГУ, 1965, էջ 76:*

«Հայցի իրավունքը ոչ թե հայցվորի խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքն է, այլ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը որոշակի դատավարական կարգով /հայցային ձևով/ իրականացնելու հնարավորությունը», - նշում է պրոֆեսոր Ռ.Գ. Պետրոսյանը<sup>78</sup>:

Վ. Ն. Շչեգլովը գրել է. «Եթե անձն օժտված է հայց ներկայացնելու իրավունքով և սահմանված կանոնների պահպանմամբ դիմել է դատարան, քաղաքացիական գործ կհարուցվի և կքննվի, սակայն որպեսզի վճիռը լինի հայցվորի օգտին, նա պետք է օժտված լինի նաև հայցի բավարարման իրավունքով: Ասվածը վկայում է հայցի բավարարման իրավունքի և հայց ներկայացնելու իրավունքի սերտ կապի մասին, չի կարելի հուսալ դատական պաշտպանություն, եթե չկա հայցով դատարան դիմելու իրավունք: Սակայն անգամ ամենասերտ կապը միասնականություն չի ենթադրում, քանի որ մի իրավունքը կարող է գոյություն ունենալ առանց մյուսի: ...Եթե անձը կարող է օժտված լինել մի իրավունքով, միաժամանակ չունենալով մյուսը, հայցի միասնական իրավունք գոյություն չունի»<sup>79</sup>:

Ե.Վ.Ռյաբովայի կարծիքով՝ կարելի է խոսել հայցի իրավունքի միայն մի հասկացության՝ դատավարական իմաստով հայցի իրավունքի, այսինքն՝ հայց ներկայացնելու իրավունքի մասին, իսկ հայցի բավարարման իմաստով հայցի իրավունքի մասին խոսել հնարավոր չէ, քանի որ «հայցի բավարարման իրավունքը չի կարելի անվանել հայցի իրավունք ոչ մի իմաստով»<sup>80</sup>:

Շատ ավելի վաղ նախախորհրդային ռուս ճանաչված դատա-

<sup>78</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., նշվ. աշխ., էջ 246:

<sup>79</sup> Տե՛ս Щеглов В.Н. Иск о судебной защите гражданского права. Под ред. Осокиной Г.Л., Томск, Томский ун-т, 1987, էջ 150:

<sup>80</sup> Հղումն ըստ՝ Добровольский А.А. Исковая форма защиты права /основные вопросы учения об иске/, М. Изд. МГУ, 1965, էջ 88:

վարագետ Ե.Վ.Վասկովսկին նշել է, որ «հայցի իրավունքը» քաղաքացիական դատավարությունում լիովին փոխարինվում է «քաղաքացիական դատավարական իրավունակություն» հասկացությամբ<sup>81</sup>:

Խորհրդային որոշ տեսաբաններ ուղղակիորեն արտահայտվել են նշված հասկացությունն օրենսդրությունից ու պրակտիկայից բացառելու մասին:

Այսպես, օրինակ՝ Կ.Ս. Յուդելսոնը նշել է. «Քանի որ հայցի իրավունքն իրականացվում է դատարան պատասխանողին հայց ներկայացնելու ձևով, դրա համար այն կարելի է համարել ու անվանել «հայց ներկայացնելու իրավունք»<sup>82</sup>: Մ.Ա.Գուրվիչի կարծիքով՝ «...այդ խորհուրդը գործնականում այսօր ընդունել հնարավոր չէ, թեպետև «հայցի իրավունքի» կողմերից մեկի վերացումը կօժանդակեր այդ կարևոր գործում խառնաշփոթի նվազեցմանը, ինչը մեծամասամբ պայմանավորված է բազմիմաստ և հակասական եզրաբանությամբ: Արված առաջարկության անընդունելիության այսօրվա պատճառը պարզ է. «հայցի իրավունք» եզրույթը, այն էլ՝ հատկապես նյութական իմաստով, օգտագործվել է օրենքի մեջ: Այդ եզրույթը լայնորեն տարածված է դատական պրակտիկայում, գիտական և ուսումնական իրավաբանական գրականության մեջ: Օրենսդրական, դատական և այլ գործնական առօրյայից նրա բացառումը այսօր համարվում է անհնարին կամ ծայրահեղ դժվարին: Դրա համար, մնալով իրական հողի վրա, մենք չենք կարող միանալ այդ առաջարկությանը»<sup>83</sup>:

<sup>81</sup> *Տե՛ս Гражданский процесс. Хрестоматия. Под ред. Треушникова М.К., М., “Гордец”, 2005, էջ 482:*

<sup>82</sup> *Տե՛ս Юдельсон К.С., Советский гражданский процесс. М. 1965, 159-160 էջերը:*

<sup>83</sup> *Տե՛ս Гурвич М.А. Право на иск. М.-1947, էջ 38:*



Գործող քաղաքացիական օրենսդրությունը «հայցի իրավունք» եզրույթն ընդհանրապես չի օգտագործում, հետևաբար՝ վերացել է Մ.Ա.Գուրվիչի վերոնշված փաստարկի հիմքը: Այդ եզրույթը գրեթե չի օգտագործվում նաև իրավակիրառական պրակտիկայում /օգտագործման հազվադեպ դեպքերը, մեր կարծիքով, ավանդույթի հետևանք են/: Դրա փոխարեն ներկայումս օրենսդիրն օգտագործում է «դատական պաշտպանության իրավունք», «դատարան դիմելու իրավունք» եզրույթները: Ժամանակակից հետազոտողներից Տ.Վ. Սախնովայի արտահայտությամբ՝ «հայցի իրավունք» եզրույթը դատական պաշտպանությունը խիստ նյութական իմաստով ընկալելու արդյունք է, ինչը տեղ է գտել անցյալում ու ներկայումս էլ տարածված է քաղաքացիագետների շրջանում /հայցի նյութաիրավական տեսության մասին տե՛ս սույն աշխատության 2-րդ գլուխը/: «Չայցի իրավունքը պետք է համարել գիտական վերացական հասկացություն, որն ունի ավելի պատմական արժեք, քան թույլ է տալիս մեկնաբանելու դատական պաշտպանության իրացման ձևերը», - գրել է նա<sup>84</sup>:

Դատական պաշտպանության իրավունքը, որը միջազգայնորեն ճանաչված սկզբունք է և սահմանված է միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում, ամրագրված է նաև անկախություն ձեռք բերած ու ժողովրդավարության ուղին բռնած Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Չանրապետության Սահմանադրության մեջ, որի 44-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, իսկ 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում

---

<sup>84</sup> *Տե՛ս Сахнова Т.В. Курс гражданского процесса: теоритические начала и основные институты. М., «Волтер Клавер», 2008, <https://clck.ru/AQUJE>:*

արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Ընդ որում, դատավարագիտության մեջ ներկայումս համընդհանուր ճանաչում ստացած մոտեցման համաձայն՝ դատական պաշտպանության իրավունքն ունի դատավարական և նյութաիրավական կողմեր: Դատարան դիմելով՝ դիմողն առաջին հերթին իրականացնում է դատական պաշտպանության իր դատավարական իրավունքը, որին թղթակցում է ոչ թե նյութական իրավահարաբերության սուբյեկտի, այլ դատարանի պարտականությունը: Առանց շահագրգիռ անձի կողմից դատարան դիմելու, դատարանի կողմից քաղաքացիական գործ հարուցելու, օրենքով սահմանված ընթացակարգով վեճը քննելու և լուծելու, բողոք բերելու դեպքում՝ նաև դատական վճռի իրավաչափությունը վերադաս դատարանի կողմից ստուգելու, ինչպես նաև այն կատարելու անհնար է ոչ իրավաչափ խախտված կամ վիճարկվող իրավունքի պաշտպանությունը: Դրա հետ մեկտեղ, դատական պաշտպանության իրավունքն ունի նաև նյութաիրավական բնույթ, քանի որ պաշտպանության ենթակա է միայն ոչ իրավաչափ խախտված կամ վիճարկվող իրավունքը. դատական պաշտպանության իրավունքի առկայությունը՝ նյութաիրավական իմաստով, դատարանը կարող է որոշել միայն քաղաքացիական գործի քննության և լուծման՝ օրենքով նախատեսված ամբողջ ընթացակարգը պահպանելուց հետո<sup>85</sup>:

Դատական պաշտպանության իրավունքի իրացումը քաղա-

---

<sup>85</sup> Տե՛ս, օրինակ, *Комментарий к гражданскому процессуальному кодексу РФ (постатейный)*. Под ред. Жилина Г.А., 5-е изд., перераб. и доп. - Проспект, 2010, էջ 167: «Դատական պաշտպանության իրավունք» եզրույթի հետ մեկտեղ ներկայումս օգտագործվում է նաև «արդար դատաքննության իրավունք» եզրույթը:

քացիական դատավարությունում սկսվում է այն պահից, երբ շահագրգիռ անձը դատարան է ներկայացնում համապատասխան դիմում /հայցադիմում/, ինչի հիման վրա հարուցվում է քաղաքացիական գործը, ու մեծապես կախված է այն բանից, թե դատավարական օրենսդրության մեջ ինչպես է կարգավորված դատարան դիմելու իրավունքը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում /տե՛ս, օրինակ, Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով ՄԻԵԴ 19. 06. 2001թ. վճիռը, կետ 52/:

Դատարան դիմելու իրավունքի սուբյեկտներ հանդիսանում են Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Յանրապետության քաղաքացիները և իրավաբանական անձինք, Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Յանրապետությունը /պետությունը/, համայնքները, օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք, քաղաքացիություն չունեցող անձինք, կազմակերպությունները և հիմնարկները: Դատարան դիմելու իրավունքը նրանք իրականացնում են ինչպես անձամբ, այնպես էլ իրենց ներկայացուցիչների միջոցով: «Դատարան դիմելու իրավունքը» վերտառությամբ ՔԴՕ 2-րդ հոդվածը սահմանում է. «Շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: Սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում այլ անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտ-

պանության համար իրավունք ունեն դատարան դիմել այդպիսի պաշտպանությամբ հանդես գալու իրավունք ունեցող անձինք»:

Քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու լայն հնարավորությունները, սակայն, ամենևին չեն նշանակում, որ ցանկացած անձ ցանկացած կամ վերացական պահանջով, ցանկացած անձի իրավունքների պաշտպանությամբ կարող է դիմել դատարան, իսկ դատարանը պարտավոր է ընդունել դիմումը և հարուցել քաղաքացիական գործ: Հայտնի է, որ ոչ մի իրավունք չի կարող բացարձակ լինել և օգտագործվել իր նշանակությանը հակառակ, առավել ևս՝ իրավունքի չարաշահման նպատակով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարան դիմելու իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների: Պետությունն այս առնչությամբ օգտվում է հայեցողության ազատությունից: Պարզապես պետության կողմից սահմանված պայմանները /սահմանափակումները/ չպետք է այն կերպ կամ այն աստիճան սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա ողջամիտ հավասարակշռություն /տե՛ս, օրինակ, «Պայքար և հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով թիվ 21638/03 դիմումով ՄԻԵԴ 20.12.2007 թ. վճիռը, պարբ. 44/:

Հայրենական օրենսդիրը քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքը կապում է դատավարական բնույթի որոշակի իրավաբանական

փաստերի առկայության կամ բացակայության հետ, որոնք դատավարագիտության մեջ ստացել են «դատարան դիմելու իրավունքի նախադրյալներ» անվանումը: Դատարան դիմելու իրավունքը ծագում է հենց շնորհիվ այդ նախադրյալների: Դրանց առկայությունը կամ բացակայությունը դատավորը ստուգում և գնահատում է հայցադիմումը վարույթ ընդունելու /գործ հարուցելու/ փուլում: Նախադրյալներից թեկուզև մեկի բացակայությունը հիմք է հայցադիմումի /դիմումի/ ընդունումը մերժելու համար ու դատարանի մոտ տվյալ հայցադիմումը /դիմումը/ ընդունելու և քննության առնելու պարտականություն չի ծագում: Իսկ եթե նախադրյալների բացակայությունը հայտնաբերվում է գործը հարուցելուց հետո, ապա գործի վարույթը պետք է կարճվի: Սրանք են դատարան դիմելու իրավունքի նախադրյալների բացակայության բացասական հետևանքները:

Այսպիսով, քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքը սուբյեկտիվ դատավարական իրավունք է, որն առկա է օրենքով նախատեսված որոշակի /նվազագույն/ նախադրյալների առկայության դեպքում միայն:

Դատարան դիմելու իրավունքը, սակայն, համընդհանուր /ունիվերսալ/ կատեգորիա է, որը կիրառվում է ինչպես դատավարության բոլոր ձևերում` քաղաքացիական, վարչական /քաղաքացիական հայցի մասով` նաև քրեական/, այնպես էլ քաղաքացիական դատավարության բոլոր տեսակներում /հայցային և ոչ հայցային/: Հայցային վարույթին վերաբերելի է «հայց հարուցելու /ներկայացնելու/ իրավունք» եզրույթը:

Այսպիսով, հայց հարուցելու իրավունքը սուբյեկտիվ նյութական իրավունքի պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքն է, որն ապահովում է դատարանի կողմից հայցային գործի հարուցումը, քննությունը և լուծումն օրենքով սահմանված հայցային ձևով:

### 3.2. Հայց հարուցելու իրավունքի նախադրյալները

Հայց հարուցելու իրավունքի նախադրյալները /նախապայմանները/ դատավարական բնույթի այն հանգամանքներն են, որոնց առկայության կամ բացակայության հետ օրենսդիրը կապում է կոնկրետ դեպքում դատարան հայց ներկայացնելու իրավունքը:

Հայց հարուցելու իրավունքի նախադրյալների տեսությունը խորհրդային քաղաքացիական դատավարության իրավունքի տեսության մեջ մշակվել է Մ.Ա.Գուրովիչի կողմից<sup>86</sup>: Նրա շատ առաջարկություններ հետագայում օրենսդրական ձևակերպում են ստացել:

Օրենսդիրը ներկայումս սահմանում է հայցադիմումի ընդունումը մերժելու սպառիչ ցանկ. համաձայն ՔԴՕ 81-րդ հոդվածի 1-ին կետի՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ 1) վեճը ենթակա չէ դատարանում քննության, 2) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, 3) այլ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ, 4) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է միջնորդ դատարանի վճիռ, բացառությամբ դատարանի կողմից միջնորդ դատարանի վճիռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու դեպքի: Նշված փաստերը տեղ են գտել նաև ՔԴՕ 99-րդ հոդվածի 1-ին կետում՝ որպես գործի վարույթը կարճելու հիմքեր:

<sup>86</sup> *Տե՛ս Գրվիչ Մ.Ա. Պраво на иск. Изд. АН СССР, М.-Л., 1949, Գրվիչ Մ.Ա. Պраво на иск. ВЮЗИ. М.- 1978:*

Քաղաքացիական գործերով դատական պրակտիկան վկայում է, որ դատարան դիմելու իրավունքի իրականացման ժամանակ ամենից շատ դժվարություններ հանդիպում են հենց ՔԴՕ 81-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, համապատասխանաբար՝ նաև ՔԴՕ 99-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելիս: Պատճառն այդ նորմերի չափազանց ընդհանուր, անորոշ ձևակերպումն է: Գործող օրենսդրության ու դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ տվյալ դեպքում գործնականում խոսքը գնում է այնպիսի նախադրյալների մասին, ինչպիսիք են հայցվորի ու պատասխանողի քաղաքացիական դատավարական իրավունակությունը և հայցի՝ քաղաքացիական դատավարության ձևով /կարգով/ քննության և լուծման ենթակա լինելը:

**Հայցվորի և պատասխանողի քաղաքացիական դատավարական իրավունակությունը:** Հայց հարուցելու համար հայցվորը և պատասխանողը պետք է օժտված լինեն քաղաքացիական դատավարական իրավունակությամբ: Հայրենական քաղաքացիական դատավարությունում իրավունակության հարցերը, փաստորեն, կարգավորված են նյութական օրենսդրությամբ /օրինակ՝ Քաղ. օր. 20-21 հոդվածներ/: ՔԴՕ-ն, ի տարբերություն ՎԴՕ-ի /հոդվ. 4/ նշված հարցերը հանիրավի չի կարգավորում: Իրավունքի տեսության համաձայն՝ քաղաքացիական դատավարական իրավունակությունը դատավարական իրավունքներ ունենալու և դատավարական պարտականություններ կրելու ունակությունն է, որը հավասարապես ճանաչվում է նյութական իրավահարաբերությունների սուբյեկտներ հանդիսացող բոլոր քաղաքացիների և իրավաբանական անձանց /կազմակերպությունների/ համար<sup>87</sup>:

<sup>87</sup> Տե՛ս, օրինակ, Պետրոսյան Ռ.Գ. նշվ. աշխ., 136-137 էջերը:

Քաղաքացիական դատավարական իրավունակությունը, ի տարբերություն նյութական /քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան և այլն/ իրավունքում իրավունակության, կրում է համընդհանուր բնույթ: Դա կապված է այն բանի հետ, որ դատական պաշտպանության իրավունքը վերաբերում է մարդու և քաղաքացու հիմնական սահմանադրական իրավունքներին, որոնք երաշխավորվում են յուրաքանչյուր քաղաքացու կամ քաղաքացիների միության համար: Քաղաքացիական դատավարական իրավունակությունը չի կարող սահմանափակվել, այդ թվում՝ դատարանի վճռով: Գ.Լ.Օսոկինայի արտահայտությամբ՝ իրավունակություն չունեցող անձն «իրավաբանական զրո է», քանի որ ունակ չէ ձեռք բերելու հայցվորի կամ պատասխանողի դատավարական իրավունքներ, այսինքն՝ հանդես գալու որպես կողմ<sup>88</sup>:

Քաղաքացիների դատավարական իրավունակությունը ծագում է նրանց ծննդյան պահից և դադարում է նրանց մահվամբ: Իրավաբանական անձանց /կազմակերպությունների/ դատավարական իրավունակությունը ծագում է նրանց դատավարական գործունակության հետ միասին՝ պետական գրանցման պահից, և դադարում է նրանց լուծարման ավարտի պահին:

Սակայն հայց հարուցելու համար գործնական նշանակություն ունի կողմերի ոչ թե ընդհանուր /վերացական/, այլ կոնկրետ՝ «սեփական գործով» դատավարական իրավունակությունը<sup>89</sup>: Սահմանադրության ու Մարդու իրավունքների և հիմնարար

---

<sup>88</sup> *Տե՛ս* *Осокина Г.Л. Гражданский процесс. Общая часть. Учебник. -3-е изд. Перераб. Норма: ИНФРА- М.: 2013, էջ 356:*

<sup>89</sup> *Տե՛ս* *Гурвич М.А. Право на иск, М. 1978, Комментарий к гражданскому процессуальному кодексу РФ (постатейный). Под ред. Жилина Г. А., - 5-е изд., перераб. и доп. - Проспект, 2010, էջ 168, Жилин Г.А.Гражданское дело в суде первой инстанции. Учебное издание. М. “Городец”, 2000, 16-34 էջերը:*



ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոն-վենցիային համահունչ՝ ՔԴՕ-ն, որպես կանոն, հայց հարուցելու իրավունքը վերապահում է կոնկրետ այն անձին /վիճելի նյութա-կան իրավահարաբերության ենթադրյալ սուբյեկտին/, ում քա-ղաքացիական իրավունքներն անմիջականորեն խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ, ով շա-հագրգռված է սեփական իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությամբ /2 հոդվ. 1-ին պարբ./:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական /Վեներտիկի/ հանձնաժողովի դիրքորոշումն այս հարցում հետևյալն է. «Առաջնային է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ու-նենա վիճարկելու որոշումն այն հիմքով, որ այն խախտում է իր իրավունքները: Սակայն, եթե որոշումն անմիջականորեն չի խախտել անձի իրավունքները, ապա վիճարկման հնարավորու-թյան ընձեռումը ներպետական օրենսդրության կարգավորման խնդիր է»: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ար-տահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վեճը պետք է լի-նի իրական և իր բնույթով լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականություննե-րի հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունք-ները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առար-կան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն ու ազդեցություն ունենա պաշտպանվող իրա-վունքների և ազատությունների վրա /տե՛ս Լը Քոմպտեն և մյուս-ներն ընդդեմ Բելգիայի՝ թիվ 6878/75 դիմումով ՄԻԵԴ 23.06.1981 թվականի վճիռը, պարբ. 47, Բենթենն ընդդեմ Նիդերլանդների՝ թիվ 8848/80 դիմումով ՄԻԵԴ 23.10.1985 թվականի վճիռը, պարբ. 32/:

Նյութական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում սահմանափակվում է քաղաքացիների և

կազմակերպությունների իրավունակությունը՝ ուղղակիորեն նշելով հայց հարուցելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, ինչը, սակայն, իր հստակ ձևակերպումը չի ստացել ՔԴՕ 81-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում: Օրինակ՝ Քաղ. օր. 312-րդ հոդվածը, որն իր բովանդակությամբ նաև դատավարական նորմ է, սահմանում է, որ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը դատարանով կարող է անվավեր ճանաչվել մոլորության ազդեցության ներքո գործած կողմի հայցով: Կամ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի 90 -րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ընկերության այն բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) համատեղ տնօրինում է (են) ընկերության տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի մեկ և ավելի տոկոսին, իրավունք ունի (ունեն) խորհրդի անդամների, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպության և կառավարչի դեմ հայցով դիմել դատարան՝ ընկերությանը պատճառված վնասների փոխհատուցման պահանջով<sup>90</sup>: Գործի հարուցման մեջ շահագրգռված անձանց քաղաքացիական դատավարական իրավունակության բովանդակությունը սահմանափակվում է նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում /Քաղ. օր. 300, 302, 307, 309, 313 հոդվածներ, 223 հոդվ. 3-րդ մաս, 1252 հոդվ., Ընտ. օր. 21, 60 հոդվածներ և այլն/:

Դատական պրակտիկայում նման դեպքերում հայցադիմումի ընդունումը և քաղաքացիական գործի հարուցումը մերժվում է՝ համաձայն ՔԴՕ 81-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ վեճը դատարանին ենթակա չլինելու հիմքով՝ այն պատճառաբանությամբ, որ հայց հարուցել, ինչպես նաև պատասխանատվու-

---

<sup>90</sup> Ընդունվել է 19.03. 2003թ.:

թյուն կրել կարող է միայն քաղաքացիական իրավունակությամբ օժտված անձը<sup>91</sup>:

ՔԴՕ 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության ուժով այլ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար կարող են դատարան դիմել այդպիսի պաշտպանությամբ հանդես գալու իրավունք ունեցող անձինք՝ պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները, որոնք, վիճելի նյութական իրավահարաբերության սուբյեկտներ չհանդիսանալով, այդ իրավահարաբերությունների սուբյեկտների մասնավոր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավունք ունեն միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Այսպես, Ընտ.օր. 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողական իրավունքներից զրկելու մասին հայց կարող են ներկայացնել նաև այն մարմիններն ու կազմակերպությունները, որոնց վրա դրված են երեխաների իրավունքների պաշտպանության պարտականությունները /խնամակալության և հոգաբարձության մարմինները, որք երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար նախատեսված կազմակերպությունները և այլն/: Կամ ծնողական իրավունքների սահմանափակման մասին հայց կարող են ներկայացնել երեխայի մերձավոր ազգականները, այն մարմիններն ու կազմակերպությունները, որոնց վրա օրենքով դրված են երեխաների իրավունքների

---

<sup>91</sup> Հատուկ վարույթի որոշ կատեգորիայի գործերով օրենքը հստակորեն սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց դիմումներով կարող է հարուցվել քաղաքացիական գործը:

Քաղաքացիական դատավարական իրավունակությունը դատական ակտերում, որպես կանոն, չի հիշատակվում: Դրա փոխարեն օգտագործվում են ավելի նեղ և կոնկրետ, սակայն ոչ նույնական հասկացություններ՝ ենթակայություն, իրավասություն և այլն:

պաշտպանության պարտականությունները, նախադպրոցական, հանրակրթական և այլ կազմակերպություններ /Ընտ. օր. 63 հոդվ. 3-րդ մաս/: Կամ երեխայի որդեգրումը վերացնելու պահանջի իրավունք ունեն նրա ծնողները, երեխայի որդեգրողները, խնամակալության և հոգաբարձության մարմինները, ինչպես նաև տասնութ տարին լրացած որդեգրվածը /Ընտ. օր. 131 հոդվ./: Կամ «Հասարակական կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

Այլ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու հնարավորությունն նախատեսված է նաև այլ օրենքներով /«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին», «Ստանդարտացման մասին», «Սնանկության մասին» և այլն/<sup>92</sup>:

Կազմակերպությունները կարող են հայց հարուցել, եթե իրավաբանական անձ են /ԲԴՕ 24 հոդվ. 2-րդ, 3-րդ կետեր/: Միևնույն

---

<sup>92</sup> Այլ անձանց իրավունքների, ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ինստիտուտը խորհրդային ժամանակների ծնունդ է և շարունակվում է մինչև օրս: Նախախորհրդային ռուսական դատավարության իրավունքում հայց կարող էր հարուցել միայն վիճելի նյութական իրավահարաբերության ենթադրյալ սուբյեկտը: Հայրենական օրենսդիրը չի սահմանում այլ անձանց խախտված իրավունքների, ազատությունների, օրինական շահերի պաշտպանության համար դատարան դիմելու իրացման դեպքերը և կարգը: Ընդամենը «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված է, որ այդ անձինք դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են /22 հոդվ. 1-ին մասի «գ» կետ/: Մեր կարծիքով՝ վերը նշված իրավունքի առկայությամբ պետք է օրենքով սահմանել նաև այդ իրավունքի իրացման գործընթացը:

ժամանակ, օրենքով նախատեսված դեպքերում հայց հարուցելու քաղաքացիական դատավարական իրավունակությամբ օժտված են նաև իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունները: Կազմակերպության անունից և հօգուտ նրա շահերի հայց հարուցում է նրա ղեկավարը կամ ներկայացուցիչը, ովքեր իրացնում են կազմակերպության դատավարական իրավունակությունը՝ նորմատիվ ակտով, հիմնադիր փաստաթղթով կամ լիազորագրով իրենց տրված դատավարական իրավունքների սահմաններում դատավարական գործողություններ կատարելու միջոցով:

Պետական մարմիններն իրավունք ունեն դատարան դիմել պետության գույքային շահերի պաշտպանության հայցով /ՔԴՕ 32 հոդվ. 1-ին կետ/:

Համապատասխան պետական մարմնի կողմից հայց չներկայացվելու դեպքում պետության գույքային շահերի պաշտպանության հայցը ներկայացնում է դատախազը՝ «Դատախազության մասին» ԼԴՅ օրենքով սահմանված կարգով /ՔԴՕ 32 հոդվ. 3-րդ կետ/:

Համայնքի ղեկավարն իրավունք ունի դատարան դիմել համայնքի գույքային շահերի պաշտպանության հայցով /ՔԴՕ 33 հոդվ. 1-ին կետ/:

Դատավարագիտության մեջ տիրապետող տեսակետի համաձայն՝ դատախազի, այլ անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության համար հայց հարուցելու իրավունք ունեցող սուբյեկտների կոնկրետ քաղաքացիական դատավարական իրավունակության բովանդակությունը բխում է օրենքով ամրագրված նրանց իրավասությունից: Հետևաբար, եթե նրանք հայց հարուցեն հակառակ իրենց կոնկրետ դատավարական իրավունակության, երբ օրենքով նման հայց հարուցելու իրավունք նրանց վերապահված չէ, ապա դա-

տավորը պետք է մերժի քաղաքացիական գործի հարուցումը՝ ՔԴՕ 81-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով՝ քաղաքացիական դատավարական կոնկրետ իրավունակության բացակայության պատճառով<sup>93</sup>:

Որոշ դատավարագետների կարծիքով՝ նման դեպքերում հայցադիմումի /դիմումի/ ընդունումը մերժվում կամ գործի վարույթը կարճվում է ոչ թե քաղաքացիական դատավարական կոնկրետ իրավունակության, այլ իրավաբանական շահագրգռվածության բացակայության պատճառով: Նրանք գտնում են, որ իրավաբանական շահագրգռվածությունը չի կարող հայց հարուցելու իրավունքի նախադրյալ համարվել, եթե որպես այդ իրավունքի սուբյեկտ հանդես է գալիս նյութաիրավական իմաստով հայցվորը՝ անձը, ով պաշտպանում է իր իրավունքը և օրինական շահը: Իր իրավունքի կամ օրինական շահի պաշտպանության պահանջով դատարան դիմած անձի իրավաբանական շահագրգռվածությունը ենթադրվում է, դրա համար էլ գործի հարուցման փուլում այն ստուգելու անհրաժեշտություն չկա: Ինչ վերաբերում է այլ անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության հայց հարուցող սուբյեկտներին /այսպես կոչված՝ դատավարական հայցվորներին/, ապա այդ դեպքում իրավաբանական շահագրգռվածությունը հանդիսանում է հայց հարուցելու իրավունքի պարտադիր նախադրյալ, որի բացակայությունը հանգեցնում է հայցադիմումի ընդունումը մերժելուն<sup>94</sup>:

Դատավարագիտության մեջ տեսակետ է արտահայտվել նաև

<sup>93</sup> Տե՛ս, օրինակ, *Жилин Г. А. Гражданское дело в суде первой инстанции. Учебное издание. М. “Городец”, 2000, 18-20 էջերը:*

<sup>94</sup> Տե՛ս, օրինակ, *Коршунов Н.М., Мареев Ю.Х. Гражданский процесс. Изд. Норма, М., 2008, էջ 846, Осокина Г.Л. Гражданский процесс. Общая часть. - М.: “Юристъ”, 2008, էջ 555:*

այն մասին, որ իրավաբանական շահագրգռվածությունը պայմանավորում է հայց հարուցելու իրավունքը՝ հանդիսանալով դրա նախադրյալը: Եթե դատավորը քաղաքացիական գործի հարուցման փուլում պարզում է իրավաբանական շահագրգռվածության բացակայությունը, ապա այդ հանգամանքը պետք է հիմք հանդիսանա հայցադիմումի ընդունումը մերժելու համար<sup>95</sup>:

Հարց է առաջանում. հանդիսանում է արդյոք, իրավաբանական շահագրգռվածությունը հայց հարուցելու իրավունքի նախադրյալ հայրենական քաղաքացիական դատավարությունում:

Նախ փորձենք պարզել «իրավաբանական շահագրգռվածություն» հասկացության էությունը, որովհետև օրենսդիրը «շահագրգիռ անձ» օրենսդրական հասկացության բնույթը չի բացահայտում:

Դատավարագիտության մեջ «իրավաբանական շահագրգռվածություն» և «իրավաբանական շահ» հասկացությունները որոշ դեպքերում նույնացվում են, և դրա տակ հասկացվում է օրենքի վրա հիմնված ակնկալվող իրավական արդյունքը /բարիքը/, ինչը դատարան դիմած անձին կարող է տալ դատական ակտը և ինչը կարող է լինել անձնական /սուբյեկտիվ/, որը կոչվում է նաև նյութաիրավական շահագրգռվածություն կամ շահ /օրինակ՝ կողմերի և երրորդ անձանց մոտ/ և ծառայողական, որը կոչվում է նաև դատավարաիրավական շահագրգռվածություն կամ շահ /օրինակ՝ դատախազի մոտ/<sup>96</sup>:

Դատավարության իրավունքի ռուսական դպրոցի հայտնի

<sup>95</sup> Տե՛ս, օրինակ, Шеглов В.Н. Иск о судебной защите гражданского права. Под ред. Осокиной Г. Л., 62-68 էջերը, Власов А. А. Гражданский процесс: 7-е изд., перераб. и доп. М. Юрайт, 2015, էջ 272:

<sup>96</sup> Տե՛ս, օրինակ, Осокина Г.Л. Гражданский процесс. Общая часть. Учебник. 3-е изд. Перераб. Норма: ИНФРА- М.: 2013, էջ 151:

տեսաբան Ռ.Ե.Ղուկասյանը նշել է, որ գործով իրավաբանական շահագրգռվածությունը կայանում է ոչ թե իրավաբանական արդյունքի, այլ որոշակի կապի մեջ, որի ուժով դատարանի վճիռը կարող է ազդել դատարան դիմած անձանց սուբյեկտիվ իրավունքների և շահերի վրա: Այն իր մեջ ներառում է երկու պահ՝ 1/ անձի դիմելը իր իրավունքի և օրինական շահի պաշտպանությամբ, այսինքն՝ իրավաբանական շահագրգռվածությունն առկա է միայն այն անձանց մոտ, ովքեր դիմում են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ, 2/ վեճի իրավական բնույթը<sup>97</sup>:

Իրավաբանական գրականության մեջ իրավաբանական շահագրգռվածության տակ, միևնույն ժամանակ, հասկացվում է շարժառիթը, ինչը դատարան դիմած անձին դրդում է դատարանում հասնելու որոշակի բովանդակությամբ վճռի կայացմանը: Ըստ այդմ, իրավաբանական շահագրգռվածությունը տարբերվում է փաստական շահագրգռվածությունից, ինչը կարող է հիմնված լինել, օրինակ, ընկերության, հարազատության վրա<sup>98</sup>:

Հարկ է նկատել, որ ըստ դատավարագիտության մեջ առավել տարածված տեսակետի՝ իրավաբանական շահագրգռվածությունը և իրավաբանական շահը համարվում են տարբեր, ոչ նույնական հասկացություններ<sup>99</sup>: Տ.Վ.Սախնովան, օրինակ, գտնում է, որ իրավաբանական շահը գոյություն ունի օբյեկտիվորեն, այն կարող է դիտարկվել որպես քաղաքացիական դատավարության հիմք և այդ առումով հարաբերակցվում է նրա առարկայի հետ:

<sup>97</sup> Տե՛ս Լուկասյան Ռ.Ե. *Проблема интереса в советском гражданском процессуальном праве*. Саратов, Изд. СЮИ, 1970, 46-47 էջերը:

<sup>98</sup> Տե՛ս, օրինակ, Власов А.А. *Гражданский процесс: 7-е изд., перераб. и доп. М.Юрайт, 2015, էջ 208*:

<sup>99</sup> Շահագրգռվածություն՝ շահագրգռված լինելը, որևէ կարգի շահագրգռություն ունենալը: Շահ՝ օգուտ /տե՛ս Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, 56, 1093 էջերը/:



Դատավարությունը պետք է լինի առարկայական, պետք է կառուցված լինի շահի վրա, միջնորդավորի նրան և շարժվի շահով: Առանց շահի նորմալ քաղաքացիական դատավարությունն անիմաստ է: Սակայն շահը պետք է լինի դատավարության, այլ ոչ թե հայց հարուցելու իրավունքի նախադրյալ: Շահագրգռվածությունը իրավաբանական շահի գիտակցումն է, դրա համար էլ այն իր էությանը սուբյեկտիվ կատեգորիա է: Նման գիտակցումը կարող է լինել ինչպես համարժեք, որն արտացոլում է իրական շահը, այնպես էլ ոչ համարժեք, սակայն յուրաքանչյուր դեպքում այն հնարավոր է ստուգել միայն դատաքննության ընթացքում և ոչ թե հայց հարուցելու պահին<sup>100</sup>: Նույն կարծիքին է Վ.Վ. Յարկովը: Նրա արտահայտությամբ՝ քաղաքացիական դատավարությունում շահագրգռվածությունը չի կարող համարվել ո՛չ հայց հարուցելու իրավունքի նախադրյալ, ո՛չ հայց հարուցելու իրավունքի իրացման պայման՝ ամենից առաջ հենց ձևական նկատառումներից ելնելով. այն չի հանդիսանում իրավաբանական փաստ, հետևաբար՝ չունի իրավաստեղծ նշանակություն: «Շահագրգռվածությունը,- գրում է նա, - ոչ թե իրավական, այլ հոգեբանական բնութագիր է և արտացոլում է կամային պահ՝ անձի համոզվածությունն իր համար դատական պաշտպանության անհրաժեշտության հարցում»<sup>101</sup>: Գրականության մեջ նաև նշվել է, որ իրավաբանական շահագրգռվածությունը գտնվում է դատավարության մակարդակում, իսկ իրավաբանական շահի հասկացությունը՝ նյութական իրավունքի բնագավառում: Հետևաբար՝ դատավարությունում հայց հարուցելու իրավունքի

<sup>100</sup> Տե՛ս Сахнова Т.В. Курс гражданского процесса: теоритические начала и основные институты. М., «Волтер Клувер», 2008, <https://clck.ru/AQUke>:

<sup>101</sup> Տե՛ս Яркoв В.В. Юридические факты в цивилистическом процессе, М. Берлин Инфотропик Медиа 2012, 215, 219 էջերը:

առնչությամբ հարկ է օգտագործել իրավաբանական շահագրգռվածության և ոչ թե իրավական շահի հասկացությունը<sup>102</sup>:

Քննարկվող հարցի հետ կապված՝ հարկ է անդրադառնալ դատական պաշտպանության /քննության/ առարկա հանդիսացող օրինական շահին:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեցող մոտեցման համաձայն՝ յուրաքանչյուր սուբյեկտիվ իրավունքի հիմքում ընկած է այս կամ այն շահը, օրինական շահերը միջնորդավորված են կոնկրետ սուբյեկտիվ իրավունքներով, ուստի սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունը միաժամանակ հանդիսանում է օրինական շահի պաշտպանություն: Իրավունքները և ազատությունները, որպես դատական պաշտպանության առարկա, իրենցից ներկայացնում են որոշակի սուբյեկտիվ իրավունք, այսինքն՝ անձի հնարավոր (թույլատրելի) վարքագծի չափ՝ օբյեկտիվ իրավունքով նախատեսված իր օրինական շահերը պաշտպանելու համար<sup>103</sup>: Քանի որ սուբյեկտիվ իրավունքն օրինական շահի բավարարմանն ուղղված իրավագործ անձի իրավունքն է՝ իր սեփական (կամ օտար) վարքագծի նկատմամբ, այդ շահն անխզելիորեն կապված է սուբյեկտիվ իրավունքի հետ, հանդիսանում է նրա էական տարրը: Հետևաբար՝ օրինական շահը գոյություն ունի ոչ թե ինքնին, այլ սուբյեկտիվ իրավունքի ձևով:

Հեղինակների մյուս մասը օրինական շահի տակ նկատի է առնում սոցիալական պահանջմունքներ, որոնց օրենքն իր պաշտպանության տակ է վերցնում նրանց կրողին ոչ թե սուբյեկտիվ նյութական իրավունքներ, այլ պաշտպանության դատա-

<sup>102</sup> Տե՛ս *Օ. Վ. Исаенкова, А. А. Демичев, Т. В. Соловьева, Н. Н. Ткачева. Иск в гражданском судопроизводстве, "Волтер Клувер", 2009, էջ 74:*

<sup>103</sup> Տե՛ս, *օրինակ, Лукасян Р. Е. Проблема интереса в советском гражданском процессуальном праве, Саратов, 1970, էջ 38:*

կան կամ այլ իրավական ձևերին դիմելու իրավունք տալու ճանապարհով: Հայցային վարույթում դատական պաշտպանության առարկա են իրավունքները, ազատությունները, օրինական շահերը: Օրինական շահը, որպես դատական պաշտպանության ինքնուրույն առարկա, հայցային վարույթում հանդես է գալիս, օրինակ, պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության, գործարքներն անվավեր /առջինը/ ճանաչելու հայցերով: Քաղաքացիական դատավարության հատուկ վարույթում դատական պաշտպանության առարկա են հանդիսանում դիմողների՝ սուբյեկտիվ իրավունքներով միջնորդավորված օրինական շահերը<sup>104</sup>:

Ակնհայտ է, որ ՔԴՕ-ում օրենսդիրը նույնպես որոշակի տարբերություններ է դնում համապատասխան հասկացությունների միջև: Հակառակ դեպքում անհրաժեշտություն չէր լինի օգտագործելու «իրավունքներ», «ազատություններ», «օրինական շահեր» եզրույթները /ՔԴՕ 2 հոդվ./:

Նման տարբերակումը, թերևս, կապված է այն բանի հետ, որ, ի տարբերություն օրինական շահի, սուբյեկտիվ նյութական իրավունքը, որպես դատական պաշտպանության առարկա, ենթադրում է իրավահարաբերության մասնակցի հնարավոր վարքագծի բավականաչափ հստակ որոշում: Իրավունքի և օրինական շահի միջև չկան անհաղթահարելի սահմաններ, և իրավաբանական պրակտիկայի զարգացմանը զուգընթաց իրավագործանձի կամահայտնությունների առավել հաճախ հանդիպող նմուշներն օրենսդիրն ի վիճակի է ամրագրելու սուբյեկտիվ իրավունքի իրավագործությունների տեսքով: Այդ առումով օրինական

---

<sup>104</sup> *Стѣп Мотовиловкер Е. Я. Интерес как сущностный момент субъективного права /цивилистический аспект/. Правоведение. 2004, N 4, 52-62 էջերը:*

շահը նույնպես հնարավոր /թույլատրելի/ վարքագծի չափ է՝ ամրագրված օբյեկտիվ իրավունքում, թող որ բոլորովին ընդհանուր ձևով<sup>105</sup>:

«Իրավունք» և «օրինական շահ» հասկացությունների տարբերությունները համեմատելի են «իրավունք» և «ազատություն» հասկացությունների տարբերությունների հետ: Իր իրավաբանական բովանդակությամբ ազատությունը նույնպես հանդիսանում է սուբյեկտիվ իրավունք: Որպես մարդու բնական վիճակ՝ ազատությունը պետականորեն միավորված հասարակության մեջ իրացվում է բնական իրավունքների միջոցով, որոնք պետության կողմից ճանաչվելուց և իրավական նորմերում ամրագրվելուց հետո դառնում են նրա սուբյեկտիվ իրավունքները: Սակայն իրավունքների ճանաչումը, որպես ազատության իրացման միջոց, ամենևին չի նշանակում, թե այդ երկու հասկացությունները նույնական են, և դրանց միջև չկան տարբերություններ: Ընդունված տեսակետ է, որ ազատության դեպքում անձն ունի առավել ինքնորոշման հնարավորություն, քան իրավունքի դեպքում, որ ազատությունը առավելապես առնչվում է անձի այնպիսի իրավազորությունների հետ, որոնք մատնանշում են նրա ինքնուրույնության ոլորտները, միջամտությունից պաշտպանում են նրա ներաշխարհը /խղճի, հավատքի, մտքի, ստեղծագործության ազատություն/: Միևնույն ժամանակ, ցանկացած ազատություն իրավունք է՝ կոչված ստեղծելու պայմաններ, որոնք օժանդակում են այդ ազատության իրականացմանը: Համապատասխանաբար՝ արդարադատության նպատակները և իրավունքի պաշտպանության առարկան բնութագրելու համար իրավունք-

<sup>105</sup> Տե՛ս Жилин Г.А. О праве на судебную защиту при определении гражданских прав и обязанностей. Материалы Всероссийской научно-практической конференции. Краснодар -2006, 5-11 էջերը:

ները, ազատությունները և օրինական շահերը կարող են անվանվել մեկ միասնական հասկացությամբ՝ իրավունքներ<sup>106</sup>:

Այսպիսով, սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքը և օրինական շահը հանդիսանում են իրար շատ մոտ, հաճախ՝ հանրնկնող իրավական կատեգորիաներ, որի պատճառով գրականության մեջ դրանք ոչ միշտ են սահմանազատվում. յուրաքանչյուր սուբյեկտիվ իրավունքի հիմքում ընկած է այս կամ այն շահը. օրինական շահերը մեծամասամբ միջնորդավորված են կոնկրետ սուբյեկտիվ իրավունքներով: Ուստի, սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունը միաժամանակ հանդիսանում է օրինական շահի պաշտպանություն: Սակայն, ի տարբերություն օրինական շահի, սուբյեկտիվ նյութական իրավունքը, որպես դատական պաշտպանության առարկա, ենթադրում է իրավահարաբերության մասնակցի հնարավոր վարքագծի բավականաչափ հստակ որոշում:

Չետևում է, որ օրենսդիրը, օգտագործելով «իրավունք», «օրինական շահ», «ազատություն» եզրույթները, նկատի ունի միևնույն կարգի իրավական երևույթներ, սակայն հնարավոր վարքագծի հստակեցման տարբեր աստիճաններով, ու դատական պաշտպանության առարկան բնութագրելու համար իրավունքները, ազատությունները և օրինական շահերը կարող են անվանվել մեկ միասնական եզրույթով՝ իրավունքներ:

Վերադառնալով հայց հարուցելու իրավունքի նախադրյալների հիմնախնդրին՝ հարկ է նշել, որ ըստ դատավարական ուսմունքի՝ գործ հարուցելու փուլում իրավաբանական շահագրգռվածության ստուգման անհրաժեշտություն չկա. անձին շահագրգիռ ճանաչելու համար բավարար է հայցադիմումում նշումն այն մասին, որ այդ անձը գտնում է, որ իր սուբյեկտիվ

---

<sup>106</sup> Տե՛ս Жилин Г. А., նույն տեղում:

իրավունքը, ազատությունը կամ օրինական շահը խախտվել կամ վիճարկվում է: Այսինքն՝ իրավաբանական շահագրգռվածության առկայությունը հայց հարուցելիս միայն ենթադրվում է: Իսկ թե իրականում առկա՞ է, արդյոք, այդ իրավունքը, դատարանը կարող է ստուգել և գնահատել ոչ թե հայցադիմումը վարույթ ընդունելու ժամանակ, այլ միայն դատաքննության արդյունքում: Գործի քննության արդյունքում իրավաբանական շահագրգռվածության բացակայությունը հիմք կարող է հանդիսանալ միայն ներկայացված պահանջները մերժելու համար:

Այս տրամաբանության վրա է հիմնված նաև հայրենական քաղաքացիադատավարական օրենսդրությունը: Եվ եթե անգամ հայց է հարուցում նյութաիրավական շահագրգռվածություն չունեցող ոչ պատշաճ հայցվորը, ապա այդ հանգամանքը նույնպես հիմք չի կարող հանդիսանալ հայցի ընդունումը մերժելու համար /ԼՂՀ գործող օրենսդրությամբ դա արագացված դատաքննություն կիրառելու հիմք կարող է հանդիսանալ/:

«Շահագրգիռ անձ» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանն անդրադարձել է ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ: «Համաձայն ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձը դատարան դիմելու իր իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին կետը դատարան դիմելու իրավունք-

քը վերապահել է շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են կամ կարող են խախտվել», - նշված է այդ որոշման մեջ:

Սահմանադրական դատարանը միաժամանակ նշել է, որ «շահագրգիռ անձ» եզրույթը գնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն<sup>107</sup>:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշման համաձայն՝ շահագրգռվածությունը դատարան ներկայացված որևէ պահանջի քննության նախապայման է, ուստի դատարանը պետք է պարզի բոլոր քննվող գործերով հայցվորի շահագրգռվածության հարցը: Դատարանը պետք է պարզի, թե՝ 1/ հայցվորի ո՞ր իրավունքներն են իրականում խախտվել և ի՞նչ անբարենպաստ հետևանքների են հանգեցրել այդ խախտումները, 2/ ներկայացված հայցի նպատակն, արդյո՞ք, իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու վերականգնումն է, և հնարավո՞ր է, արդյո՞ք, ընտրված միջոցով պաշտպանել կամ վերականգնել հայցվորի իրավունքները կամ, համապատասխան դեպքերում, նրան պատճառված վնասը

---

<sup>107</sup> Տե՛ս «Քաղաքացի Նինա Ղազարյանի և այլոց դիմումի հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողանասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդատու» բառից հետո՝ ամբողջությամբ և 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՊ- 747 որոշումը:

փոխհատուցել<sup>108</sup>:

Այսպիսով, քաղաքացիական դատավարությունում իրավաբանական շահագրգռվածությունը հայց հարուցելու իրավունքի ինքնուրույն նախադրյալ չի հանդիսանում: Իր իրավունքի պաշտպանության պահանջով դատարան դիմած անձի մոտ իրավաբանական շահագրգռվածությունը սոսկ ենթադրվում է, դրա համար էլ գործի հարուցման փուլում իրավաբանական շահագրգռվածության առկայության կամ բացակայության հարցը դատարանը չի պարզում ու չի գնահատում: Քաղաքացիական դատավարությունում դա հնարավոր է ոչ թե գործի հարուցման փուլում, որի տևողությունը գործող օրենսդրությամբ երեք օր է՝ հայցադիմումն ստանալու օրվանից /ՔԴՕ 80 հոդվ. 3-րդ կետ/, այլ դատաքննության փուլում՝ ոչ միայն դատավարական, այլև նյութաիրավական նորմերի կիրառման արդյունքում<sup>109</sup>:

Այժմ այն մասին, թե օրենսդիրը վարչական դատավարությունում իրավաբանական շահագրգռվածությանը տվե՞լ է, արդյոք, դատարան դիմելու իրավունքի նախադրյալի նշանակություն:

ՎԴՕ 3-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունք վերապահում է յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի, ով համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար ան-

<sup>108</sup> Տե՛ս Ատիխտինգ Ադմինիստրատենկանտոր Ֆայնենշլ Փերֆորմանս Դոլդինգս հիմնադրամի և մյուսների հայցով ԵԱՔԴ/1494/02/10 քաղ. գործով ԴԴ վճռաբեկ դատարանի 14.10. 2011թ. որոշումը: Հատկանշական է, որ այդ գործով հայցվորների մոտ իրավաբանական շահագրգռվածության բացակայության հիմքով հայցը մերժվել է արագացված դատաքննության արդյունքում:

<sup>109</sup> Տ.Վ.Սախնովայի արտահայտությամբ՝ եթե կոնկրետ դեպքում դատարան դիմելու օրինական նախադրյալներն առկա են, ապա տվյալ անձը համարվում է ՔԴՕ 2-րդ հոդվածի իմաստով շահարգիչ անձ, հետևաբար՝ դատավարությունը /գործը/ պետք է հարուցվի /տե՛ս Сахнова Т.В. Курс гражданского процесса: теоритические начала и основные институты. М., «Волтер Клувер», 2008, <https://clck.ru/AQUke/>:



ծանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները: Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը դատարան դիմելու իրավունք կոնկրետ գործերով վերապահում են կոնկրետ սուբյեկտներին: ՎԴՕ 72-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ հայցադիմումը պետք է բովանդակի նաև հայցվորի պահանջի իրավական հիմքերը, իսկ 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

Ի դեպ, ՎԴՕ վերոնշված դրույթի կիրառման դատական պրակտիկան վկայում է ԼԴՀ դատարանների կողմից դրա հակասական մեկնաբանման և կիրառման մասին: Խնդիրը բարդանում է նաև նրանով, որ գործի վարույթը կարճելու՝ ՎԴՕ 90-րդ հոդվածում նախատեսված հիմքերի շարքում այդ հիմքը նշված չէ: ՀՀ նոր ՎԴՕ-ում այդ խնդիրն արդեն կարգավորված է /96 հոդվ. 1-ին մասի 9-րդ կետ/:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ վարչական հայցերի առնչությամբ արձանագրել է, որ «օրենսդիրը, նախատեսելով վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը, նրանց՝ դատարան դիմելու իրավունքի իրականացումը յուրաքանչյուր դեպքում պայմանավորել է որոշակի իրավական նախադրյալների, այն է՝ «իրավական շահի» առկայությամբ: Ընդ որում, յուրաքանչյուր դատավարական սուբյեկտի պարագայում այն կրում է իրեն ներհատուկ բնույթ: Նրանց «իրավական շահը», կախված գործի փաստական հանգամանքներից, ինչպես նաև կոնկրետ սուբյեկտի իրավական

կարգավիճակից, կրում է անհատականացված, կոնկրետ հասցեավորված բնույթ, և դրա առկայությունը յուրաքանչյուր դեպքում ենթակա է պարտադիր բացահայտման վարչական դատավարության՝ հայցադիմումի ընդունելիության փուլում»<sup>110</sup>:

Նույն որոշման մեջ սահմանադրական դատարանը, վերլուծելով հայցադիմումի ընդունումը մերժելու՝ ՎԴՕ 79-րդ հոդվածով սահմանված հիմքերը, նաև արձանագրել է, որ իրենց իրավական բնույթով դրանք լուծում են իրավասուբյեկտության խնդիր<sup>111</sup>, և հստակեցնում են այն պայմանները, որոնց առկայությունն օրենքի ուժով անհնարին է դարձնում տվյալ հայցադիմումի հիման վրա վարչական դատավարության իրականացումը: Ըստ նշված որոշման՝ «Դատարանը վարչական դատավարության հիշյալ փուլում պետք է իրավական գնահատական տա, թե արդյո՞ք հայցվորն իրավասու է դիմել դատարան, արդյո՞ք առկա է նրա մոտ դատարան դիմելու իրավական պահանջ, արդյո՞ք հայցվորը կարող է հանդիսանալ խախտման օբյեկտ հանդիսացող իրավունքի կրող: «Սահմանադրական դատարանն ինքնանպատակ չի համարում այն հանգամանքը, որ օրենսգրքի վիճարկվող դրույթում օգտագործված է «ակնհայտորեն» բառը:

<sup>110</sup> Տե՛ս «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի ապրիլի 17-ի ՍԴՈ-1022 որոշումը:

<sup>111</sup> Այս կապակցությամբ Ռ.Գ Պետրոսյանը նշել է. «Տեսական գրականության մեջ օգտագործվում է, այսպես կոչված, «իրավասուբյեկտություն» կատեգորիան, որի տակ հասկացվում է իրավունակության և գործունակության երկմիասնությունը: Մինչդեռ, ո՛չ գործող օրենսդրությունը և ո՛չ էլ քաղաքացիական գործերի լուծման դատական պրակտիկան այդ եզրույթը չեն օգտագործում: Հետևաբար՝ այդ կատեգորիան հազիվ թե գոյություն ունի» /տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., նշվ. աշխ., էջ 137/:

Վերջինս վկայում է այն մասին, որ օրենսդիրը հայցադիմումի ընդունելիության փուլում բացառում է վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար նյութական իրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի քննության առարկա դարձնելը: ...Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառը ենթադրում է, որ առանց նյութական իրավունքի խախտման փաստի բացահայտման կասկածից վեր է տվյալ իրավունքը հայցվորին չպատկանելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառի ամրագրմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հայցադիմումի ընդունելիության փուլում ստուգելու ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին պատկանելու հանգամանքը, այսինքն՝ հայցվորի՝ «չահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը»<sup>112</sup>:

ՀՀ սահմանադրական դատարանը մեկ այլ որոշմամբ հասարակական կազմակերպությունների առնչությամբ վերստին արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքները խախտվել են: Միևնույն ժամանակ, «հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը

<sup>112</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշումը:

շահագրգիռ /կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված/ հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով *actio popularis* բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: ...Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում՝ դատական պաշտպանության արդյունավետությանը, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններ ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը»<sup>113</sup>:

Վերոնշյալ մոտեցումներին համահունչ է ձևավորված դատական պրակտիկան<sup>114</sup>:

Այսպիսով, ի տարբերություն քաղաքացիական դատավարության, անձը վարչական դատավարության կարգով կարող է դի-

---

<sup>113</sup> Տե՛ս «Հելսինկյան քաղաքացիական վեհաժողովի «Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտված» բառից հետո «նրա» արտահայտության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 7-ի ՍԴՈ-906 որոշումը:

<sup>114</sup> Տե՛ս, օրինակ, Լյուբով Փիլոյանի հայցով ՎՊ/2085/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04. 2015թ. որոշումը:

մել դատարան, եթե ունի իրական իրավունքներ, եթե խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա իրավունքները: Օրենսդիրը դատարանին պարտավորեցնում է վարչական հայցը վարույթ ընդունելու փուլում ուսումնասիրել և գնահատել նաև այն հարցը, թե հայցադիմում ներկայացրած անձը դրա իրավունքն ակնհայտորեն ունի<sup>15</sup>, թե ոչ, և եթե հայցադիմում ներկայացնելու իրավունք չունենալը կոնկրետ դեպքում ակնհայտ է, ապա դատարանի պարտականությունն է մերժել հայցադիմումի ընդունումը: Իսկ եթե հայցադիմումը վարույթ ընդունելիս առկա չէ «ակնհայտություն», ապա հայցադիմումն ընդունվում է վարույթ և այդ հարցի հետագա պարզումն իրականացվում է դատաքննության ընթացքում: Հետևաբար՝ հայրենական վարչադատավարական օրենսդրությամբ իրավաբանական շահագրգռվածությունը համարվում է հայց հարուցելու իրավունքի նախադրյալ: Ուստի, գործը հարուցելուց հետո իրավաբանական շահագրգռվածության բացակայությունը բացահայտվելու իրավական հետևանքը պետք է լինի ոչ թե հայցը մերժելը, այլ գործի վարույթը կարճելը, ինչն անհրաժեշտ էր ամրագրել ԼԴՀ ՎԴՕ-ում /ՀՀ նոր ՎԴՕ-ում այդ հարցն արդեն լուծվել է/:

Դատական պրակտիկայում և տեսության մեջ որոշ դեպքերում ոչ պատշաճ հայցվորը հանիրավի նույնացվում է այլ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության հայց ներկայացրած և դատավարական կոնկրետ իրավունակություն չունեցող սուբյեկտների հետ<sup>15</sup>: Մինչդեռ, ինչպես հայտնի է, ոչ պատշաճ կողմերն այն անձինք են, ում վերաբերյալ գործի հանգամանքներով ժխտվել է այն հանգա-

---

<sup>15</sup> *Տե՛ս, օրինակ, Щеглов В.Н. Иск о судебной защите гражданского права. Под ред. Осокиной Г.Л., 62-68 էջերը, Власов А.А. Гражданское процессуальное право: М.: ТК Велби, 2004, էջ 208:*

մանքը, որ նրանք հանդիսանում են վիճելի իրավունքների ու պարտականությունների կրողներ՝ վիճելի իրավահարաբերության սուբյեկտներ: Եվ ընդհակառակը, ում վերաբերյալ գործի հանգամանքներով ենթադրվում է, որ հենց նա է հանդիսանում վիճելի իրավահարաբերության սուբյեկտ, կոչվում է պատշաճ կողմ: Այսինքն՝ ոչ պատշաճ հայցվորն օժտված է հայց հարուցելու դատավարական իրավունակությամբ, սակայն նրան չի պատկանում վիճելի սուբյեկտիվ նյութական իրավունքը /պաշտպանություն ստանալու իրավունքը/: Կողմի ոչ պատշաճ լինելը գործող օրենսդրությամբ հիմք չի հանդիսանում ոչ միայն հայցադիմումի ընդունումը մերժելու, այլև հայցադիմումը վերադարձնելու համար. քաղաքացիական դատավարությունում ոչ պատշաճ կողմը փոխարինվում է պատշաճ կողմով: Մինչդեռ, այլ անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության համար դատարան դիմող սուբյեկտների կոնկրետ քաղաքացիական դատավարական իրավունակության բովանդակությունը, ինչպես արդեն նշվել է, բխում է օրենքով ամրագրված նրանց իրավասությունից: Հետևաբար, եթե նրանք դատարան դիմեն հակառակ իրենց կոնկրետ դատավարական իրավունակության, երբ կոնկրետ պահանջով դատարան դիմելու իրավունք օրենքով նրանց վերապահված չէ, ապա նման պահանջով նրանք չեն կարող հայցվոր լինել, ինչը հիմք է հանդիսանում հայցադիմումի ընդունումը մերժելու կամ քաղաքացիական գործի վարույթը կարճելու համար՝ վեճը դատարանին ենթակա չլինելու՝ ԼԴՀ ՔԴՕ 81-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի ու 99-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Ինչպես իրավացիորեն նշվում է գրականության մեջ, եթե իրավաբանական շահագրգռվածությունը հայց հարուցելու իրավունքի նախադրյալ հանդիսանար, ապա կստացվեր, որ դատավորը պետք է մերժի ոչ պատշաճ հայցվորի հայցադիմումի ընդունումը, ինչը

հնարավոր չէ<sup>116</sup>:

Ըստ գործող օրենսդրության՝ կողմերի գործունակությունը հայց հարուցելու իրավունքի նախադրյալ չի համարվում, որովհետև անգործունակների դատավարական իրավունքներն ու պարտականությունները կարող են իրականացնել նրանց օրինական ներկայացուցիչները:

**Վեճի ենթակայությունը դատարանին:** ՔԴՕ-ն ենթակայության և ընդդատության հասկացությունների բովանդակությունը չի բացահայտում: Ըստ քաղաքացիական դատավարության իրավունքի տեսության՝ ենթակայությունը գործերի հատկանիշ /իրավահարաբերությունների բնույթ/ է, որի ուժով դրանք ենթակա են քննության և լուծման որոշակի իրավասու մարմինների կողմից: Այլ կերպ ասած՝ ենթակայությունը նախ՝ դատարանի և այլ պետական մարմինների, դատարանի և հասարակական կազմակերպությունների, դատարանի և միջնորդ դատարանի /առևտրային արբիտրաժի/, իսկ ապա՝ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների առարկայական իրավասության սահմանազատման արդյունք է քաղաքացիական գործերի քննության և լուծման բնագավառում<sup>117</sup>: Քանի որ ենթակայության կանոնները թույլ են տալիս որոշել այն գործերի շրջանակը, որոնք քննվում են այս կամ այն մարմնի կողմից, դրա համար էլ ենթակայությունն ընդունված է դիտարկել նաև որպես առարկայական իրավասության հոմանիշ: Ընդդատությունը դատավարական ինստիտուտ, դատավարական նորմերի համակցություն է, որը կարգավորում է դատարանին ենթակա բոլոր քաղաքացիական գործերի բաշխումը դատական համակարգի

<sup>116</sup> Տե՛ս, օրինակ, *Гражданское процессуальное право. Под ред. Шакарян М.С. М.: ТК Велби. Изд. "Проспект", 2004, էջ 209:*

<sup>117</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., *նշվ. աշխ.*, էջ 110:

առաջին ատյանի կոնկրետ դատարանների միջև<sup>118</sup>: Այսինքն՝ ընդդատության կանոնների օգնությամբ որոշվում են ընդհանուր իրավասության դատարանների համակարգում կոնկրետ դատարանների իրավասությունները՝ արդեն իսկ դատարանի ենթակայությանը հանձնված իրավաբանական գործերը քննելու և լուծելու հարցում: Ենթակայության և ընդդատության վերաբերյալ հիմնականում այս դրույթն է արտացոլված հայրենական քաղաքացիադատավարական և վարչադատավարական օրենսդրությունում:

Դատավարագիտության տեսության մեջ տեղ է գտել նաև այլ դիրքորոշում: Այսպես, Ե.Վ. Վասկովսկին ժամանակին գրել է, որ ենթակայության հատկանիշի միջոցով, ըստ էության, տարանջատվում են իրավաբանական գործերի քննության և լուծման կապակցությամբ մի կողմից՝ դատարանի, մյուս կողմից՝ այլ պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների իրավասությունները, իսկ ընդդատության ինստիտուտը, անմիջականորեն ածանցվելով ենթակայության ինստիտուտից, կարգավորում է դատարանին ենթակա գործերի բաշխումը դատական համակարգի ներսում, այդ թվում՝ ինչպես ընդհանուր իրավասության դատարանների, այնպես էլ ընդհանուր իրավասության դատարանների և մասնագիտացված դատարանների միջև<sup>119</sup>:

Հարկ է նշել, որ վերջին ժամանակներս ԲԴՕ-ում կատարված

<sup>118</sup> Տե՛ս, օրինակ, Պետրոսյան Ռ.Գ., *նշվ. աշխ.*, 108-119 էջերը:

<sup>119</sup> Տե՛ս *Васьковский Е.В. Курс гражданского процесса. М. 1913, էջ 580; Васьковский Е.В. Учебник гражданского процесса. М. 2003, էջ 149: Ենթակայության և ընդդատության ինստիտուտների մասին մանրամասն տե՛ս Яков В.В. Юридические факты в цивилистическом процессе, М. Берлин Информационик Медиа 2012, 288-340 էջերը: Տե՛ս նաև Խունդկարյան Ե, Ղարսյան Ա. Ընդդատության ինստիտուտի որոշ հիմնախնդիրները ՀՀ վարչական և քաղաքացիական դատավարություններում, Դատական իշխանություն, օգոստոս-սեպտեմբեր, 2016թ.:*



փոփոխություններում հիմնականում օգտագործվում է «առարկայական ընդդատություն» եզրույթը /միտումն առկա է նաև ՎԴՕ-ում/: Ռ.Գ. Պետրոսյանն իրավացիորեն նշում է, որ ընդհանուր իրավասության և վարչական դատարանների ենթակայության վերաբերյալ ԲԴՕ-ում սահմանված ենթակայության ընդհանուր կանոնները ներկայումս, դժբախտաբար, դարձել են առարկայական ընդդատության կանոններ, ինչը ենթակայության և ընդդատության իրավական բուլորովի տարբեր ինստիտուտները միմյանց հետ շփոթելու արդյունք է<sup>120</sup>: Բարեբախտաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագծով<sup>121</sup> ենթակայության ու ընդդատության ինստիտուտներն ունեն հստակ տարանջատում:

Այսպիսով, ենթակայությունը իրավաբանական գործերի լուծումը տարբեր յուրիսդիկցիոն մարմինների միջև բաշխելու գործառույթ իրականացնող միջնուղային ինստիտուտ է: Եթե դատավարական իրավունակությունը որոշում է հայց հարուցելու իրավունքի սուբյեկտին, ապա ենթակայությունը որոշում է այդ իրավունքի իրացման սահմանները:

Ինչպես հայտնի է, հայրենական օրենսդիրն իրավաբանական գործերը լուծելու իրավասությամբ օժտել է ոչ միայն դատական մարմիններին, այլև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման տարբեր /ֆինանսական, հողային, հարկային, մաքսային և այլն/ մարմիններին, նոտարներին, նոտարական գործողություններ կատարելու իրավասությամբ օժտված պաշտոնատար անձանց, հասարակական կազմակերպություններին, միջնորդ դատարանին և այլն: Մի շարք իրավական հարցեր լու-

<sup>120</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., նշվ. աշխ., 112, 268 էջերը:

<sup>121</sup> [http://advocates.am/images/pdf\\_files/qax\\_dat\\_or\\_26.11.2012.pdf](http://advocates.am/images/pdf_files/qax_dat_or_26.11.2012.pdf)

ծում են տնտեսական ընկերությունների և ընկերակցությունների, կոոպերատիվների, բաժնետիրական ընկերությունների և առևտրային այլ կազմակերպությունների ընդհանուր ժողովները կամ այլ մարմինները: Օրինակ՝ բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝ 1/ ընկերության կանոնադրությունը և նրա կանոնադրական կապիտալի չափը փոփոխելը, 2/ ընկերության տնօրենների խորհրդի /դիտորդ խորհրդի/ և վերստուգող հանձնաժողովի /վերստուգողի/ անդամների ընտրությունն ու նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը, 3/ ընկերության գործադիր մարմիններ կազմավորելը և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը, եթե ընկերության կանոնադրությամբ այդ հարցերի լուծումը վերապահված չէ տնօրենների խորհրդի /դիտորդ խորհրդի/ իրավասությանը, 4/ ընկերության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները, շահույթները և վնասների հաշիվները հաստատելն ու նրա շահույթները և վնասները բաշխելը, 5/ ընկերությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշում կայացնելը /Քաղ. օր. 115 հոդվ. 1-ին մաս/:

Վարչական ձևով ընդունված որոշումը կարող է բողոքարկվել դատարան /Քաղ. օր. 13 հոդվ./: Իրավունքի մասին վեճերի լուծումը համարվում է դատական իշխանության մենաշնորհը:

Ինչպես հայտնի է, գործող օրենսդրությամբ ծնողները կարող են կնքել ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն /Ընտ. օր. 68 հոդվ. 1-ին մաս/: Նույն օրենսգրքի 87-րդ հոդվածի համաձայն՝ ալիմենտ վճարելու վերաբերյալ (ալիմենտի չափի, վճարման պայմանների ու կարգի մասին) համաձայնությունը կնքվում է ալիմենտ վճարելու պարտավոր անձի և խնամակալի (ալիմենտ ստացողի) միջև, իսկ ալիմենտ վճարելու պարտավորություն ունեցող անձի և (կամ) ալիմենտ ստացողի անգործու-

նակ լինելու դեպքում՝ այդ անձանց օրինական ներկայացուցիչների միջև: Սահմանափակ գործունակ անձինք ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն են կնքում իրենց օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ: Օրենսդիրը նման կարգավորմամբ, ըստ երևույթին, նպատակ է ունեցել թեթևացնելու դատարանների ծանրաբեռնվածությունը: Գործնականում, սակայն, այդ նորմը չի կիրառվում, քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼԴՀ օրենքը կատարման նման հիմք չի նախատեսում, և շահագրգիռ անձինք դիմում են դատական պաշտպանության:

Ընտ. օր. 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝ 1) բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը, 2) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում կատարելուց, 3) ամուսինները ցանկանում են փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել դատական կարգով: Դատական պրակտիկայում դժվարություններ են առաջանում՝ կապված նման հայցադիմումների ընդունման հետ: Մեր կարծիքով՝ ճիշտ կլիներ, որ ամուսնալուծության հայցադիմում ներկայացնելուց հայցվորը հիմնավորի ոչ դատական կարգով ամուսնալուծության անհնարինությունը:

Եթե գործը ենթակա չէ դատարանին, ապա անձը հայց հարուցելու իրավունք չունի, իսկ դատարանն իրավասու չէ խախտել այլ մարմինների իրավասությունը և լուծել նրանց վերապահված գործեր: Դատական պրակտիկայում, օրինակ, ոչ գրավադրված գույքի նկատմամբ բռնագանձում տարածելու պահանջը դատարանին ենթակա չի համարվում այն պատճառաբանությամբ, որ այդ հարցը կարգավորված է «Դատական ակտերի հարկադիր

կատարման մասին» ԼՂՀ օրենքով<sup>122</sup>:

Որոշ դեպքերում էլ, ընդհակառակը, դատարանները վարույթ են ընդունում իրենց իրավասությանը չվերաբերող հայցեր:

Դատական ենթակայությունն այն գործերի շրջանակն է, որոնց քննությունը և լուծումը հանձնված է դատական մարմինների իրավասությանը: Ըստ այդմ, դատական ենթակայության հիմնախնդիրը կապվում է տարբեր դատարանների իրավասությունների սահմանազատման հետ: Դատական իշխանությունը Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Յանրապետությունում իրականացվում է սահմանադրական, քաղաքացիական, վարչական և քրեական դատավարության ձևերով: ԼՂՀ Սահմանադրության 114-րդ հոդվածում բացահայտված է սահմանադրական դատավարության կարգով քննության ենթակա գործերի շրջանակը: Ներկայումս դատական ենթակայության հիմնախնդիրը գլխավորապես կապված է քաղաքացիական և վարչական գործերի ենթակայության հստակ տարանջատման հետ: ՎԴՕ 1-ին հոդվածում օրենսդիրը սահմանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը վարչական գործեր քննելու իրավասություն ունեցող ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում, ԼՂՀ վերաքննիչ դատարանում և ԼՂՀ Գերագույն դատարանում:

---

<sup>122</sup> Տե՛ս, օրինակ, ԸԻԴ/2221/02/2015 քաղաքացիական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 02.02.2016թ. վճիռը:

Նույն օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանում վարչական գործերով դատավարության կարգը սահմանվում է այդ օրենսգրքով և ԼՂՀ դատական օրենսգրքով, իսկ օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով այնքանով, որքանով դրա նորմերը իրենց էությանը կիրառելի են (mutatis mutandis) վարչական դատավարության նկատմամբ և չեն հակասում այդ օրենսգրքին և վարչական դատավարության էությանը: ՎԴՕ 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ 1/ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը, 2/ վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով, 3/ հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, ներառյալ՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը: Այլ խոսքով՝ վարչադատավարական են պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած իրավահարաբերությունները, որոնց կողմներից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտն է: Դատական պրակտիկայում, որպես հանրային իրավահարաբերությունների բնորոշ առանձնահատկություն, կարևորվել է նաև այն, որ հանրային իրավահարաբերությունների բովանդակությունը պետք է կազմի հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականաց-

ման պարտականությունը<sup>123</sup>:

Թեպետև ՔԴՕ-ն չի սահմանում քաղաքացիական դատավարության ձևով քննության և լուծման ենթակա գործերի շրջանակը /միայն սահմանում է, որ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են ԼԴՅ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին /15 հոդվ./, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ քաղաքացիական դատավարության կարգով ենթակա են քննության և լուծման մասնավոր իրավական բնույթի վեճերը, որոնց դեպքում իրավահարաբերության սուբյեկտները գտնվում են հավասար իրավական կարգավիճակում. նրանք միմյանց չեն ենթարկվում, նրանց հարաբերությունները «հորիզոնական» են, նրանց համար բնորոշ է կողմերի իրավահավասարությունն ինչպես նյութաիրավական, այնպես էլ դատավարական հարաբերություններում: Նման իրավահարաբերությունները բնորոշ են մասնավոր իրավունքի /քաղաքացիական, ընտանեկան, բնապահպանական և այլն/ ճյուղերի համար: Այսինքն՝ քաղաքացիական դատավարության ձևով պաշտպանվում են քաղաքացիական /լայն առումով/ իրավունքները:

Այսպիսով, օրենսդիրը քաղաքացիական և վարչական գործերը տարանջատում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի (հանրային կամ մասնավոր) իրավահարաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած հայցը, իսկ մի քանի փոխկապակցված հայցապա-

<sup>123</sup> Տե՛ս, օրինակ, ըստ հայցի «Վեստ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ ճանաչելու մասին թիվ ՎԴ/0830/05/14թ. վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22. 04. 2016 թ. որոշումը: Այդ մասին տե՛ս նաև Ե. Խունդկարյան, Ա. Ղարսյան: Ընդդատության ինստիտուտի իրավակարգավորման որոշ հիմնախնդիրները ՀՀ վարչական և քաղաքացիական դատավարություններում, «Դատական իշխանություն», օգոստոս-սեպտեմբեր, 2016, թիվ 8-9:

հանջների առկայության դեպքում՝ դրանցից հիմնականը, և ինչպիսիքն է իրավահարաբերության սուբյեկտային կազմը:

Գործնականում քիչ չեն այն վեճերը, որոնք կապված են դատական ենթակայության հետ: Բոլոր դեպքերում պետք է ելնել ցանկացած վեճ քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա լինելու կանխավարկածից: Քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չեն միայն այն պահանջները, որոնց քննության համար սահմանված է այլ դատական /սահմանադրատավարական, քրեատավարական, վարչատավարական/ կարգ<sup>124</sup>:

Արդեն իսկ նշվել է, որ հայցի առարկայի կազմում իրավունքի՝ օրենքով չնախատեսված եղանակ չի կարող ներառվել, հակառակ դեպքում հայցապահանջը /հայցը/ կհամարվի ոչ իրավական պահանջ, ինչն ընդհանրապես դատական պաշտպանության ենթակա չէ: Ուստի, մեր կարծիքով, օրենսդիրն այստեղ նկատի ունի նաև այն դեպքերը, երբ հայցվորի պահանջներն ընդհանրապես՝ և՛ դատական, և՛ այլ՝ ոչ դատական կարգով զուրկ են իրավական պաշտպանությունից, ոչ իրավական բնույթ ունեն: Օրինակ, Քաղ. օր. 1042-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց պահանջները՝ կապված ռիսկի վրա հիմնված խաղեր և գրազ /նոլեխաղեր/ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու հետ, ենթակա չեն դատական պաշտպանության, բացառությամբ այն անձանց պահանջների, ովքեր խաղերին կամ գրազին մասնակցել են խաբեության, բռնության, սպառնալիքի կամ իրենց ներկայացուցչի՝ խաղերի կամ գրազի կազմակերպչի հետ չարամիտ համաձայնության

<sup>124</sup> ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագիծը սահմանում է, որ քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի կամ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի:

գալու հետևանքով և այլն: Կամ ձևավորված դատական պրակտիկայի համաձայն՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու մասին հայցադիմումի ընդունումը մերժվում կամ գործի վարույթը կարճվում է ՔԴՕ 81-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և, համապատասխանաբար, 99-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ գործնականում այդ պահանջի ոչ իրավական լինելու պատճառով: Դատական ակտերում պատճառաբանվում է, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականն ընդամենը սեփականության իրավունքի գրանցման մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ է, և այդ փաստաթղթի անվավեր ճանաչելը չի հանգեցնում իրավական հետևանքների, քանի որ ուժի մեջ է մնում վարչական ակտը՝ անշարժ գույքի գրանցման մատյանի գրանցումը: Նույն հիմնավորմամբ դատարանին ենթակա չեն, օրինակ, ինքնական կառույցի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, մինչև ժառանգության բացվելը կտակն անվավեր ճանաչելու մասին պահանջները: Այս հետևությունը, ինչպես արդեն նշվել է, բխում է ՔԴՕ 2-րդ հոդվածի բովանդակությունից, համաձայն որի՝ շահագրգիռ անձն իրավունք ունի դիմել դատարան իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: Սակայն պահանջի ոչ իրավական բնույթի պատճառով հայցադիմումի ընդունումը մերժելը պետք է կատարվի մեծ զգուշությամբ, պահանջի ոչ իրավական բնույթը լրիվ ակնհայտ լինելու պարագայում, և եթե այդ փաստի պարզման համար դատավարական գործողությունների կատարում չի պահանջվում: Որևէ կասկածի դեպքում հայցադիմումի ընդունումը չպետք է մերժել: Հակառակ դեպքում կստացվի, որ գործի հարուցման փուլում, որտեղ լուծվում են դատավարական բնույթի հարցեր, դատավորն իր որոշմամբ որոշում է վիճելի իրավահարաբերության սուբյեկտների իրավունքների բովանդակությունը,



ինչն անթույլատրելի է այդ փուլում:

Ուշագրավ է, որ դատարանն իրավունք ունի ընդունել և քննել իրավաբանական փաստի հաստատման վերաբերյալ դիմումը, եթե փաստը դիմողի համար ունի իրավաբանական նշանակություն, այսինքն՝ տվյալ կոնկրետ դեպքում կարող է իրավական հետևանքներ առաջացնել /փոփոխել, դադարեցնել/ անձնական կամ գույքային իրավունքների բնագավառում /ՔԴՕ 173 հոդվ. 1-ին կետ/: Պարզելով, որ գործը ենթակա չէ դատարանին կամ հաստատման ենթակա փաստը դիմողի համար չի կարող առաջացնել այս կամ այն իրավական հետևանքները, դատավորը պարտավոր է մերժել դիմումի ընդունումը, իսկ վարույթ ընդունվելու դեպքում գործի վարույթը ենթակա է կարճման /ՔԴՕ 81 հոդվ. 1-ին կետի 1-ին ենթակետ, 99 հոդվ. 1-ին կետ/<sup>125</sup>:

Դատական պրակտիկան վկայում է, որ հայց հարուցելու իրավունքի իրականացման ժամանակ սխալներ թույլ են տրվում ինչպես հայց հարուցող սուբյեկտների, այնպես էլ դատարանների կողմից: Պատճառներից մեկն էլ, ինչպես արդեն նշվել է, ՔԴՕ 81-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի չափազանց ընդհանուր /ոչ հստակ/ ձևակերպումն է:

***Նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի, միջնորդ դատարանի՝***

<sup>125</sup> Այս մոտեցումը, մեր կարծիքով, գործնականում առկա է նաև վարչական դատավարությունում:

Այսպես, ըստ հայրենական նախադեպային իրավունքի՝ վարչական վիճարկման հայցի առարկայի նյութական օբյեկտ հանդիսացող վարչական ակտը, մասնավորապես, պետք է անմիջականորեն իրավական հետևանքներ առաջացնի իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայության կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար, հակառակ դեպքում՝ փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ, իսկ ներկայացված հայցապահանջը չի կարող ենթակա լինել դատարանին /տես. օրինակ, ԸԻԴ 0096/05/16թ. վարչական գործով ԼԴԳ Գերագույն դատարանի 14. 12. 2016թ. որոշումը/:

**օրինական ուժի մեջ մտած վճռի (պետք է լինի՝ դատական ակտի) բացակայությունը, բացի հայցից հայցվորի հրաժարվելու դեպքերում կայացված վճռի:** Նշված նախադրյալի գոյությունը պայմանավորված է նրանով, որ շահագրգիռ անձի կողմից ոչ միայն իրացվել է դատական պաշտպանության սուբյեկտիվ իրավունքը, այլև պահպանվել է գործի քննության ու լուծման՝ օրենքով նախատեսված ընթացակարգը, ու կայացվել է վճիռ: Օրինական ուժի մեջ մտնելուց հետո վճիռը ձեռք է բերում մի շարք հատկանիշներ, այդ թվում՝ բացառիկության հատկանիշ, ու, եթե անձը գտնում է, որ դատարանի վճիռն անհիմն կամ անօրինական է, ապա նա կարող է այդ վճիռը բողոքարկել սահմանված կարգով և ոչ թե նոր հայց հարուցել: Հայցերի կրկնակի քննությունն անթույլատրելի է, ինչպես որ անթույլատրելի է նույնական գործերով կրկնակի դատական ակտի կայացման հնարավորությունը:

Հայցերի նույնության տակ տվյալ դեպքում հասկացվում է ներկայացված հայցի առարկայի և հայցի հիմքի նույնությունն այն հայցի առարկայի և հայցի հիմքի հետ, որը կամ արդեն ըստ էության քննվել և լուծվել է առաջին ատյանի, վերադաս դատարանների ու միջնորդ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով կամ գտնվում է դատարանի վարույթում:

Այս ինստիտուտի օգնությամբ իրացվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով լուծված սկզբնական հայցին նույնական երկրորդ հայցի /գործի/ հարուցման, քննության և լուծման օրենսդրական արգելքը, ինչի շնորհիվ դատական ակտը դառնում է կայուն, ամրապնդվում է իրավակարգը և քաղաքացիական շրջանառությունը, բացառվում է նույն գործերով միմյանց հակասող դատական ակտերի կայացումը, վերջին հաշվով ապահովվում է իրավական պետությանը բնորոշ իրավական որոշակիու-

թյան սկզբունքի գործողությունը: Նույնության այս տեսակը, ինչպես արդեն նշվել է, տեսության մեջ ստացել է «հայցերի արտաքին նույնություն» անվանումը, քանի որ համեմատվում են երկու տարբեր հայցերի տարրերը և վեճի կողմերը, ի տարբերություն հայցի ներքին նույնության, երբ համեմատվում են ոչ թե տարբեր հայցերի, այլ նույն հայցի տարրերը տարբեր վիճակներում՝ հայց ներկայացնելու ժամանակ ու հաջորդող փուլերում:

Նույն իրավական հետևանքները գործնականում վրա են հասնում նաև օրինական ուժի մեջ մտած վճարման կարգադրության պարագայում: Ինչպես իրավացիորեն նշում է Ս.Գ. Մեղրյանը, իր նպատակային ուղղվածությամբ և մի շարք այլ հատկանիշներով վճարման կարգադրությունն ըստ էության չի տարբերվում գործնականում ըստ էության լուծող դատական ակտերից: Չնայած այն հանգամանքին, որ կարգադրության վարույթը հայցային ու մյուս հատուկ վարույթների համեմատ ինքնուրույն, պարզեցված վարույթ է և անմիջականորեն ուղղված չէ գործի փաստական հանգամանքները պարզելուն, այնուամենայնիվ, այն կատարում է գործը լուծող դատական ակտի գործառույթներ, քանզի վճարման կարգադրությամբ օրինական ուժի մեջ մտած վճարումը ստանալուց հետո վիճելի իրավահարաբերությունը դառնում է անվիճելի, կարգադրությամբ սահմանված դրամական պարտականությունը՝ ենթակա հարկադիր կատարման, ու միաժամանակ բացառվում է տվյալ պահանջով և միևնույն հիմքերով կրկին դատարան դիմելու հնարավորությունը, որի հետևանքով նախկինում վիճելի նյութաիրավական հարաբերությունը խիստ որոշակիանում է, ձեռք է բերում կայունություն և համապարտադիրություն<sup>126</sup>:

Քննարկվող հարցի կապակցությամբ Եվրոպական դատարան-

<sup>126</sup> Տե՛ս Մեղրյան Ս.Գ. Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, ԵՊՀ հրատարակչություն, Երևան-2010, էջ 65:

նը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մաս է իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մասն է իրավական որոշակիության սկզբունքը: Իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է *res judicata* /«լուծված գործ»/ սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքը պահանջում է, որպեսզի կողմերից ոչ մեկը չունենա իրավունք՝ պահանջելու վերջնական և կատարման համար պարտադիր դատական ակտի վերանայում՝ ուղղակի գործի կրկնակի քննության և գործով նոր ակտի կայացման նպատակով<sup>127</sup>:

Իրավական որոշակիության սկզբունքը, երաշխավորելով դատական ակտերի կայունությունը, միևնույն ժամանակ, թույլատրում է բացառություն այդ սկզբունքից՝ պայմանավորված էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքներով: Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայումը հենց դատավարության այն բացառիկ փուլն է, որը, գործի քննության պահին գոյություն ունեցած և հետագայում նոր երևան եկած կամ գործի քննությունից և լուծումից հետո առաջացած նոր հանգամանքների հաշվառմամբ, ուղղված է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության ստուգմանը<sup>128</sup>:

<sup>127</sup> Տես, օրինակ, *Ոչաբիխն ընդդեմ Ռուսաստանի, Նեյլուբինն ընդդեմ Ռուսաստանի գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի* 24.07.2003թ. և 02.11.2006թ. վճիռները:

<sup>128</sup> Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի մասին տես Պետրոսյան Ռ.Գ. *Աշխ.*, 538-545 էջերը: Մարկոսյան Տ. Ա. *Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2013:*

Քաղաքացիական գործի հարուցման փուլում հայցերի արտաքին նույնության կանոնի խախտման հետևանքով՝ ա/ հայցադիմումի ընդունումը մերժվում է /ՔԴՕ 81 հոդվ. 1-ին կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետեր, բ/ հայցադիմումը վերադարձվում է, եթե այլ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ /ՔԴՕ 82-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետ/:

Իսկ եթե հայցերի նույնության փաստը պարզվում է քաղաքացիական գործ հարուցելուց հետո, ապա դատարանը՝ ա/ կարճում է գործի վարույթը, եթե՝ 1. նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, բացառությամբ այդ օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի, 2. նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է միջնորդ դատարանի վճիռ, բացառությամբ դատարանի կողմից միջնորդ դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու դեպքի և բ/ հայցը թողնում է առանց քննության, եթե այլ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ /ՔԴՕ 93 հոդվ. 1-ին կետ/:

Գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան նաև հայցից հայցվորի հրաժարման ու կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատվելու դեպքերում, բացառությամբ այն դեպքի, երբ հայցվորը հայցից հրաժարվել է դատաքննության նախապատրաստական փուլում /ՔԴՕ 99 հոդվ. 6-րդ և 7-րդ կետեր, 100 հոդվ. 3-րդ կետ/:

Ուշագրավ է, որ օրինական ուժի մեջ մտած վճիռը բացառում է ոչ միայն նույնական հայցի հարուցումը, քննությունը և լուծումը, այլև վարչական վարույթի հարուցումը: Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի<sup>129</sup> 50-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում առկա է միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած դատական ակտ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տվյալ հիմքով վարչական վարույթը կարճելու դեպքում նույն հարցով վարույթի վերսկսում և համապատասխան վարչական ակտի ընդունում չի թույլատրվում:

Հայցերի նույնության վերոնշյալ կանոնն առաջին հերթին տարածվում է կողմերի վրա: Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կողմերը չեն կարող դատարան ներկայացնել նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով հայց: Ընդ որում, նշանակություն չունի, թե հայցը ներկայացվել է անձամբ հայցվորի<sup>օ</sup>, թե<sup>օ</sup> նրա ներկայացուցչի կողմից:

Հայցերի նույնությունը պահպանվում է, եթե կողմերը փոխում են իրենց տեղերը: Նման դեպքում նոր հայցը, որում նախկին պատասխանողը դառնում է հայցվոր, իսկ հայցի առարկան ու հիմքը մնում են անփոփոխ, համարվում է նախկինին նույնական:

Հասկանալի է, որ հայցերի նույնությունը պահպանվում է իրավահաջորդության դեպքում /հայցվորի կամ պատասխանողի կողմում/, քանի որ իրավահաջորդը փոխարինում է իրավանախորդին, և իրավանախորդի կողմից կատարված բոլոր դատավարական գործողությունները պարտադիր են իրավահաջորդի համար: Այսինքն՝ տվյալ դեպքում իրավահաջորդությունը իրավաբանական փաստ չի համարվում:

---

<sup>129</sup> Ընդունվել է 12.06.2008 թ.:

Մեր կարծիքով՝ ըստ սուբյեկտային կազմի հայցերի նույնությունը պահպանվում է նաև ՔԴՕ 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության ուժով այլ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների կողմից հայց հարուցվելու դեպքում, եթե արդեն իսկ առկա է նյութական իրավահարաբերության սուբյեկտի հայցով դատական ակտ: Իսկ երբ երկրորդ հայցը հարուցվում է նյութական իրավահարաբերության սուբյեկտի կողմից, ապա, մեր կարծիքով, հայցերի նույնությունն առկա է, եթե նյութական իրավահարաբերության սուբյեկտն առաջին գործով ներգրավված է եղել որպես հայցվոր /ՔԴՕ-ն այս հարցերը չի կարգավորել/:

Հայցերի նույնությունը որոշելու հաջորդ չափանիշը վերաբերում է հայցի առարկային ու հայցի հիմքին:

Դատական պրակտիկայում հազվադեպ չեն շահագրգիռ անձանց կողմից հայց հարուցելու իրավունքի չարաշահման դեպքերն ու դատական սխալները՝ կապված հայցի առարկայի հատկանիշով հայցերի նույնությունը որոշելու հետ:

Այսպես, 2011 թվականին Լևոն Ասրյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Ռազմիկ Յուզբաշյանի, ԼԴՀ արդարադատության նախարարության Ասկերանի նոտարական տարածքի նոտարի, ԼԴՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ պահանջելով անվավեր ճանաչել Լևոն Ասրյանի և Ռազմիկ Յուզբաշյանի միջև 2004 թվականի մարտի 22-ին կնքված բնակելի տան նվիրատվության պայմանագիրը, իսկ որպես անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել այդ գույքի նկատմամբ Ռազմիկ Յուզբաշյանի սեփականության իրավունքի գրանցումը: ԼԴՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունիսի 19-ի վճռով հայցը մերժվել է: Դատարանը հաստատված է համարել,

որ վեճի առարկա գործարքն առոչինչ չի համարվում, դասվում է վիճահարույց գործարքների շարքին ու կիրառել է հայցային վաղեմությունը: ԼՂՀ վերաքննիչ դատարանի կողմից նշված վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ, ԼՂՀ Գերագույն դատարանը Լևոն Ասրյանի վճռաբեկ բողոքը վերադարձրել է: 2013 թվականին Լևոն Ասրյանը վերստին ներկայացրել է հայց՝ պահանջելով կիրառել «առոչինչ նվիրատվության պայմանագրի անվավերության հետևանքները», այն է՝ անվավեր ճանաչել նույն բնակելի տան նկատմամբ Ռազմիկ Յուզբաշյանի սեփականության իրավունքի գրանցումը: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունիսի 19-ի վճռով հայցը բավարարվել է: ԼՂՀ վերաքննիչ դատարանի կողմից այդ վճիռը թողնվել է անփոփոխ: ԼՂՀ Գերագույն դատարանն իր 2014 թվականի հունիսի 5-ի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կարճել է այն հիմնավորմամբ, որ երկու գործերով փաստորեն նույնն են վեճի կողմերը, հայցի առարկան և հայցի հիմքը: Չետևաբար՝ հիմնավոր է վճռաբեկ բողոքի փաստարկն այն մասին, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանը, չկարճելով գործի վարույթը, թույլ է տվել դատական սխալ<sup>130</sup>:

Չայցերի նույնությունը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ «հայցի հիմք» օրենսդրական հասկացությունն իր մեջ ընդգրկում է միայն հայցվորի հայտարարած իրավաբանական փաստերը: Չայցվորի ցույց տված իրավական նորմը /նորմերը/, հայցվորի իրավական և փաստական հիմնավորումները հայցի հիմք չեն համարվում, հայցի նույնության կորուստ չեն առաջացնում: Չակառակ դեպքում, ամեն անգամ հայցադիմումում այս կամ այն փաստը /ընդհանրապես իրավաբանական նշանակություն չունեցող կամ տվյալ գործով իրավաբանական նշանակու-

<sup>130</sup> Տե՛ս ԸԻԴ 0868/02/13թ. քաղաքացիական գործով ԼՂՀ Գերագույն դատարանի 05. 06. 2014թ. որոշումը:



թյուն չունեցող/ կամ իրավական նորմը կամ իրավական փաստարկն ավելացնելը, փոփոխելը կամ ուղղելը՝ առանց հայցի հիմք կազմող իրավաբանական փաստերը փոփոխելու, կոփտարկվի իբրև նոր հայցի ներկայացում կամ հայցի փոփոխում: Դատական պրակտիկայում հաճախակի են շահագրգիռ անձանց կողմից հենց այս հարցում չարաշահումները:

Այսպես, Ռեմնա Աբադյանը, հայց հարուցելով դատարան ընդդեմ իր դստեր՝ Մարիետա Գրիգորյանի և ԼԴՅ արդարադատության նախարարության Ստեփանակերտի նոտարական տարածքի թիվ 1 նոտարական տարածքի պետնոտար Ն.Գրիգորյանի, խնդրել է անվավեր ճանաչել բնակարանի նվիրատվության պայմանագիրն այն հիմքով, որ պայմանագիրը կնքվել է մոլորության ազդեցության տակ. Մարիետա Գրիգորյանն իրեն համոզել է, որ կնքվում է ձևական պայմանագիր, որպեսզի հարսը չկարողանա հավակնել բնակարանին: Ըստ որում, հայցվորը հայցադիմումում մատնանշել է Քաղ. օր. 304-րդ, 305-րդ, 312-րդ, 601-րդ հոդվածները, 313-րդ հոդվածի 1-ին մասը: ԼԴՅ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի վճռով Ռեմնա Աբադյանի հայցը մերժվել է: Նշված վճռի դեմ բերված Ռեմնա Աբադյանի վերաքննիչ բողոքը ԼԴՅ վերաքննիչ դատարանի կողմից մերժվել է, իսկ վճռաբեկ բողոքը ԼԴՅ Գերագույն դատարանը վերադարձրել է: 2014 թվականին Ռեմնա Աբադյանը նույն իրավաբանական փաստերի հիման վրա նույն կողմերի դեմ ներկայացրել է նույն պահանջը, սակայն այս անգամ հայցադիմումում ավելացրել է Քաղ. օր. 600-րդ հոդվածը: Չայցերի նույնությունն ակնհայտ է, սակայն առաջին ատյանի դատարանը գործը քննել է ըստ էության ու հայցը մերժել<sup>131</sup>:

---

<sup>131</sup> Տե՛ս ԸԻԴ 0195/02/14թ. քաղաքացիական գործով ԼԴՅ առաջին ատյանի դատարանի 23. 04. 2014թ. վճիռը:

Առկա են նաև դեպքեր, երբ ներկայացված հայցերը սխալմամբ են որակվում իբրև նույնական, ինչը դատական պաշտպանության իրավունքի իրացման հարցում խոչընդոտներ է ստեղծում: Հատկապես շատ զգույշ պետք է լինել, այսպես կոչված, տևող իրավահարաբերություններից բխող վեճերով, երբ նոր իրավաբանական փաստերի առաջացման հնարավորությունը պայմանավորված է ժամանակի ընթացքով, ու դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո, որպես կանոն, տեղի է ունենում հայցապահանջի հիմքում ընկած իրավաբանական փաստերի փոփոխություն, ինչը հնարավորություն է ընձեռում նույն հայցապահանջով վերստին հայց հարուցել:

Հայցերի նույնությունը որոշելիս հայցի հիմք կազմող իրավաբանական փաստերն անհրաժեշտ է տարբերել նաև ապացույցներից՝ իրավաբանական փաստերի մասին տեղեկություններից: Հայցի հիմքում դրված իրավաբանական փաստերը հիմնավորող ապացույցը տվյալ դատավարության շրջանակներում չներկայացվելու պարագայում նույն իրավաբանական փաստերի հիման վրա հայց ներկայացնելու դեպքում տվյալ ապացույցը ներկայացնելը չի կարող որակվել իբրև այլ հիմքով հայցի ներկայացում, իսկ հարուցված գործի շրջանակներում նոր ապացույց ներկայացնելը չի կարող որակվել իբրև հայցի փոփոխում:

Եթե հայցի փաստական հիմքն այլընտրանքային է, ապա որևէ հիմքով հայցը մերժելու դեպքում հայցվորը զրկված չէ այլընտրանքային այլ հիմքով նոր հայց ներկայացնելու իրավունքից: Այս դեպքում հայցերի արտաքին նույնությունը բացառվում է:

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ հայցը հիմնավորող փաստերը հայցն անհատականացնում են այն պայմանով, որ դրանք գոյություն ունեցած լինեն մինչև դատարանի կողմից դատական ակտ կայացնելը: Այդ պահից հետո առաջացած փաստերը կարող են հայցի նոր հիմք առաջացնել:

Եթե հայցադիմումն ընդունելու ժամանակ դատավորի մոտ կասկածներ են առաջանում հայցերի նույնության վերաբերյալ, ապա նա հայցադիմումը պետք է ընդունի վարույթ, որովհետև շատ դեպքերում միայն դատական նիստում հայցն ըստ էության քննելու արդյունքում է հնարավոր լինում վերջնականապես լուծել այդ հարցը:

Քննարկվող հարցի հետ կապված՝ հարկ է նշել, որ վճռի օրինական ուժի բացառիկության և կատարելիության հատկանիշները հատուկ վարույթում նեղ են. յուրաքանչյուր անձ, եթե գործը շոշափել է նրա սուբյեկտիվ իրավունքներն ու շահերը, զրկված չէ հայց հարուցելու իրավունքից՝ պաշտպանելու այն իրավունքներն ու օրինական շահերը, որոնց վերաբերյալ վեճը դատարանը քննության չի առել ու չի լուծել:

**Այլ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործի բացակայությունը** հայց հարուցելու իրավունքի բացասական նախադրյալներից է ու նախատեսված է ՔԴՕ 81-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետում: Սակայն օրենսդիրն անհասկանալի պատճառով այն դարձրել է նաև հայցադիմումը վերադարձնելու հիմք /ՔԴՕ 82 հոդվ. 1-ին կետի 4-րդ ենթակետ/, ինչը ճիշտ չէ, քանի որ նույն հիմքը միաժամանակ երկու տարբեր հետևանքներ առաջացնել չի կարող:

**Նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է միջնորդ դատարանի վճիռ, բացառությամբ դատարանի կողմից միջնորդ դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու դեպքի:** Ինչպես արդեն նշվել է, հայցային գործերը հիմնականում քննվում են դատական իշխանության համակարգի մեջ մտնող դատարանների կողմից: Միևնույն ժամանակ, որոշակի քաղաքացիաիրավական վեճեր քննելու իրավասու-

թյամբ ԼՂՀ օրենսդրությամբ օժտված են նաև միջնորդ դատարանները: Հայց հարուցելու իրավունքը բացակայում է, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է միջնորդ դատարանի վճիռ, բացառությամբ դատարանի կողմից միջնորդ դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու դեպքի /ՔԴՕ 81 հոդվ. 1-ին կետի 4-րդ ենթակետ/:

Հայց հարուցելու իրավունքը ծագում է թվարկված բոլոր նախադրյալների շնորհիվ: Դատավորը հայց հարուցելու իրավունքի նախադրյալների առկայությունը կամ բացակայությունը ստուգում և գնահատում է հայցադիմումը վարույթ ընդունելու /գործ հարուցելու/ փուլում: Այդ ընթացքում նա չի կարող լուծել հայցի բավարարման իրավունքի<sup>132</sup> առկայության կամ բացակայության հարցը, ինչը կարող է կատարվել միայն քաղաքացիական գործի քննության և լուծման` օրենքով սահմանված դատավարական ձևը պահպանվելուց հետո: Հայց հարուցելու իրավունքի նախադրյալներից թեկուզև մեկի բացակայության դեպքում դատավորը մերժում է քաղաքացիական գործի հարուցումը, իսկ եթե նախադրյալների բացակայությունը հայտնաբերվում է քաղաքացիական գործ հարուցելուց հետո, ապա գործի վարույթը կարճվում է դատավարության ցանկացած փուլում:

Հարկ է նշել նաև, որ ՔԴՕ-ն իրավունքի մասին վեճի առկայությունը հայց հարուցելու իրավունքի նախադրյալ չի համարում: Համապատասխանաբար` իրավունքի մասին վեճի բացակայությունը քաղաքացիական գործը կարճելու հիմք չի համարվում: Ինչպես արդեն նշվել է, ըստ ժամանակակից դատավարական ուսմունքի` հայցադիմումն ընդունելու և քաղաքացիական գործ

<sup>132</sup> Հայցի բավարարման իրավունքի մասին տես Արզումանյան Գ. Ս. Իրավունքների պաշտպանության հայցային ձևը, իրավ. գիտ. թեկն. ատենախոսություն, Երևանի պետական համալսարան-2006, 112-117 էջերը:

հարուցելու փուլում անհրաժեշտ չէ պարզել նյութական իրավա-  
հարաբերության առկայությունն ու նրա խախտման կամ վի-  
ճարկման փաստը, միանգամայն բավարար է համարվում հայ-  
ցադիմումում հայցվորի պնդումն այդ մասին: Իսկ թե իրականում  
առկա՞ է, արդյոք, այդ իրավունքը կամ խախտվե՞լ /վիճարկվե՞լ/  
է այն, արդյոք, հայցադիմումում որպես պատասխանող նշված  
անձի կողմից, դատարանը կարող է պարզել միայն գործն ըստ  
էության քննելու արդյունքում:

Անթույլատրելի է նաև ապացույցներ չներկայացնելու, հայ-  
ցային վաղեմության ժամկետը բաց թողնված լինելու, կողմերի  
ոչ պատշաճ լինելու, պահանջը ժամկետից շուտ ներկայացված  
լինելու, վեճի լուծման նախնական արտադատական կարգը  
պահպանված չլինելու և օրենքով չնախատեսված այլ հիմքերով  
հայցադիմումի ընդունումը մերժելը կամ գործի վարույթը կար-  
ճելը:

Հայց հարուցելու իրավունքի նախադրյալները դատական  
պաշտպանության իրավունքի սահմանափակում չեն հանդիսա-  
նում, մանավանդ որ նախատեսված է հայցադիմումի ընդունու-  
մը մերժելու որոշման բողոքարկման օրենսդրական հնարավոր-  
ություն: Հայրենական օրենսդիրը միայն կանոնակարգել է այդ  
իրավունքի իրացումը /որոշ թերություններով հանդերձ/ սուբ-  
յեկտիվ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի  
արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակով:

Հարկ է արձանագրել, որ ՔԴՕ գործողության ընթացքում այս  
ինստիտուտը որոշ չափով բարեփոխվել է: Մինևույն ժամանակ,  
կարծում ենք, որ իրենց դերը կատարելու ու դատական պաշտ-  
պանության իրավունքի իրացմանը չխոչընդոտելու նպատակով  
հայց հարուցելու իրավունքի նախադրյալները ՔԴՕ-ում պետք է  
ծնակերպվեն բավականաչափ հստակ:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է, որպես հայցադիմումի ընդուն-

նունը մերժելու կամ քաղաքացիական գործով վարույթը կարճելու ինքուրույն հիմք, օրենսդրորեն ամրագրել նաև դատարանի դատավճռի առկայությունը, որով քրեական դատավարության շրջանակներում ներկայացված քաղաքացիական հայցը լուծվել է ըստ էության:

Հայցային վարույթ հարուցելու համար հայց հարուցելու իրավունքով օժտված լինելը բավարար չէ, պետք է պահպանված լինեն նաև դատարան դիմելու իրավունքի իրացման՝ ՔԴՕ 82-րդ հոդվածում սահմանված պայմանները: Դրանք են՝ 1/ դիմողի /հայցվորի/ գործունակությունը, 2/ գործը վարելու լիազորության առկայությունը /եթե այն վարում է ներկայացուցիչը/, 3/ հայցադիմումի /դիմումի/ ձևն ու բովանդակությունը օրենքով նախատեսված պահանջների համապատասխանելը, 4/ պետական տուրքը վճարելը, 5/ եթե ամուսինը կնոջ հղիության ժամանակ կամ երեխան ծնվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում ամուսնալուծության դիմումը տվել է կնոջ համաձայնությամբ:

Վերոնշված պայմանները պահպանված չլինելու դեպքում դատավորը վերադարձնում է հայցադիմումը: Հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու և եռօրյա ժամկետում դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը /ՔԴՕ 82 հոդվ./:

Հայց հարուցելու իրավունքի նախադրյալները և այն իրացնելու պայմանները տարբեր են ինչպես իրենց իրավաբանական բնույթով, այնպես էլ դատավարական հետևանքներով: Եթե առաջինը վերաբերում է դատավարության իրավունքին, ապա երկրորդը կապված է հայց հարուցելու իրավունքը գործողության մեջ դնելու /այդ իրավունքն իրացնելու/ փաստերի հետ: Եթե հայց հարուցելու իրավունքի նախադրյալների բացակայությունն արգելակում է նույն հայցը երկրորդ անգամ դատարան

ներկայացնելուն, ապա հայց հարուցելու իրավունքի իրականացման պայմանների կամ դրանցից մի քանիսի բացակայությունը չի խոչընդոտում թերութունները վերացնելուց հետո նույն հայցը կրկին դատարան ներկայացնելու համար:

Դատարան դիմելու իրավունքի բնագավառն ընդգրկում է նաև հակընդդեմ ու երրորդ անձի հայցերի ինստիտուտները, որոնք անմիջականորեն կապ չունեն քաղաքացիական գործը հարուցելու փուլի հետ: Ինչպես հայտնի է, հակընդդեմ ու երրորդ անձի հայցերը ներկայացվում են արդեն իսկ հարուցված դատավարությունում և օժանդակում են դատավարության տնտեսման խնդիրների իրականացմանը: Բոլոր դեպքերում, համապատասխան դատավարական գործողություններն իրականացվում են հայց հարուցելու ընդհանուր կանոններով /ՔԴՕ 29 հոդվ., 86 հոդվ. 2-րդ կետ/: Հակընդդեմ հայցի ընդունելիությանն օրենսդիրն առաջադրում է նաև այլ պահանջներ /ՔԴՕ 86 հոդվ. 3-րդ կետ/:

## **ԳԼՈՒԽ 4.**

### **ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

#### **4.1. Հայցը և գործի քննության ու լուծման սահմանները**

Գործի քննության ու լուծման սահմաններն ուղղակիորեն նախատեսող նորմ ՔԴՕ-ն չի պարունակում: Դատական պրակտիկայում համարվում է, որ դատարանը հայցային գործը պարտավոր է քննել և լուծել հայցի առարկայի ու հայցի հիմքի սահմաններում: Նշված եզրահանգումը բխում է ՔԴՕ համապատասխան հոդվածների վերլուծությունից:

Այսպես, օրինակ՝ «Քաղաքացիական գործի հարուցման հիմքը» վերտառությամբ ՔԴՕ 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա: «Վճիռ կայացնելիս լուծման ենթակա հարցերը» վերտառությամբ ՔԴՕ 122-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը: «Վճռի բովանդակությունը» վերտառությամբ ՔԴՕ 123-րդ հոդվածի 3-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ վճռի նկարագրական մասը պետք է պարունակի հայցադիմումի հակիրճ բովանդակությունը՝ յուրաքանչյուր պահանջի հիմքում դրված փաստերը՝ շարադրելով այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորը, յուրաքանչյուր պահանջի իրավական հիմքերն ու հիմնավորումները՝ վկայակոչելով օրենքների և այլ իրավական ակտերի նորմերը, 4-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրահանգում՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմնավորվածության վերաբերյալ, 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը պետք է



պարունակի յուրաքանչյուր պահանջը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու կամ գործի վարույթը կարճելու մասին դատարանի եզրակացությունը:

Վճռին ներկայացվող օրենսդրական պահանջներն են՝ օրինականությունը, հիմնավորվածությունը, պատճառաբանվածությունը /ՔԴՕ 121.1 հոդվ./: Դատավարագիտության մեջ օգտագործվող «վճռի լրիվ /սպառիչ/ լինելու պահանջ» հասկացության էությունը կայանում է նրանում, որ վճռի մեջ պետք է վերջնական պատասխան ստանան հայտարարված բոլոր պահանջները՝ ինչպես սկզբնական, այնպես էլ հակընդդեմ և երրորդ անձի հայցերն, ու լուծվեն ՔԴՕ 123-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված մնացած բոլոր հարցերը: «Վճռի որոշակիության պահանջ» հասկացության էությունն այն է, որ գործի քննության արդյունքներով կայացվող դատական ակտը հայտարարված բոլոր պահանջներին պետք է տա այնպիսի պատասխան, որը բացառում է կողմերի հարաբերություններում անորոշությունը, ինչպես նաև դատական ակտը կողմերի հայեցողությամբ տարբեր եղանակներով կատարելու հնարավորությունը: «Վճռի անպայմանական լինելու պահանջ» հասկացության էությունը կայանում է նրանում, որ վճռի մեջ չեն կարող պայմաններ նշվել, որոնցից կախման մեջ է դրվում դրա կատարումը:

Ինչպես հայտնի է, մինչև քաղաքացիական դատավարության հայցային վարույթ հարուցելը կոնկրետ գործով օբյեկտիվ իրականության մեջ առկա են լինում՝ 1/ օբյեկտիվ իրավունքի նորմերը, 2/ իրավաբանական փաստերը, որոնց հետ օբյեկտիվ իրավունքի նորմերը կապում են նյութական իրավահարաբերությունների ծագումը, փոփոխումը, դադարումը և պաշտպանությունը, 3/ ֆիզիկական և իրավաբանական անձանց սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքները, ազատությունները, օրինական շահերը և պարտականությունները /իրավահարաբերությունները/:

Հայց հարուցելով դատարան, հայցադիմումում ներկայացնելով հայցի հիմքը և առարկան՝ հայցվորը մատնանշում է իր խախտված կամ վիճարկվող իրավունքը, ազատությունը և օրինական շահը, որի վերաբերյալ ծագել է վեճ իր և պատասխանողի միջև: Հայցվորը հետապնդում է իր իրավունքները, ազատությունները և օրինական շահերը պաշտպանելու նպատակ՝ իրավական վեճն իր օգտին լուծելու ճանապարհով: Պատասխանողը, պաշտպանվելով հայցից, համապատասխանաբար ձգտում է, որ կայացվի հարուցված հայցը մերժելու մասին վճիռ: Հայցային վարույթում դատարանի խնդիրը կայանում է նրանում, որպեսզի՝ 1/ արժանահավատ ապացույցներ ձեռք բերվեն հայցի և պատասխանողի առարկությունների հիմքում ընկած իրավաբանական փաստերի առկայության կամ բացակայության, վիճող կողմերի իրավահարաբերությունների, պատասխանողի կողմից հայցվորի իրավունքները, ազատությունները, օրինական շահերը խախտելու կամ վիճարկելու, այդ խախտման մեջ պատասխանողի ունեցած մեղքի առկայության մասին, ինչն իրականացվում է դատական քննության կենտրոնական մասը կազմող դատական ապացուցման միջոցով, 2/ հաստատված /ապացուցված/ իրավաբանական փաստերի նկատմամբ վերջնականապես որոշի տվյալ գործով կիրառման ենթակա նյութաիրավական նորմը /նորմերը/ և լուծի հայցը բավարարելու կամ այն մերժելու հարցը /լրիվ կամ մասնակի/: Այսինքն՝ դատավարության արդյունք հանդիսացող վճռի կայացմամբ հասնի հարուցված հայցի ու դատավարության հիմնական նպատակին, այն է՝ հայցի /գործի/ լուծմանը և գործին մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Հայցադիմումը վարույթ ընդունելու, գործը դատական քննության նախապատրաստելու, դատական քննություն իրականացնելու հետ կապված դատավարական բոլոր գործողությունները

նպատակ ունեն ստեղծելու անհրաժեշտ պայմաններ՝ գործն ըստ էության լուծելու և դատավարության հիմնական նպատակին հասնելու համար: Դատական վճռի էությունը, նրա իրավական նշանակությունը կայանում է հենց նրանում, որ այն օրենքով սահմանված կարգով պետության անունից կայացված արդարադատության ակտ է, որը գործն ըստ էության լուծելու միջոցով պաշտպանում է կողմերի իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը, ինչպես նաև պետության շահերը: Քաղաքացիական գործերով իրականացվող արդարադատության ֆակուլտատիվ նպատակներից են, օրինակ, պետական և հասարակական շահերի պաշտպանությունը, օրինականության և իրավակարգի ամրապնդումը, իրավախախտումների կանխումը, իրավունքի սուբյեկտներին իրավունքի նորմերը հարգելու ոգով դաստիարակելը, որոնք քաղաքացիական դատավարության վերջնական արդյունքներից ածանցվող հետևանքներ են:

Դատարանի վճիռը փոխկապակցված է ներկայացված հայցի հետ, պայմանավորված է դրա էությամբ ու բովանդակությամբ: Չայցը բավարարելով՝ դատարանը բավարարում է հայցվորի՝ պատասխանողի դեմ ուղղված պահանջը. հայցը մերժելով՝ դատարանը մերժում է այդ պահանջը: Դա հավասարապես վերաբերում է նաև արագացված դատաքննության կարգով կայացվող վճիռներին: Չայցը բավարարելու դեպքում հայցի հիմքը ծառայում է որպես «վճռի հիմք», իսկ հայցի առարկան դառնում է «վճռի առարկա», որն արտացոլվում է վճռի եզրափակիչ մասում:

Ավելորդ չէ նշել, որ ՔԴՕ 123-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի՝ 1) յուրաքանչյուր պահանջը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու մասին կամ գործի վարույթը կարճելու մասին դատարանի եզրակացությունը, 2) սկզբնական և հակընդդեմ հայցերը լրիվ կամ մասնակի բավարարելու դեպքում նշում՝ հաշվանցի արդ-

յունքում բռնագանձվող գումարի մասին, 3) գործարքն անվավեր ճանաչելու դեպքում նշում՝ գործարքի անվավերության հետևանքների մասին, 4) եզրահանգումներ՝ գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ, 5) եզրահանգում՝ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու մասին, 6) կատարում ենթադրող վճիռ կայացնելու դեպքում նշում՝ վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն պարտապանի հաշվին հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով կատարելու մասին, 7) վճիռ բողոքարկման ժամկետն ու այն վերադաս դատական ատյանը, որտեղ կարող է ներկայացվել բողոքը:

Օրենսդիրը վճռի եզրափակիչ մասին ներկայացնում է նաև հատուկ պահանջներ /ՔԴՕ 125, 126, 127, 128 հոդվածներ և այլն/:

Այսպիսով, վճռի եզրափակիչ մասի առաջին և պարտադիր պահանջը՝ գործի էության վերաբերյալ դատարանի վերջնական եզրակացությունը, բովանդակում է հայտարարված հայցին արդարադատությունն իրականացնող պետական իշխանության մարմնի /դատարանի/ հանուն Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Չանրապետության կայացված ու հրապարակված դատական ակտը /պատասխանը/, որը պետք է լինի հստակ, լրիվ, որոշակի և անպայմանական: Վճռի եզրափակիչ մասը, անշուշտ, պետք է բխի վճռի պատճառաբանական մասից, որը վճռի «հիմքն» է, որովհետև հայտարարված պահանջների վերաբերյալ դատարանի պատասխանը, նրա եզրահանգումների փաստական և իրավական հիմնավորումը կատարվում է հենց այդ մասում<sup>133</sup>: Չարկ է նշել, որ ՔԴՕ 123-րդ հոդվածը ներկայումս մանրամասնել է վճռի բովանդակությանն առաջադրվող պահանջները:

<sup>133</sup> Տ ԵՍ Պետրոսյան Ռ.Գ., նշվ. աշխ., էջ 396:

Նախկինում դրանք ընդհանուր բնույթ էին կրում:

Քաղաքացիական դատավարությունում դատական պաշտպանության իրավունքը տրվում է ոչ միայն հայցվորին, այլև պատասխանողին, ինչպես նաև գործին մասնակցող այլ անձանց: Պատասխանողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության դատավարական միջոցներն են առարկությունները /նյութաիրավական և դատավարական/ և հակընդդեմ հայցը: Տնօրինչականության սկզբունքի համաձայն՝ պատասխանողն ինքն է ընտրում իր իրավունքների դատական պաշտպանության այս կամ այն միջոցը: Ընդ որում, նյութաիրավական առարկությունները /առարկություններ՝ ըստ էության/ իրավաբանական փաստեր են, որոնք բխում են կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմից /նորմերից/ և ուղղված են հայցվորի նյութաիրավական պահանջների ժխտմանը: Դատավարական առարկությունները հենվում են դատավարական իրավունքի նորմերի վրա և ուղղված են վարույթի օրինաչափությունը ժխտելուն, վարույթը խափանելուն: Հակընդդեմ հայցը սկզբնական հայցի հետ նույն վարույթում քննելու համար պատասխանողի կողմից սկզբնական հայցվորին ներկայացվող նյութաիրավական պահանջ է, որով դատարանը նույնպես իրավական պատասխան պետք է տա դատական վճռով:

Դատական պրակտիկան ապացուցման պրոցեսում հատկապես կարևորում է ապացուցման առարկայի՝ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող նյութաիրավական բնույթի իրավաբանական փաստերի ճիշտ որոշման հարցը: Գրականության մեջ և դատական պրակտիկայում ապացուցման առարկան դիտարկվում է հենց հայցի հիմքի և հայցի առարկայի մասին ուսմունքի համատեքստում: ՔԴՕ 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գոր-

ծին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Սակայն յուրաքանչյուր գործ ունի իր առանձնահատկությունները, որոնք բխում են ներկայացված հայցից ու հայցի դեմ առարկություններից, որտեղ շարադրվում են տվյալ գործով ապացուցման ենթակա կոնկրետ փաստերը: Դրա համար էլ դատավարագիտության մեջ և դատական պրակտիկայում համարվում է, որ քաղաքացիական հայցային գործերով ապացուցման առարկան կազմավորվում է երկու աղբյուրներից՝ 1/ հայցի հիմքի և դրա դեմ բերվող առարկությունների հիմքի փաստերից, 2/ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի /նորմերի/ հիպոթեզում և դիսպոզիցիայում նախատեսված փաստերից<sup>134</sup>: Դատարանի վճիռը չի բխի գործի փաստական հանգամանքներից, հետևաբար՝ օրինական, հիմնավորված և պատճառաբանված չի լինի, եթե գործին մասնակցող անձինք և դատարանը ճիշտ չորոշեն ապացուցման առարկան կազմող նյութական իրավաբանական փաստերի շրջանակը և լրիվ չպարզեն դրանք:

Ապացուցման առարկայում բացառապես դատավարական բնույթի իրավաբանական փաստերի և ապացուցողական նշանակություն ունեցող փաստերի /ապացուցողական փաստերի/ ներառումը դատավարագիտության մեջ վիճելի է: Որոշ դատավարագետների կարծիքով՝ դրանք պետք է մտցնել ոչ թե ապացուցման առարկայի, այլ ապացուցման սահմանների մեջ<sup>135</sup>: Մ.Կ.

<sup>134</sup> Վարչական դատավարությունում դատարանը կապված չէ հայտարարված պահանջների հիմքերով ու հիմնավորումներով. ՎՊՕ 6-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե /*ex officio*/: Նույն օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ դատարանը քննարկված փաստերի շրջանակը լրացնում է նաև այն փաստերով, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար: Այսինքն՝ ապացուցման ենթակա փաստերի որոշումը լրիվությամբ վերաբերում է դատարանի պարտականությանը:

<sup>135</sup> *Стѝи Справочник по доказыванию в гражданском судопроизводстве. Москва. Под редакцией И.В.Решетниковой, тѝ 12:*

Տրեուշնիկովի կարծիքով՝ ապացուցման առարկայի մեջ մտնում են միայն նյութաիրավական նշանակություն ունեցող փաստերը, այն փաստերը, առանց որոնց պարզման հնարավոր չէ ճիշտ լուծել գործը և կիրառել նյութական իրավունքի նորմերը<sup>136</sup>: Ռ.Գ. Պետրոսյանի կարծիքով՝ ապացուցման առարկայի մեջ չեն մտնում ապացուցողական փաստերը. դրանք ըստ էության անուղղակի ապացույցներ են, որոնք դատավարության ընթացքում կարող են առաջ քաշվել, հերքվել, մինչդեռ ապացուցման առարկայի մեջ մտնող իրավաբանական փաստերը, այսինքն՝ հայցի հիմքում և պատասխանողի առարկությունների հիմքում ընկած հանգամանքները դատավարության ընթացքում անփոփոխ են, մինչև որ հայցվորը չփոխի հայցի, իսկ պատասխանողը՝ առարկությունների հիմքերը<sup>137</sup>: Ս. Գ. Մեղրյանն առաջարկում է ապացուցման առարկան դիտարկել լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով ապացուցման առարկան այն է, ինչը պետք է ապացուցվի տվյալ քաղաքացիական գործով՝ այն, ինչին ուղղված են դատարանի և գործին մասնակցող անձանց ապացուցողական գործողությունները, այլ կերպ ասած՝ նյութական և դատավարական բնույթի իրավաբանական և ապացուցողական փաստերի ամբողջությունը: Նեղ իմաստով ապացուցման առարկա պետք է համարել նյութաիրավական նշանակություն ունեցող այն իրավաբանական և ապացուցողական փաստերի ամբողջությունը, որն էական նշանակություն ունի գործի ըստ էության լուծման համար<sup>138</sup>:

Ապացուցման առարկայի շրջանակների մեջ մտնող նյութա-

<sup>136</sup> Տե՛ս *Треушников М. К. Судебные доказательства. М., ОАО. Издательский дом “Городец”, М. 2004, 23-26 էջերը:*

<sup>137</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., *նշվ. աշխ.*, էջ 283:

<sup>138</sup> Տե՛ս Մեղրյան Ս.Գ. *Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Եր., 2012, էջ 19:*

կան և դատավարական փաստերի անհիմն սահմանափակումը կարող է պատճառ դառնալ գործի միակողմանի, ոչ լրիվ և ոչ օբյեկտիվ քննության համար: Ապացուցման առարկայի շրջանակների անհիմն ընդարձակումը կարող է գործը ծանրաբեռնել ավելորդ, ոչ վերաբերելի նյութերով ու դատավարության ձգձգման պատճառ դառնալ:

Այսպիսով, քաղաքացիական դատավարությունում դատարանին է պատկանում հայցի /գործի/ լուծման գործառույթը, որի շրջանակներում իրացվում է նաև դատավորի անկախության սկզբունքը: Միևնույն ժամանակ, հայցի առարկան և հիմքն են կանխորոշում գործի քննության և լուծման սահմաններն ու առանձնահատկությունները: Հայցի առարկան և հիմքը փոփոխելու իրավասությամբ օժտված է միայն հայցվորը: Դատարանն իրավունք չունի հայցվորին տալ այն, ինչը նա չի պահանջում, կամ ավելին, քան նա պահանջում է: Հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու մասին հայցվորի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը պարտավոր է հայցը քննել և լուծել փոփոխված սահմաններում:

Դատական ակտը ոչ իրավաչափ է ճանաչվում հայցի հիմքի ու առարկայի սահմաններից դուրս գալու ու չներկայացված պահանջներ լուծելու, ինչպես նաև դատարանի կողմից հայցի հիմքի բոլոր փաստերին և բոլոր հայցապահանջներին<sup>139</sup> չանդրադառնալու դեպքերում, որպիսի պայմաններում

---

<sup>139</sup> Գործող օրենսդրությունը վճիռը կայացրած դատարանին թույլ է տալիս մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահին իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կայացնել լրացուցիչ վճիռ, եթե՝ 1) վճիռ չի կայացրել որևէ պահանջով, որով գործին մասնակցող անձինք ապացույցներ են ներկայացրել, 2) լուծելով իրավունքի մասին հարցը, չի նշել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք պարտավոր է կատարել պատասխանողը, 3) չի լուծել դատական ծախսերի հարցը:



խախտվում են օրինականության, տնօրինչականության, մրցակցության սկզբունքները, Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Չանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը<sup>140</sup>: Այդ խախտումները հետագայում կարող են խոչընդոտ հանդիսանալ նաև անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացման համար, քանի որ ՔԴՕ 81-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը նախատեսում է, որ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, իսկ ՔԴՕ 99-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրի-

<sup>140</sup> Եթե Չայաստանի Չանրապետությունը 2001թ. հունվարի 25-ին վավերացրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական /ՅժՄԻ/ կոնվենցիան, որը Չայաստանի Չանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է կազմում, ապա Արցախի /Լեռնային Ղարաբաղի/ Չանրապետությունը միջազգային փաստաթղթերին միանալու հնարավորությունից ներկայումս զրկված է՝ դեռևս չճանաչված լինելու պատճառով: Այնուամենայնիվ, հանրապետության դատարանները, որպես ժողովրդավարական պետության դատարաններ, կազմավորվելուց անմիջապես հետո սկսել են կիրառել եվրոպական կոնվենցիայի դրույթներն ու ղեկավարվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումներով: 2015 թվականի ապրիլի 15-ին Լեռնային Ղարաբաղի Չանրապետության Գերագույն դատարանը Լեռնային Ղարաբաղի Չանրապետության Նախագահի դիմումի հիման վրա քննության առնելով եվրոպական կոնվենցիայում ամրագրված դրույթների՝ Լեռնային Ղարաբաղի Չանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը, որոշել է, որ դրանք համապատասխանում են Սահմանադրությանը /ԼՂՉ Ազգային ժողովի կողմից օրենքն ընդունվել է 20.04.2015թ., ԼՂՉ Նախագահի կողմից վավերացվել՝ 15.05.2015 թ./:

նական ուժի մեջ մտած վճիռ /բացառությամբ նույն օրենսգրքի 100 հոդվ. 3-րդ կետով նախատեսված դեպքի/:

Դատական պրակտիկայում թույլ տրված սխալները որոշ դեպքերում պայմանավորված են հենց վերոնշյալ խախտումներով:

Այսպես, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությունը, հայց ներկայացնելով դատարան, պահանջել է ընդհանուր սեփականություն հանդիսացող բնակարանից առանձնացնել Նանարա Թեյմուրովայի բաժինը և բռնագանձումը տարածել այդ բաժնի վրա, իսկ անհնարինության դեպքում հրապարակային սակարկություններով վաճառել բնակարանը՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ: ԼԴՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճռով հայցը մերժվել է: ԼԴՀ վերաքննիչ դատարանը վճիռը թողել է օրինական ուժի մեջ՝ պատճառաբանելով, որ պարտատերն առաջին հերթին կարող է դիմել դատարան՝ պարտապանի բաժինը բնեղենով առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով: Դատաքննության արդյունքներով բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինության հաստատման կամ բաժինն առանձնացնելու դեմ ընդհանուր սեփականության մյուս մասնակիցների կողմից առարկություններ ներկայացվելու դեպքերում պարտատերը կարող է դիմել բաժնային կամ համատեղ սեփականության մյուս մասնակիցներին՝ պահանջելով ձեռք բերել պարտապանի բաժնեմասը՝ պարտքը մարելու համար: Եվ միայն այն դեպքում, երբ ընդհանուր սեփականության մյուս մասնակիցները կիրառարկվեն պարտապանի բաժինը ձեռք բերելուց, պարտատերը հնարավորություն կստանա դատական կարգով պահանջելու բռնագանձումը տարածել պարտապանի բաժնեմասի վրա: Մինչդեռ, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանա-

կան անձանց միությունը նշված գործողությունների կատարման հերթականությունը չի պահպանել և ընդհանուր սեփականության մյուս մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու վերաբերյալ որևէ հավաստի և վերաբերելի ապացույցի բացակայության պայմաններում պահանջ է ներկայացրել պարտապանի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու մասին:

Նշված գործով վճռաբեկ բողոք է բերել հայցվոր կողմը: Վճռաբեկ բողոքում, մասնավորապես, նշվել է, որ գործի քննությունը տարիներ է տևել: Այդ ընթացքում ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները որևէ գործողություն չեն ձեռնարկել, ձեռք չեն բերել պարտապանի բաժինը, նման ցանկություն չեն հայտնել, դրսևորել են բացարձակ անտարբերություն, ինչն ինքնին նշանակում է, որ նրանք հրաժարվել են ձեռք բերել պարտապանի բաժինը: Իսկ գույքը բնեղենով առանձնացնելու անհնարինության դեպքում միաժամանակ այն հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջ դատարանին ներկայացնելով՝ բյուրոն, ըստ էության, կամահայտնություն է դրսևորել Քաղ. օր. 200-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնների պահպանմամբ հասնել գույքի վաճառքին՝ ստացված գումարից իր պարտքը մարելու համար:

ԼՂՀ Գերագույն դատարանը բավարարել է վճռաբեկ բողոքը՝ նշելով, որ գործն ըստ ներկայացված պահանջների էության չի քննվել ու չի լուծվել: Ըստ կայացված որոշման՝ «հաշվի առնելով, որ ընդհանուր սեփականության մասնակիցներին պարտապանի բաժինը գնելու առաջարկ ներկայացնելու և այն մերժելու ձևը օրենքով սահմանված չէ, որ բյուրոն 19.11.2012թ. ԸԻԴ թիվ 1261/02/12թ. վճռով որոշված գումարը բռնագանձելու նպատակով դատարանից պահանջել է առանձնացնել Նանարա Թեյմուրովայի բաժինը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ վճիռ կա-

յացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին, ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ գույքը բնեղենով առանձնացնելու անհնարինության դեպքում միաժամանակ այն հրապարակային սակարկություններով վաճառելու հայցապահանջ ներկայացնելով՝ հայցվորը, ըստ էության, կամահայտնություն է դրսևորել Քաղ. օր. 200-րդ հոդվածի 2-րդ կետի կանոնների պահպանմամբ հասնել գույքի վաճառքին՝ ստացված գումարից իր գումարը ստանալու համար: Հետևաբար՝ անհիմն է առաջարկ ներկայացնելու և այն մերժելու մասին վերաբերելի ու արժանահավատ ապացույցներ հայցվորի կողմից չներկայացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների դիրքորոշումը, և անտրամաբանական է, որ գործին մասնակցող անձինք այդ գործով դատավարությունների մասին, այն էլ՝ երկար ժամանակ ձգձգվող, անտեղյակ լինեին: Գերագույն դատարանը նաև մեկնաբանել է, որ արդեն իսկ հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում պարտատիրոջ կողմից ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներին պարտապանի բաժինը գնելու առաջարկ ներկայացնելը և, համապատասխանաբար, այդ առաջարկին արձագանքելն իրականացվում է դատարանի անմիջական մասնակցությամբ<sup>141</sup>:

Վերոնշված գործն առնչվում է նաև հետևյալ հիմնախնդրին.

Հայրենական օրենսդրությունը, ինչպես հայտնի է, արտասահմանյան որոշ երկրների օրենսդրությամբ նախատեսված այլընտրանքային հայցի /վճռի/ տեսակը չի նախատեսում նույնիսկ այն դեպքերում, երբ դատավարության առարկան այլընտրանքային պարտավորություններն են: Դատավարագիտության մեջ դա հիմնավորվում է նրանով, որ վճռի որոշակիության պա-

<sup>141</sup> Տե՛ս ԸԻԴ 1026/02/13թ. քաղաքացիական գործով ԼՂՀ Գերագույն դատարանի 25. 02. 2016թ. որոշումը:

հանջից բխում է, որ կողմն իր այլընտրանքային պահանջներից պետք է ընտրի մեկն ու մեկը՝ որպես հայցի առարկա, որի վերաբերյալ դատարանը պետք է վճիռ կայացնի: Վճիռը կհամարվի անորոշ, եթե դրա եզրափակիչ մասում դատարանը կիրառի «կամ-կամ» բանաձևը /օրինակ՝ պարտավորեցնի պատասխանողին հայցվորին հանձնել որոշակի գույք կամ վճարել դրա արժեքը/:

ՔԴՕ-ն չի փոխառել նաև, այսպես կոչված, ոչ պարտադիր /ֆակուլտատիվ/ հայցերի /վճիռների/ ինստիտուտը: Ռատական պրակտիկայում, ինչպես վկայում է վերոնշյալ գործը, նման հայցեր ներկայացվում են: Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է օրինականացնել նման պրակտիկան ու ՔԴՕ - ուն նախատեսել ֆակուլտատիվ հայցեր ներկայացնելու և, համապատասխանաբար, ֆակուլտատիվ վճիռներ կայացնելու հնարավորությունն այն դեպքերի համար, երբ դատարանը հայցվորի առաջնային պահանջը հնարավոր չգտնի բավարարել, և երբ հայցվորի համար նշանակություն չունի, թե իր պահանջն ինչ հիմքերով կարող է բավարարվել: Ի դեպ, ֆակուլտատիվ վճիռ կայացնելու հնարավորությունն նյութական օրենսդրությունը նախատեսում է:

Այսպես, օրինակ՝ ԼԴՀ քաղ. օր. 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե գործարքն անվավեր է ճանաչվել խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի՝ մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կամ ծանր հանգամանքների բերումով, ապա մյուս կողմը տուժողին վերադարձնում է գործարքով իր ամբողջ ստացածը, իսկ բնեղենով վերադարձնելու անհնարիության դեպքում դրա արժեքը հատուցում է դրամով: Գործարքով մյուս կողմից տուժողի ստացած գույքը, ինչպես նաև մյուս կողմից նրան հասանելիքը բռնազանձվում է հօգուտ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության: Գույքը բնեղենով պետությանը հանձնելու անհնարիության

դեպքում դրա արժեքը բռնագանձվում է դրամով: Ինչպես իրավացիորեն նշում է Ս.Գ. Մեղրյանը, այն դեպքերում, երբ վճռի կատարման ընթացքում պարզվում է հանձնման ենթակա գույքի բացակայությունը, ապա «Դատական ակտերի հարկադիր կատարման» մասին ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի կարգով դատարան դիմելու և վճռի կատարման եղանակը լրացուցիչ եղանակով փոփոխելու անհրաժեշտություն չի ծագի, իսկ վճիռը կկատարվի դատարանի կողմից նախապես սահմանված լրացուցիչ /ֆակուլտատիվ/ եղանակով<sup>142</sup>:

Ընդհանուր կանոնի համաձայն, ինչպես արդեն նշվել է, դատարանը չի կարող իր նախաձեռնությամբ քննարկել հայցվորի կողմից պատասխանողին չներկայացված պահանջներ: Դատարանն իրավասու չէ նաև իր նախաձեռնությամբ հետազոտել փաստեր, որոնք նշված չեն ներկայացված հայցի հիմքում: Եթե դատարանն առանց հայցվորի համաձայնության փոփոխում է հայցի առարկան կամ հիմքը, լրիվությամբ չի պարզում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը, ապա կայացված դատական ակտը ճանաչվում է ոչ իրավաչափ:

Այսպես, կոնկրետ գործով ԼՂՀ Գերագույն դատարանը, բեկանելով ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշումն ու գործն ուղարկելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, մասնավորապես, նշել է, որ ներկայացված հայցի հիմքում դրված են եղել պատասխանողի կողմից պայմանագրային պարտականությունները խախտելու փաստերը: Այդ գործով հայցվորն առաջին ատյանի դատարանում հայցը չի փոփոխել, վճիռը կայացվել է ըստ ներկայացված հայցի էության՝

<sup>142</sup> Տե՛ս Մեղրյան Ս.Գ., Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2010, էջ 103:

հիմք ընդունելով Քաղ. օր. 417-րդ հոդվածը: Մինչդեռ, ԼՂՀ վերաքննիչ դատարանը փոփոխել է հայցի հիմքը ու հայցը բավարարել Քաղ. օր. 1058-րդ հոդվածի հիման վրա /արտապայմանագրային պարտավորություններ/: Հետևաբար՝ հիմնավոր է վերաքննիչ դատարանի կողմից հայցի հիմքը փոփոխելու նասին վճռաբեկ բողոքի հիմքը<sup>143</sup>:

Ի դեպ, դատական պրակտիկայում անորոշությունը, կապված, օրինակ, իրային-իրավական պահանջները պարտավորական պահանջներով /պայմանագրերից, անհիմն հարստացումից ծագող/, ինչպես նաև իրային-իրավական պահանջները պայմանագրերն անվավեր ճանաչելու հետևանքների կիրառման պահանջներով փոխարինելու հետ, որոշակի առումով պահպանվում է: Դատական պրակտիկան, հիմք ընդունելով օրենսդրական կարգավորումը, անհնարին է համարում նշված պահանջների փոխարինումը մեկը մյուսով, քանի որ այդ պարագայում փոփոխվում է նաև հայցի հիմքը, հետևաբար՝ նաև այն իրավահարաբերությունը, որից ծագել է սկզբնական հայցը:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճռով Արծվիկ Յովհաննիսյանի հայցն ընդդեմ Իրինա Օսիպովայի՝ 3.200.000 ՀՀ դրամ փոխառության գումարն ու Քաղ. օր. 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները բռնագանձելու նասին, մերժվել է: Նշված վճռի դեմ հայցվոր կողմը վերաքննիչ բողոք է բերել այն հիմքով, որ դատարանը, կիրառելով կիրառման ոչ ենթակա Քաղ. օր. 882-րդ հոդվածը ու հաշվի չառնելով, որ քաղաքացիական գործը հարուցվում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա, դուրս է եկել ներկայացված հայցի սահ-

---

<sup>143</sup> Տե՛ս ԸԻԴ 1105/02/15թ. քաղաքացիական գործով ԼՂՀ Գերագույն դատարանի 15.01.2015 թ. որոշումը:

մաններից, դատական նիստում պատասխանողի բանավոր փաստարկները /առարկությունը/ դիտարկել իբրև փոխառության պայմանագրի վիճարկման պահանջ ու բավարարել այն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է. առաջին ատյանի դատարանի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել, ու հայցը բավարարվել է:

Նշված որոշումը բողոքարկել է պատասխանող կողմը: Վճռաբեկ բողոքում, մասնավորապես, նշվել է, որ Իրինա Օսիպովան իր առարկությամբ վիճարկել է հայցվորի ներկայացրած ստացականը անփողության հիմքով, ԼՂՀ վերաքննիչ դատարանը, սակայն, անհիմն կերպով պատասխանողի առարկությունը ստացականի վիճարկում չի համարել, ստացականը նախապես հաստատված ուժ ունեցող ապացույց է համարել:

ԼՂՀ Գերագույն դատարանը բավարարել է այդ գործով բերված վճռաբեկ բողոքը, մասնավորապես նշելով, որ փոխառության պայմանագրի վիճարկման յուրահատկությունը կայանում է նրանում, որ օրենսդիրը նախատեսում է նաև անփողության հիմքով այդ պայմանագրի վիճարկման հնարավորություն, ինչը կարող է իրականացվել ոչ միայն առանձին հայցի, այլև փոխառության գումարը բռնագանձելու մասին փոխատուի /հայցվորի/ հայցապահանջի դեմ փոխառուի /պատասխանողի/ նյութաիրավական բնույթի առարկությունների միջոցով: Եվ եթե անփողության հիմքով փոխառության պայմանագիրը վիճարկելիս պարզվում է, որ փոխառուն /պատասխանողը/ դրանը կամ այլ գույքն իրականում չի ստացել փոխատուից /հայցվորից/, ապա փոխառության պայմանագիրը համարվում է չկնքված, և պարտքի բռնագանձման պահանջը դատարանի կողմից մերժվում է: Ստորադաս դատարանը, սակայն, ոչ իրավաչափորեն սահմանափակել է գործով ապացուցման առարկայի և գործի քննության սահմանները: Մինչդեռ, գործով ապացուցման առարկան կազ-



մող բոլոր փաստերը ձեռք բերված վերաբերելի, թույլատրելի և բավարար ապացույցների գնահատման արդյունքում հաստատվելուց կամ ժխտվելուց հետո միայն դատարանը կարող է որոշել հայցը բավարարելու կամ մերժելու հարցը<sup>144</sup>:

Այսպիսով, փոխառության գումարը բռնագանձելու մասին վճռող հայցի շրջանակներում փոխառության պայմանագիրը չկնքված կարող է ճանաչվել ոչ միայն հակընդդեմ հայցի, այլև այդ հայցի դեմ բերված առարկությունների հիման վրա՝ ի տարբերություն վիճահարույց գործարքների, որոնք անվավեր կարող են ճանաչվել միայն հայցի /հակընդդեմ հայցի/ միջոցով, քանի որ Քաղ. օր. 303-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դրանք անվավեր կարող են ճանաչվել միայն սահմանափակ շրջանակի անձանց հայցերով /այդ թվում՝ հակընդդեմ/: Ինչպես արդեն նշվել է, վճռող հայցի բնութագրիչ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն միաժամանակ ներառում է հայցվորի երկու պահանջներ՝ 1/ ճանաչել իր վիճելի իրավունքը, 2/ պարտավորեցնել պատասխանողին՝ իր օգտին կատարելու վիճելի իրավահարաբերությունից բխող որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու որոշակի գործողություններ կատարելուց: Նման հայցերով դատարանը պարտավոր է առաջին հերթին պարզել հայցադիմումում ցույց տրված իրավահարաբերության առկայության կամ բացակայության հանգամանքը և դրանից հետո միայն կայացնել պատասխանողին այս կամ այն գործողությունը կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն պարտավորեցնող վճիռ: Հետևաբար՝ անգամ առարկությունների բացակայության պարագայում դատարանը պարտավոր է գործի

---

<sup>144</sup> Տե՛ս ԸԻԴ N 0010/02/15թ. քաղաքացիական գործով LԴՀ Գերագույն դատարանի 28.04.2016 թ. որոշումը:

քննության ընթացքում պարզել փոխառության պայմանագիրը կնքված կամ չկնքված լինելու փաստը, քանի որ այդ փաստը պարտադիր կերպով ներառվում է փոխառության գումարը բռնագանձելու մասին վճռող հայցի հիմքի ու հետևաբար՝ գործի քննության ու լուծման շրջանակներում:

Ինչ վերաբերում է առաջին գործարքներին, որոնք հետևանք են գործող օրենսդրության պահանջների կոպիտ խախտման, ապա Քաղ. օր. 303-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաջին գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ: Դատարանն իրավունք ունի այդպիսի հետևանքներ կիրառել սեփական նախաձեռնությամբ:

Դատական պրակտիկայում հանդիպում են նաև դեպքեր, երբ դատարանը, դուրս գալով ներկայացված հայցապահանջի շրջանակներից, բավարարում է չներկայացված պահանջներ:

Արդեն նշվել է, որ հայցի հիմք կազմող իրավաբանական փաստերը տարբերվում են ապացույցներից /իրավաբանական փաստերի մասին տեղեկություններից/, որ հայցի հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի հաստատումը պայմանավորված է ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտմամբ: Կոնկրետ քաղաքացիական գործով ԼՂՀ Գերագույն դատարանն արձանագրել է, որ դատարանն իր վճռի հիմքում դրել է միայն հետաքննության մարմնի որոշումը՝ դրան ոչ իրավաչափորեն վերապահելով նախադատելիության հատկանիշ, իսկ հայցի հիմքի փաստերը չեն հետազոտվել, մինչդեռ քրեական վարույթներում կարող են գնահատվել միայն քրեական գործի հարուցման և քննության հետ կապված հարցերը, իսկ քաղաքացիական դատավարությունում ապացուցման առարկա կազմող փաստերը, մասնավորապես, սեփականության իրավունքի ճանաչման, սեփականու-

թյան իրավունքի փոխանցման իրավաչափության հարցերը չպետք է գնահատման առարկա դառնան քրեական դատավարության կարգով: Գերագույն դատարանը նաև մեկնաբանել է, որ եթե դատարանի մոտ կասկածներ են առաջանում ապացուցման բեռից ազատված կողմի բարեխղճության, ապացուցողական /օրինական/ ենթադրության և իրականության համապատասխանության առնչությամբ, ապա ապացուցողական ենթադրության վրա հիմնված փաստը մտցվում է ապացուցման առարկայի մեջ, և նրա գոյությունը հաստատվում է ընդհանուր կարգով<sup>145</sup>:

Մեկ այլ գործով փոխառության գումարը բռնագանձելու մասին հայցը բավարարվել է միայն այն պատճառաբանությամբ, որ «քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ վկաների ցուցմունքների ու այլ գրավոր ապացույցների գնահատման արդյունքում նախաքննությունն իրականացրած պաշտոնատար անձն արձանագրել է հայցվորի կողմից պատասխանողին 1.000.000 դրամ գումար փոխանցելու, դրանից 280.000 դրամը վերադարձնելու փաստերը, նշված որոշումն ո՛չ հայցվորի, ո՛չ էլ պատասխանողի կողմից վերադասության կարգով չի բողոքարկվել, ուստի այն բավարար հիմք է դրանում առկա տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար»: ԼՂՀ Գերագույն դատարանը չի համաձայնել ստորադաս դատարանների գնահատականների՝ նշելով, որ քննիչի որոշումը չունի նախապես հաստատված ապացույցի ուժ և պետք է քննության և գնահատման առարկա դարձվի քաղաքացիական դատավարության ընթացքում<sup>146</sup>:

<sup>145</sup> Տե՛ս ԸԻԴ 2482/02/15թ. քաղաքացիական գործով ԼՂՀ Գերագույն դատարանի 27.07.2016 թ. որոշումը:

<sup>146</sup> Տե՛ս ԸԻԴ 0158/02/16թ. քաղաքացիական գործով ԼՂՀ Գերագույն դատարանի 29.07.2016թ. որոշումը:

Ավելորդ չէ նշել, որ հայրենական նախադեպային իրավունքի համաձայն՝ 1/ վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս դատարանի համար նախադատելի նշանակություն ունենալ չեն կարող, եթե նախկինում քննված քաղաքացիական գործով այդ հանգամանքները հաստատվել են առանց ֆորմալ դատավարական կանոնների պահպանման՝ ապացույցների հավաքման, հետազոտման և զնահատման դատավարական կանոնների կոպիտ խախտմամբ, 2/ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս դատարանի համար նախադատելի նշանակություն ունենալ չեն կարող նաև այն դեպքերում, երբ վերաբերելի չեն եղել նախկինում քննված քաղաքացիական գործով հայցի առարկային, չպետք է դասվեին հաստատման ենթակա հանգամանքների շարքին և մտցվեին ապացուցման առարկայի մեջ, 3/ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, ուստի ապացուցման առարկայի սահմանների կամայական ընդլայնումը բերում է գործով կայացված դատական ակտով հաստատված որոշակի հանգամանքների նախադատելիության բացառման:

Վարչական ակտի իրավաչափության ստուգման մասին հակընդդեմ հայցի բացակայության պարագայում դատարանն իրավասու չէ անդրադառնալու վարչական ակտի իրավաչափության հարցին: Դատական պրակտիկան համարում է, որ վարչական ակտի իրավաչափության ստուգման պահանջի բացակայության պայմաններում իր նախաձեռնությամբ անդրադառնալով վարչական ակտի իրավաչափության հարցին և բացառելով դրա իրավական հետևանքների առաջացնելու հնարավորություն:

նը՝ դատարանը դուրս է գալիս հայցի շրջանակներից: Սահմանադրության ուժով վարչական ակտի չվիճարկման պայմաններում յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ վարչական ակտն ընդունվել է Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված վարչական մարմնի լիազորությունների շրջանակում, և այն ենթակա է կատարման: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ չվիճարկված վարչական ակտն իրավաչափ է, և որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմինը, չի կարող կասկածի տակ դնել դրա իրավաչափությունը: Պետք է նշել, սակայն, որ վարչական դատավարությունում ձևավորված այս մոտեցումը քաղաքացիական դատավարությունում երբեմն սխալ է մեկնաբանվում:

Այսպես, Ատոմ Զունանյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Բերձորի համայնքի ղեկավարի՝ աշխատանքում իրեն վերականգնելու մասին՝ հայցի հիմքում դնելով մի շարք փաստեր: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը հայցի հիմքի փաստերին ընդհանրապես չի անդրադարձել, հայցը մերժել է այն պատճառաբանությամբ, որ հայցվորն իր հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու և իրեն աշխատանքից ազատելու մասին Բերձորի համայնքի ղեկավարի հրամանի իրավաչափությունը չի վիճարկել, «հետևաբար՝ անհատական իրավական ակտի ուժի մեջ գտնվելու պայմաններում հնարավոր չէ անդրադառնալ նաև հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը գանձելու ածանցյալ պահանջին, այսինքն՝ չկա պահանջ, չկա նաև լրացուցիչ՝ ածանցյալ պահանջ»: ԼՂՀ Գերագույն դատարանն այս գործով պարզաբանել է, որ «Աշխատանքային իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ Աշխ. օր. 38-րդ հոդվածում մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելը և գործատուի իրավական ակտն ան-

վավեր ճանաչելը թվարկված են իբրև աշխատանքային իրավունքների պաշտպանության առանձին եղանակներ, իսկ նույն օրենսգրքի 265-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Տվյալ դեպքում հայցվորն ընտրել է աշխատանքում վերականգնելու նասին հայցատեսակը /վճռող հայց/, որն իր մեջ ընդգրկում է նաև հրամանն անվավեր ճանաչելու պահանջը: ԼԴՅ Գերագույն դատարանը, միևնույն ժամանակ, նշել է, որ գործող աշխատանքային օրենսդրությունն աշխատողի իրավունքների վերականգնումը կապում է ոչ թե աշխատանքային հարաբերությունների դադարումը ձևակերպող անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու, այլ աշխատանքային պայմանագրի լուծումն անօրինական համարվելու հետ<sup>147</sup>:

Հայցի առարկայի և հայցի փաստական հիմքի սահմաններից չչեղվելու /դուրս չգալու/ կանոնը գործում է նաև վերաքննիչ և վճռաբեկ վերանայման ժամանակ, քանի որ այդ ատյաններում վերանայվում է առաջին ատյանի դատարանի կողմից արդեն իսկ քննված գործը: Ինչպես արդեն նշվել է, գործող օրենսդրությամբ այդ ատյաններում չի թույլատրվում հայցի հիմքը կամ առարկան փոփոխել և հայցային պահանջների չափն ավելացնել կամ նվազեցնել. վերաքննիչ և վճռաբեկ ատյաններն օրենքով լիազորված են բեկանելու և փոփոխելու դատական ակտերը, եթե առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու

---

<sup>147</sup> Տե՛ս ԸԻԴ 2408/02/2015թ. քաղաքացիական գործով ԼԴՅ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 23.02.2016թ. վճիռը:

նման ակտ:

Կոնկրետ գործով ԼԴՅ Գերագույն դատարանն արձանագրել է, որ վճիռը պետք է համապատասխանի իր կայացման պահին գոյություն ունեցող փաստերին, իսկ հայցադիմումում չներկայացված և առաջին ատյանի դատարանում քննարկման առարկա չդարձած փաստերը, դրանց առկայությունը կամ բացակայությունը հաստատող ապացույցները կարող են միայն նոր հայց հարուցելու հիմք հանդիսանալ<sup>148</sup>:

Գործող օրենսդրությամբ լուծված չէ դատական ակտը բեկանելուց հետո գործի նոր քննության ժամանակ հայցի առարկան կամ հիմքը փոփոխելու հնարավորության հարցը: Դատական պրակտիկայում դրանք նույնպես չեն թույլատրվում: Հարկ է նշել, որ ՀՀ ՎԴՕ 176-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի նոր քննության ժամանակ չեն կարող փոխվել հայցի հիմքը, առարկան կամ հայցային պահանջների չափը, չի կարող ներկայացվել հակընդդեմ հայց: Նման կարգավորում, մեր կարծիքով, անհրաժեշտ է նախատեսել նաև ՔԴՕ-ում: Ընդհանրապես, կարծում ենք, որ միևնույն իրավահարաբերությունների տարբեր իրավակարգավորումները ՔԴՕ-ում, ՎԴՕ-ում, Քր. դատ. օր.-ում դատավարության մասնակիցներին դնում են անհավասար կարգավիճակում՝ օրենքի և դատարանի առջև, ինչու չէ՝ նաև չարաշահումների տեղիք են տալիս /հայցվորներն, օրինակ, երբեմն փորձում են «փոխել» դատավարության ձևը՝ դատարան դիմելու՝ ՎԴՕ-ով սահմանված կրճատ ժամկետներից խուսափելու նպատակով և ընդհակառակը/:

Դատական ակտը բեկանելուց հետո գործի նոր քննության սահմանները հատուկ իրավակարգավորված չլինելու պայման-

---

<sup>148</sup> Տե՛ս ԸԻԴ 0528/02/11թ. քաղաքացիական գործով ԼԴՅ Գերագույն դատարանի 05.06.2012թ. որոշումը:

ներում դատական պրակտիկայում առկա է որոշակի անորոշու-  
թյուն: Բոլոր դեպքերում պետք է հաշվի առնել, որ հայցի հիմքն  
ու առարկան են կանխորոշում գործի քննության ու լուծման  
սահմանները:

Այսպես, կոնկրետ գործով ԼԴՅ Գերագույն դատարանը, անդ-  
րադառնալով առաջին ատյանի ու վերաքննիչ դատարաններում  
գործի քննության սահմաններին ու դատական ակտերի իրավա-  
չափության գնահատման սկզբունքներին, արձանագրել է, մաս-  
նավորապես, հետևյալը. «Վերաքննիչ դատարանը առաջին ատ-  
յանի դատարանի կողմից կայացված դատական ակտի օրինա-  
կանության ու հիմնավորվածության վերանայման իրավասու-  
թյամբ օժտված դատարան է, որն առաջին ատյանի դատարանի  
դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորում-  
ների սահմաններում ստուգում է, որպես կանոն, գործում առկա  
ապացույցների և առաջին ատյանի դատարանում հաստատված  
փաստերի հիման վրա: Ընդ որում, վճռի հիմնավորվածությունը  
ստուգվում է կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի  
հիման վրա՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից: Վե-  
րաքննիչ դատարանի իրավասությունները սահմանափակվում  
են նաև առաջին ատյանի դատարանի վճռի առարկայով, որով-  
հետև այստեղ հայցի հիմքը կամ առարկան փոփոխել և հայցա-  
պահանջներն ավելացնել չի թույլատրվում: Վերաքննիչ դատա-  
րանի որոշումն իր հերթին պետք է լինի օրինական, հիմնավոր-  
ված և պատճառաբանված: Գործող օրենսդրությամբ ուղղակիոր-  
րեն կարգավորված չէ այն հարցը, թե գործի վերստին քննության  
ժամանակ առաջին ատյանի դատարանի համար պարտադի՞ր  
են, արդյոք, վերաքննիչ դատարանի դիրքորոշումները: Այնու-  
ամենայնիվ, վերաքննիչ դատարանի դիրքորոշումները, որոնք  
գործնականում, որպես կանոն, վերաբերում են գործով ապա-  
ցուցման առարկան ճիշտ որոշելու, գործի նյութերում հակասու-



թյունները վերացնելու ուղղությամբ դատավարական գործողություններ կատարելու հարցերին /տվյալ դեպքում դրանք տրվել են նյութաիրավական ու դատավարական հարցերով/, չպետք է անտեսվեն առաջին ատյանի դատարանի կողմից: Միևնույն ժամանակ, գործի նոր քննության արդյունքում առաջին ատյանի դատարանը կարող է նաև չհամաձայնել վերաքննիչ դատարանի դիրքորոշմանը: Հակառակ դեպքում, գործնականում կարող են խախտվել դատավորների անկախության ու դատարանի կողմից գործում եղած բոլոր ապացույցները ներքին համոզմամբ զնահատելու սկզբունքները, մանավանդ որ գործող օրենսդրությամբ կարգավորված չէ նաև վերաքննիչ դատարանի դիրքորոշումների սահմանների հարցը»: ԼՂՀ Գերագույն դատարանը նաև նշել է, որ վերաքննիչ դատարանի դիրքորոշումները չեն կանխորոշում վեճի ըստ էության լուծման ելքը և այդ դիրքորոշումներին չհետևելը, այն էլ՝ հիմնավոր փաստարկմամբ, ինքնին վճիռը բեկանելու հիմք հանդիսանալ չի կարող: Դատավարական իրավունքի նորմերի խախտման կամ սխալ կիրառման՝ ՔԴՕ 241-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վճիռը վերաքննիչ դատարանի կողմից կարող է բեկանվել միայն այն դեպքում, եթե այն հանգեցրել է գործի սխալ լուծման<sup>149</sup>:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարան ներկայացվող հայցադիմումներում հայցի առարկան և հիմքը երբեմն ձևակերպվում են ոչ հստակ ու իրավաբանորեն ոչ գրագետ: Որոշ դեպքերում հայցապահանջները կրում են տարատեսակ անվանումներ, որոնք չեն համապատասխանում քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության՝ գործող օրենսդրությամբ նախատեսված

---

<sup>149</sup> Տե՛ս ԸԻԴ 1737/02/13թ. քաղաքացիական գործով ԼՂՀ Գերագույն դատարանի 26.03.2015թ. որոշումը:

եղանակներին<sup>150</sup>: Ընդ որում, դատական պրակտիկայում դատարանի նախաձեռնությամբ հայցի առարկայի ձևակերպումը փաստացի ներկայացված պահանջին համապատասխանեցնելը հայցի առարկայի փոփոխություն չի համարվում, գործի լուծման սահմանների վրա չի ազդում:

Այսպես, Վիտալի Չայրապետյանը հայց է հարուցել դատարան իրեն պատկանող բնակելի տնից Ստեղլա Օհանյանին վտարելու մասին: ԼԴՅ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, հայցը բավարարելով, Ստեղլա Օհանյանին պարտավորեցրել է Վիտալի Չայրապետյանին վերադարձնել սեփականության իրավունքով վերջինիս պատկանող բնակելի տունը և տնամերձ հողամասը: Այսինքն՝ դատարանը հայցի առարկան հստակեցրել, համապատասխանեցրել է իրավունքի պաշտպանության՝ Քաղ օր. 274-րդ հոդվածով նախատեսված եղանակին<sup>151</sup>:

Աշխ. օր. 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատան-

---

<sup>150</sup> Անվիճելի է այն հանգամանքը, որ հայցի տարրերի մասին ստույգ գիտելիքներն առաջին հերթին անհրաժեշտ են հայցային պահանջները ճիշտ ձևակերպելու համար: Դրանց հստակ ձևակերպումը կարևորվում է արդեն հայցադիմումն ընդունելու փուլում. հայցադիմումի բովանդակությանն առաջադրվող պահանջները չպահպանելը, գործող օրենսդրության համաձայն, հայցադիմումը վերադարձնելու հիմք է հանդիսանում /ՔԴՕ 82 հոդվ. 1-ին կետի 1-ին ենթակետ/: Դատարանը գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով գործը դատաքննության նախապատրաստելու փուլում իրականացնում է մի շարք գործողություններ, այդ թվում՝ ուղղված հայցի առարկայի և հիմքի հստակեցմանը, անհրաժեշտության դեպքում կողմերին պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները, դատավարական գործողություններ կատարելու կամ չկատարելու հետևանքները և այլն /ՔԴՕ 144 հոդվ.:/: Երբեմն ոչ ճիշտ ձևակերպումներ տեղ են գտնում նաև դատական ակտերում՝ «հայցը առարկայագուրկ է», «հայցը հիմնագուրկ է», «բացակայում է հայցվորի վկայակոչած փաստական հիմքը», «հայցապահանջի փաստական կազմ» և այլն, և այլն:

<sup>151</sup> Տե՛ս ԸԻԴ 1988/02/2014թ. քաղաքացիական գործով ԼԴՅ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճիռը:

քային պայմանագիրը լուծելու, ինչպես նաև աշխատանքի եական պայմանների փոփոխման դեպքերում, եթե աշխատողին նախապես գրավոր ծանուցելու պարտականությունը չի կատարվել, ապա գործատուն պարտավոր է աշխատողին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը: Այսինքն՝ տվյալ դեպքում աշխատողին վերապահված է տույժ ստանալու իրավունք: Աշխ. օր. 265-րդ հոդվածի համաձայն, եթե պարզվում է, որ աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Ընդ որում, միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով: Այսինքն՝ այս դեպքում նախկին աշխատողն ունի հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը ստանալու իրավունք: Հայցվորը հայց հարուցելուց հետո հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը բռնագանձելու սկզբնական պահանջի փոխարեն կարող է հայտարարել տույժ բռնագանձելու պահանջ, քանի որ օրենսդիրը ծանուցման վերոնշյալ պարտականությունը չկատարվելու դեպքում իրավունքի պաշտպանության այդ եղանակն է նախատեսում:

Մեր կարծիքով՝ նման դեպքերում խոսքը գնում է ոչ թե հայցի հիմքի կամ հայցի առարկայի փոփոխության, այլ հայցվորի կողմից հայցի հիմքի փաստերի իրավաբանական /իրավական/

սխալ որակման մասին, ինչը, որպես իրավունքի նորմի կիրառման գործողություն, վերաբերում է դատարանի դատավարական պարտականություններին, ու նման դեպքերում դատարանն իր նախաձեռնությամբ կարող է ուղղել հայցվորի թույլ տված սխալը: Դատական պրակտիկան ներկայումս ընթանում է այդ ուղղությամբ:

Այսպես, Առնողիկ Սարգսյանը հայց է ներկայացրել դատարան՝ աշխատանքից ազատման հրամանն անվավեր ճանաչելու և աշխատանքում իրեն վերականգնելու պահանջով: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն անվավեր է ճանաչել Առնողիկ Սարգսյանին աշխատանքից ազատելու հրամանը, իսկ աշխատանքում վերականգնելու պահանջը մերժել է՝ պատճառաբանելով, որ այդ հարցը ենթակա չէ դատարանում քննության, քանի որ «հայցվորը նման պահանջ չի ներկայացրել դատարան»: ԼՂՀ վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բեկանելով և փոփոխելով դատարանի վճիռը, որոշել է պատասխանողից հոգուտ հայցվորի բռնագանձել հարկադիր պարապուրդի համար փոխհատուցում՝ միջին աշխատավարձի հնգապատիկի չափով, իսկ մնացած մասով վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պատասխանող կողմը: Վճռաբեկ բողոքում, մասնավորապես, նշվել է, որ ստորադաս դատարանը դուրս է եկել ինչպես վերաքննիչ բողոքի հիմնավորումների սահմաններից, այնպես էլ հայցի շրջանակներից ու կիրառման ենթակա Աշխ. օր. 115-րդ հոդվածի 2-րդ մասի փոխարեն կիրառել է կիրառման ոչ ենթակա Աշխ. օր. 265-րդ հոդվածի 2-րդ մասը: ԼՂՀ Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքը բավարարելով, հոգուտ հայցվորի բռնագանձել է տուժանք այն հիմնավորմամբ, որ աշխատանքից ազատելիս աշխատողին նախապես գրավոր ծանուցման պարտականությունների չկատարման համար նախատեսված է միայն աշխատողին տուժան-

քի վճարման գործատուի պարտավորությունը, այլ ոչ թե նախկին աշխատանքում վերականգնելու պարտավորությունը<sup>152</sup>:

Մեր կարծիքով՝ այս մոտեցումը ճիշտ է: Քաղաքացիական դատավարությունը չի կարող ձևական լինել: Հայցի հիմքի փաստերի սխալ որակման պատճառով իրավունքի պաշտպանության սխալ եղանակ նշելու կամ օրենքով չնախատեսված եղանակ նշելու դեպքերում, երբ ակնհայտ է, որ դրանք չեն համապատասխանում հայցվորի իրական կամքին /ներկայացված հայցի նպատակին/ ու իրավաբանական անիրազեկության հետևանք են, մեր կարծիքով, անթույլատրելի է միայն հայցվորի կողմից հայցի սխալ ձևակերպումն արձանագրելն ու հայցը մերժելը: Նման պրակտիկան արդարացված չի կարող լինել ոչ միայն արդարադատության արդյունավետության, այլև դատավարական տնտեսման, իսկ որ ոչ պակաս կարևոր է՝ նաև «ձևական դատավարություններով» դատարանի հեղինակությունը չխաթարելու նկատառումներից ելնելով<sup>153</sup>: Իսկ որ դատարանները դեռևս ունեն վստահության կարիք, բնավ գաղտնիք չէ:

<sup>152</sup> Տե՛ս ԸԻԴ 1044/02/15թ. քաղաքացիական գործով ԼՂՀ Գերագույն դատարանի 08.12.2015թ. որոշումը:

<sup>153</sup> Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը «Գործարքների անվավերության վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» որոշման մեջ /26.09.2001թ./ նշել է հետևյալը. «Դատարանի՝ որպես դատական իշխանության լիազորություններով օժտված մարմնի միակ առաքելությունը արդարադատություն իրականացնելն է, այսինքն՝ Սահմանադրությամբ և օրենքով ամրագրված իրավունքների և ազատությունների խախտման դեպքում դրանց պաշտպանելը և վերականգնելը: Հետևաբար՝ գործարքների անվավերության վերաբերյալ հայցեր ներկայացվելու դեպքում, անկախ դրանց անվանումից և իրավաբանորեն ձևակերպված պահանջներից, դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53, 130-132 հոդվածների պահանջներով, վեճը պետք է լուծի ըստ էության»:

Նախախորհրդային ռուս դատավարագետ Ե.Վ.Վասիլովսկին այս կապակցությամբ նշել է, որ մրցակցության սկզբունքի խախտում չի համարվի, եթե դատարանը նկատի ունենա նաև այն փաստերը, որոնց վրա կողմերը չեն հենվել, որոնք, սակայն, հետևում են նրանց կողմից ներկայացված ապացույցներից /հղումն ըստ՝ Осокина Г.Л. Гражданский процесс. Особенная часть., М.: Норма, 2007, էջ 244/:

## 4.2. Հայցային պահանջների սահմաններից դուրս գալու դատարանի իրավունքը

ՔԴՕ կարգավորումների համաձայն՝ դատարանը հայցային գործը պարտավոր է քննել և լուծել ներկայացված, իսկ հայցը փոփոխելու դեպքում՝ նաև փոփոխված հայցի առարկայի ու հայցի հիմքի սահմաններում: Միևնույն ժամանակ, գործող օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում դատարանն իրավունք ունի, իսկ որոշ դեպքերում՝ պարտավոր է իր նախաձեռնությամբ դուրս գալ ներկայացված հայցապահանջների սահմաններից և լուծել ներկայացված պահանջների հետ սերտորեն կապված, սակայն չներկայացված պահանջներ: Այսինքն՝ եթե անգամ հայցվորը չի փոփոխում /չի լրացնում/ հայցը, նրա փոխարեն դա անում է դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Այսպես, ՔԴՕ 123-րդ հոդվածի 5-րդ կետի 3-րդ կետի համաձայն՝ գործարքն անվավեր ճանաչելու դեպքում վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի նշում՝ գործարքի անվավերության հետևանքների մասին:

Դատարանի նախաձեռնությամբ հայցի սահմաններից դուրս գալու մնացած դեպքերը նախատեսված են նյութական օրենսդրությամբ<sup>154</sup>:

Այսպես, օրինակ՝ Քաղ. օր. 303-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած

<sup>154</sup> «Չկան դատավորներ առանց հայցվորի», «ոչ ոք չի կարող հարկադրվել հայց ներկայացնելու», «դատարանը չի կարող դուրս գալ ներկայացված հայցի շրջանակներից». սրանք քաղաքացիական դատավարության՝ հռոմեական իրավունքից եկող աքսիոմներ են: «Դատարանը չի կարող դուրս գալ ներկայացված հայցի շրջանակներից» սկզբունքից բացառություններ՝ ավելի մեծ մասշտաբներով, առկա էին նաև խորհրդային իրավունքում:

շահագրգիռ անձ: Դատարանն իրավունք ունի այդպիսի հետևանքներ կիրառել սեփական նախաձեռնությամբ: Կամ Քաղ. օր. 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե գործարքն անվավեր է ճանաչվել խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի՝ մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կամ ծանր հանգամանքների բերումով, ապա մյուս կողմը տուժողին վերադարձնում է գործարքով իր ամբողջ ստացածը, իսկ բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում դրա արժեքը հատուցում է դրամով: Գործարքով մյուս կողմից տուժողի ստացած գույքը, ինչպես նաև մյուս կողմից նրան հասանելիքը բռնագանձվում է հօգուտ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության: Գույքը բնեղենով պետությանը հանձնելու անհնարինության դեպքում դրա արժեքը բռնագանձվում է դրամով: Բացի դրանից, մյուս կողմը տուժողին հատուցում է նրան պատճառած իրական վնասը: Կամ Քաղ. օր. 198-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակցին բնեղենով առանձնացվող գույքի անհամաչափությունը բաժնային սեփականության իրավունքում նրա բաժնին վերացվում է նրան համապատասխան դրամական գումար վճարելով կամ այլ փոխհատուցումով: Բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն մյուս սեփականատերերը կարող են այդ մասնակցի համաձայնությամբ նրան փոխհատուցում վճարել: Այն դեպքերում, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի, դատարանը կարող է նաև այդ սեփականատիրոջ /հայցվորի/ համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մյուս մասնակիցներին թույլատրել վճարելու փոխհատուցում: Կամ Քաղ. օր. 372-րդ հոդվածի համաձայն՝ եթե վճարման ենթակա տուժանքն

ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն: Կամ Քաղ. օր. 1237-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը, ժառանգին ճանաչելով ժառանգությունն ընդունած, լուծում է դրանից բխող ժառանգական գույքի նկատմամբ մյուս ժառանգների իրավունքներին վերաբերող հարցերը, ինչպես նաև անվավեր է ճանաչում նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը: Կամ Աշխ. օր. 265-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով: Կամ Ընտ. օր. 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է որոշել՝ 1/ թե ամուսնալուծությունից հետո ծնողներից ում հետ պետք է ապրեն երեխաները, 2/ թե որ ծնողից և ինչ չափով պետք է ալիմենտ /ապրուստավճար/ բռնագանձվի: Կամ Ընտ. օր. 63-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է, որ ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ թողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վտանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին



ծնողական իրավունքներից զրկելու համար:

Վերոնշյալ բոլոր դեպքերում գործնականում խոսքը գնում է դատարանի՝ իր նախաձեռնությամբ հայցային պահանջների /հայցի առարկայի/ շրջանակներից դուրս գալու և ներկայացված պահանջների հետ սերտորեն կապված, սակայն չներկայացված պահանջներ քննելու ու լուծելու դատարանի իրավունքի մասին, որը, ի տարբերություն նախկին ՔԴՕ-ի, գործող ՔԴՕ-ն չի նախատեսում<sup>155</sup>, ինչը մեկ անգամ ևս վկայում է նյութական օրենսդրության մեջ պարունակվող դատավարական նորմերի ու ՔԴՕ նորմերի անհամաձայնության՝ հայրենական օրենսդրության մեջ առկա հիմնախնդրի մասին: Նյութաիրավական նորմերի իրացման դատավարական կառուցակարգի բացակայությունը դատական պրակտիկայում որոշակի դժվարություններ է առաջացնում. բոլոր դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես ՔԴՕ-ում նախատեսված ընդհանուր դատավարական կանոնները, այնպես էլ նյութաիրավական ակտերում զետեղված հատուկ դատավարական կանոնները:

Դատարանի կողմից հայցվորի ներկայացրած պահանջի հետ սերտորեն կապված, սակայն չներկայացված պահանջների լուծումը համարվում է տնօրինչականության սկզբունքից բացառություն և թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում միայն:

Վերոնշյալ և օրենքով նախատեսված մնացած դեպքերի վերլուծությունից կարելի է հետևություն անել, որ օրենսդիրը «չկա դատարան կողմերի պահանջներից դուրս» սկզբունքից

---

<sup>155</sup> Քր. դատ. օր. 176-րդ հոդվածի համաձայն՝ բացառիկ դեպքերում, երբ քաղաքացին զրկված է իր գույքային շահերն անձամբ պաշտպանելու հնարավորությունից, դատարանն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել հանցագործության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին:

բացառությունը նախատեսել է որոշակի նպատակների համար: Դրանք են՝ իրավահարաբերության ակնհայտ թույլ կողմի շահերի պաշտպանությունը, քաղաքացիական պատասխանատվության տուգանային միջոցներ կիրառելը, դատավարական տնտեսումը:

Ուշագրավ է, որ ճանաչված տեսաբան Ռ.Ե.Ղուկասյանը, ով խորությամբ և բազմակողմանիորեն հետազոտել է քաղաքացիական դատավարությունում իրավաբանական շահի հարցերը, նշել է, որ հայցի սահմաններից դուրս գալու դատարանի իրավունքը հասկացվում է ոչ թե որպես հայցի հիմքը և առարկան փոփոխելու իրավունք, այլ որպես իրավունք՝ հայցվորի շահերից ելնելով, իր կամքով լրացնելու հայցվորի կամքը: «Իր գործողություններով և կամքով դատարանը պաշտպանում է հենց նույն շահը, որի պաշտպանությամբ ներկայացվել է հայցը», - նշել է նա<sup>156</sup>:

Ինչ վերաբերում է դատարանի նախաձեռնությամբ հայցի հիմքի շրջանակներից դուրս գալուն, ապա այդ հարցը դատավարագիտության մեջ վիճելի է: Հայրենական գործող օրենսդրությունը նման իրավունք դատարանին չի վերապահում. դատարանն իրավունք չունի իր նախաձեռնությամբ դուրս գալու հայցի հիմքի շրջանակներից, հետազոտում ու գնահատում է միայն այն ապացույցները, որոնք նշանակություն ունեն գործի լուծման համար: Պահպանելով իր վարույթում գտնվող գործի շրջանակներում չեզոք դիրք՝ դատարանն իրավասու չէ ոչ միայն փոփոխելու հայցի հիմքը, այլև քննարկելու կողմերի պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստերը փոփոխելու անհրաժեշտության հարցը:

---

<sup>156</sup> Տե՛ս Գուкасян Р.Е. Проблема интереса в советском гражданском процессуальном праве. Саратов, Изд. СЮИ, 1970, 118-119 էջերը:

Ի դեպ, ռուս որոշ դատավարագետների կարծիքով՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նման իրավունք դատարանին վերապահում է, և այն բխում է այդ օրենսգրքի 56-րդ հոդվածի 2-րդ մասից, համաձայն որի՝ դատարանը որոշում է, թե գործի համար ո՞ր հանգամանքներն ունեն նշանակություն, ո՞ր կողմին է անհրաժեշտ դրանք ներկայացնել, այդ հանգամանքները դնում է քննարկման, եթե նույնիսկ կողմերը դրանցից ոչ մեկի վրա չեն հենվում<sup>157</sup>: Հարկ է նկատել, որ այս հարցում հայրենական օրենսդրության կարգավորումը տարբերվում է ՔԴՕ 44-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, իսկ 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Ինչպես արդեն նշվել է, յուրաքանչյուր գործով ապացուցման առարկան ձևավորվում է հայցի ու դրա դեմ բերվող առարկությունների հիմքում ընկած փաստերից, ինչպես նաև վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավանորմում մատնանշված փաստերից: Դրանց միջոցով է դատարանը վերջնականապես որոշում, թե տվյալ գործով որ փաստի /փաստերի/ հաստատված կամ չհաստատված լինելն է հիմք հանդիսանում այդ փաստի /փաստերի/ նկատմամբ նյութաիրավական համապատասխան նորմերը կիրառելու և հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու համար:

Անդրադառնալով ապացուցման առարկան որոշելու՝ ՀՀ ՔԴՕ

---

<sup>157</sup> Տե՛ս, օրինակ, *Осокина Г.Л. Гражданский процесс. Особенная часть., М.: Норма, 2007, էջ 235:*

48-րդ հոդվածի 2-րդ կետով /համապատասխանում է ԼՂՀ ՔԴՕ 44-րդ հոդվածի 2-րդ կետին/ դատարանին տրված իրավասության սահմանադրականության հարցին՝ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ ՔԴՕ 48-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա» բառակապակցության պայմաններում դատարանը չի կարող առաջ քաշել ապացուցման ենթակա այնպիսի նոր հանգամանք կամ փաստ, որն ընկած չէ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում: ՀՀ սահմանադրական դատարանը նաև նշել է, որ «Օրենսգրքի վիճարկվող դրույթն իր վերոհիշյալ բառակապակցությամբ կաշկանդում է դատարանին գործին մասնակցող անձանց ներկայացրած պահանջների և առարկությունների շրջանակով, ինչի արդյունքում երաշխավորվում է մրցակցության սկզբունքի պահպանումը և բացառվում է այս տեսանկյունից դատարանի հնարավոր կամայականությունը»<sup>158</sup>:

Նույն որոշման 7-րդ կետում ՀՀ սահմանադրական դատարանն ընդգծել է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշումը դատարանի կողմից ամենևին էլ չի նշանակում կողմերի իրավահավասարության կամ մրցակցության սկզբունքների խախտում, առավել ևս՝ կողմերի միջև ապացուցման պարտականության անհավասար բաշխում: Ընդհակառակը, դրանով դատարանը կողմերին ուղղորդում է ապացույցներ ներկայացնել այն փաստերի վերաբերյալ, որոնք կհաստատեն նրանց պահանջներն ու

---

<sup>158</sup> Տե՛ս քաղաքացի Նարինե Սահակյանի դիմումի հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՕ-845 08.12.2009թ. որոշումը:

առարկությունները, հետևաբար, փաստական հիմք կստեղծեն գործով օրինական /հիմնավոր/ վճիռ /որոշում/ կայացնելու համար:

Նույն որոշման 8-րդ կետում ՀՀ սահմանադրական դատարանը նաև նշել է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատարանն իր ներքին հանգամանք գտնում է, որ կողմերի ներկայացրած ապացույցներն անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար կամ դրանք ուղղված են այնպիսի փաստերի ապացուցմանը, որոնք շեղվում են գործից և առնչություն չունեն վերջինիս հետ, կամ ներկայացված են տվյալ գործի քննության համար օրենքով չնախատեսված ապացույցներ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի վիճարկվող բառակապակցության ուժով դատարանին հնարավորություն է ընձեռվում դուրս թողնել դրանք ապացուցման առարկայի շրջանակներից: Դատարանին վերապահված՝ վերը նշված իրավասությունն իրավաչափ է և բխում է արդար դատաքննության իրավունքի, ինչպես նաև դրա բաղադրատարրը հանդիսացող ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի էությունից:

Գրականության մեջ իրավագիտորեն նշվել է, որ գործը լուծելու համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշումը չի կարող նույնացվել հայցի հիմքի փոփոխման հետ: Ապացուցման առարկան և հայցի ու դրա դեմ արվող առարկությունների հիմքերն իրենց էությամբ, բովանդակությամբ, իրավաբանական նշանակությամբ տարբեր կատեգորիաներ են<sup>159</sup>:

<sup>159</sup> Տե՛ս Сахнова Т.В. Курс гражданского процесса: теоритические начала и основные институты. М., «Волтер Клувер», 2008, 383, 384 էջերը, Վ.Եսայան, Հայցի հիմքի փոփոխման հիմնախնդիրը քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», հոկտեմբեր-նոյեմբեր, 2014, էջ 73:

Ապացուցման առարկան վերջնականորեն որոշելու դատավարական գործողության շրջանակներում դատարանը, հիմք ընդունելով հայցի հիմքում ու պատասխանողի առարկությունների հիմքում դրված փաստերը, ինչպես նաև կիրառման ենթակա նյութափրավական նորմի /նորմերի/ հիպոթեզում և դիսպոզիցիայում նախատեսված փաստերը, իրավասու է ճշգրտելու հայցի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը՝ հայցադիմումում վկայակոչվածի համեմատ այդ շրջանակն ընդլայնելով /եթե, օրինակ, նշվել է հայցի իրավական հիմքը, սակայն փաստերը լրիվ չեն նշվել /կամ նեղացնելով /եթե, օրինակ, ներկայացված փաստերը վերաբերելի չեն/: Նման դատավարական գործողության կատարմամբ հայցը չի փոփոխվում: Պարզապես, ելնելով վիճելի իրավահարաբերության բնույթից և կիրառման ենթակա նյութափրավական նորմերից, ճշգրտվում է այն փաստերի շրջանակը, որոնք հայցվորի կողմից ներկայացված հայցի հիմքի և առարկայի քննության տեսանկյունից գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Խնդրո առարկա որոշ հարցերի վերաբերյալ առկա է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն դատական ատյանի պարզաբանումը:

Այսպես, մեկնաբանելով Քաղ. օր. 372-րդ հոդվածը, համաձայն որի՝ եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն, ԼՂՀ Գերագույն դատարանն իր մի շարք որոշումներում ընդգծել է, որ թեև տուժանքի չափը նվազեցնելը դատարանի իրավունքն է, այդուհանդերձ, իրավունքի չարաշահումը կանխելու տեսանկյունից այն նաև դատարանի պարտականությունն է, քանի որ բոլոր դեպքերում խոսքը գնում է սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության

կան ողջամիտ հարաբերակցության ապահովման մասին: Յուրաքանչյուր դեպքում տուժանքը պակասեցնելիս դատարանն առաջին հերթին պետք է գնահատման առարկա դարձնի այն հարցը, թե պայմանագրով նախատեսված տուժանքը որքանով է անհամաչափ պարտավորության խախտման հետևանքներից<sup>160</sup>:

Մեր կարծիքով՝ հայցի առարկայի շրջանակներից դուրս գտնվող պահանջ լուծելու անհրաժեշտության դեպքում դատարանը պարտավոր է տվյալ գործով ապացուցման առարկայի մեջ մտցնել նաև այն փաստերը, որոնք դրված չեն հայցի հիմքում, սակայն էական նշանակություն ունեն հայցի առարկայի շրջանակներից դուրս գտնվող պահանջի լուծման համար: Դրանով հնարավորություն կտրվի կողմերին՝ ներկայացնելու համապատասխան ապացույցներ, որոնք ենթակա են հետազոտման և գնահատման օրենքով սահմանված կարգով: Այդ պահանջների պահպանմամբ կայացված վճիռը միայն կարող է լինել օրինական, հիմնավորված և պատճառաբանված ու համապատասխանել վճռին ներկայացվող պահանջներին /ՔԴՕ 121 հոդվ./, քանի որ օրինականության սկզբունքի իրացումը լրիվ ծավալով հնարավոր է միայն նրցակցության սկզբունքի հետ փոխգործողության շնորհիվ:

---

<sup>160</sup> Տե՛ս, օրինակ, ըստ հայցի «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ «ԿԱԿԱԴՌԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, Գեղամ Քոչարյանի, Արմինե Ասժատրյանի՝ 7.271.363,9 ՀՀ դրամը, հաշվեգրվելիք տոկոսները և տույժերը գանձելու, գրավադրված գույքի, իսկ վերջինիս անբավարարության դեպքում այլ գույքի վրա բռնագանձում տարածելու մասին ԸԻԴ N 2221/02/15թ. քաղաքացիական գործով ԼԴՀ Գերագույն դատարանի 08.07.2016թ. որոշումը:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**  
**Իրավական ակտեր և դատական պրակտիկա**

1. ԼՂՀ Սահմանադրություն
2. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին» Հռչակագիր, 06.01.1992թ.
3. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին հիմունքների մասին» ԼՂՀ օրենք, ընդունվել է 06.01.1992թ.
4. «ԼՂՀ տարածքում ժամանակավորապես օրենսդրական կարգավորում սահմանելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշում, ընդունվել է 06.06.1992թ. Հ.Ն.-0040-1
5. ԼՂՀ դատական օրենսգիրք, ընդունվել է 17.12.2008թ. ՀՕ-71-Ն, սկզբնաղբյուրը՝ ԼՂՀ ՊՏ 2008.12.30/ 38 /110/
6. ԼՂՀ հողային օրենսգիրք, ընդունվել է 30.04.2002թ. ՀՕ-209
7. ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 17.12.2008 ՀՕ-76-Ն, սկզբնաղբյուրը՝ ԼՂՀ ՊՏ 2009.01.31 /04/114/
8. ԼՂՀ վարչական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 17.12. 2008թ. ՀՕ-77-Ն, սկզբնաղբյուրը՝ ԼՂՀ ՊՏ, 2009.01.31- /05/115/
9. ԼՂՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 17.12.2008թ. ՀՕ-75-Ն, սկզբնաղբյուրը՝ ԼՂՀ ՊՏ 2009.01.31/03/-113/



10. ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 24.02.2016թ. ՀՕ-8-Ն, սկզբնաղբյուրը՝ ԼՂՀ ՊՏ 2016.04.22/04/-295
11. ԼՂՀ ընտանեկան օրենսգիրք, ընդունվել է 29.03.2012թ. ՀՕ-13-Ն, սկզբնաղբյուրը՝ ԼՂՀ ՊՏ 2012.04.21/07/197/
12. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 05.05.1998թ. ՀՕ-239, սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 1998.08.10/17/50/
13. ՀՀ ընտանեկան օրենսգիրք, ընդունվել է 09.11.2004թ. ՀՕ-123-Ն, սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 2005.01.19/4/376/ Հոդ.60
14. ՀՀ դատական օրենսգիրք, ընդունվել է 21.02.2007թ. ՀՕ-135 -Ն, սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 2007.04.18/20/544
15. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 01.07.1998թ. ՀՕ-248, սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 1998.09.21/22/551
16. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 17.06.1998թ. ՀՕ-247, սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 1998.09.09/20/53
17. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 05.12.2013թ. ՀՕ-139-Ն, սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 2013.12.28-/73/1013/.1 Հոդ.1186.1
18. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունվել է 09.11.2004թ. ՀՕ-124-Ն, սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 2004.12.21-/69/368/ Հոդ. 1385
19. «Հայաստանի Հանրապետության 2004թ. աշխատանքային օրենսգիրքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ դնելու մասին» ԼՂՀ օրենք, ընդունվել է 27.04.2005թ. ՀՕ-186
20. «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենք, ընդունվել է 27.05.2009/, սկզբնաղբյուրը՝ ԼՂՀ ՊՏ 2009.06.15 /14/ 124
21. «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենք, ընդունվել է

- 16.04.2008թ. ՅՕ-26, սկզբնաղբյուրը՝ ԼՂՀ ՊՏ 2008.0612/ 21 /93/
22. «Դատախազության մասին» ԼՂՀ օրենք, ընդունվել է 17.12.2008թ. ՅՕ-73-Ն
23. «Նոտարիատի մասին» ԼՂՀ օրենք, ընդունվել է 23.03.2005թ. ՅՕ-184
24. «Փաստաբանության մասին» ԼՂՀ օրենք, ընդունվել է 19.10.2005թ. ՅՕ-223, սկզբնաղբյուրը՝ ԼՂՀ ՊՏ 2005.12.13/08/
25. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենք, ընդունվել է 15.06. 1999 թ. ՅՕ-66
26. «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենք, ընդունվել է 14.04.2004թ. ՅՕ-104
27. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենք, ընդունվել է 20.04.2015թ. ՅՕ -31-Ն, սկզբնաղբյուրը՝ ԼՂՀ ՊՏ 2015.05.25/09/276
28. «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենք, ընդունվել է 14.05 2008թ. ՅՕ-28, սկզբնաղբյուրը՝ ԼՂՀ ՊՏ 2008.06.12-/21/93
29. ԼՂՀ դատական պրակտիկայի նյութերը
30. ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-719, ՍԴՈ-747, ՍԴՈ-1022 որոշումները
31. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով որոշումների ընտրանի, 1-9 հատորներ
32. Комментарий к гражданскому процессуальному кодексу РФ (постатейный). Под ред. Жилина Г.А., 5-е изд., перераб. и доп. - “Проспект”, М., 2010 г.
33. Жуйков В.М. Треушников М.К. Комментарий к гражданскому процессуальному кодексу. Под ред. Треушникова М.К., “Городец”, М., 2007, 672 с.
34. Комментарий к гражданскому процессуальному

кодексу РФ /постатейный “Перспект”, М., 2014, 858 с.

35. Комментарий к гражданскому процессуальному кодексу РФ /ред. от 19.12.2016/ <http://stgpkrf.ru/>

36. Материалы Всероссийской научно-практической конференции. Краснодар- 2006, 339 с.

## ՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Վ.Դ. Հռոմեական մասնավոր իրավունք: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., 2015, 240 էջ
2. Գևորգյան Ս.Վ. Սովետական քաղաքացիական դատավարություն, «Հայաստան» հրատ. Եր., 1972, 402 էջ
3. Դալլաքյան Վ.Կ. Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ որպես դատական ակտերի հարկադիր կատարման միջոց, Եր., 2015, «Հայրապետ» հրատ., 159 էջ
4. Եսայան Վ. Տնօրինչականության սկզբունքը և տնօրինչական գործողությունները քաղաքացիական դատավարությունում, Եր., «Հայրապետ.» հրատ., 2015-192 էջ
5. Եսայան Ա. Պետության և իրավունքի տեսություն: Ուս. ձեռն. բուհերի համար, «Տիգրան Մեծ» հրատ., Եր., 2012, 220 էջ
6. Հարությունյան Ա.Յ. Լեռնային Ղարաբաղի /Արցախի/ Հանրապետության Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները և սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրները, Եր., 2016, «Անտարես», հրատ., 237 էջ
7. Հովհաննիսյան Վ. Վ. Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները Հայաստանում, Եր., 2013, ԵՊՀ հրատ., 544 էջ
8. Հովսեփյան Վ.Խ. Իրավունքը և արդարադատությունն Արցախում, «Դիզակ պլուս» հրատ., Ստեփանակերտ, 2016, 303 էջ
9. Մարկոսյան Տ. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը քաղաքացիական դա-

տավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2013, 208 էջ

10. Մեղրյան Ա.Գ. Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2012, 256 էջ

11. Մեղրյան Ա.Գ. Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, ԵՊՀ հրատ., 2010, 192 էջ

12. Ներսեսյանց Վ. Ս. Իրավունքի և պետության տեսություն, «Նաիրի» հրատ., Եր., 2001, 300 էջ

13. Պետրոսյան Գ.Վ. Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք (հատուկ մաս), 2-րդ հրատարակություն, Եր., «Հայրապետ» հրատ., 2015, 734 էջ

14. Ղարսյան Ա.Ռ. Գործը դատաքննության նախապատրաստելը որպես քաղաքացիական դատավարության փուլ, «Հայրապետ» հրատ., Եր., 2015, 223 էջ

15. Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, Ոսկան Երևանցի, Եր., 2012, 691 էջ

16. Власов А.А. Гражданский процесс: 7-е изд., перераб. и доп. М.Юрайт, 2015, 652 с.

17. Гражданское процессуальное право. Под ред. Шакарян М.С.-М.: ТК Велби. Изд. “Проспект”, 2004, 584 с.

18. Гражданский процесс. Хрестоматия. Под ред. М.К. Треушникова, М.: ОАО “Издательский дом “Городец”, 2005, 896 с.

19. Гражданский процесс. Под ред. Треушникова М.К. Учебник., М.: Издательство “Статут”, 2014, 504с.

20. Гукасян Р.Е. Проблема интереса в советском гражданском процессуальном праве. Саратов, Изд. СЮИ, 1970, 192 с.

21. Гурвич М.А. Право на иск. Изд. АН СССР, М.-

Л., 1949, 215 с.

22. Гурвич М.А. Право на иск., ВЮЗИ. М., 1978, 147 с.

23. Гурвич М.А. Учение об иске /состав, виды/. М. ВЮЗИ, 1981, 39 с.

24. Давтян А.Г. Гражданское процессуальное право Германии. М.: “Городец-издат”, 2000, 320 с.

25. Добровольский А.А. Исковая форма защиты права /основные вопросы учения об иске/, М. Изд. МГУ, 1965-190 с.

26. Добровольский А.А., Иванова С.А. Основные проблемы исковой формы защиты права. Изд. МГУ, М., 1979, 159 с.

27. Дождев Д.В. Римское частное право. Под ред. Нерсесянца В.С. - М.: Изд. группа ИНФРА, М - НОРМА, 1997-704 с.

28. Жеруолис И.А. Понятие иска как процессуальной формы защиты права /проблемы, гарантии осуществления и защиты прав граждан/, Тарту, 1977, 147 с.

29. Жилин Г.А. Гражданское дело в суде первой инстанции. Учебное издание. М. “Городец”, 2000, 143 с.

30. Жуйков В.М. Судебная защита прав граждан и юридических лиц: Юридическое бюро “Городец”, М., 1997, 320 с.

31. Жуйков В.М. "Судебная реформа: проблемы доступа к правосудию", М.: Статут, 2006, 83 с.

32. Коршунов Н.М., Мареев Ю. Х., Гражданский процесс. Изд. “Норма”, М. 2008, 911 с.

33. Исаенкова О.В., Демичев А.А., Соловьева Т.В, Ткачева Н. Н. Иск в гражданском судопроизводстве. Под ред. Исаенковой О.В., “Волтер Клувер”, 2009, 216 с.

34. Осокина Г.Л. Иск /теория и практика/. “ Городец”, М., 2000-192 с.
35. Осокина Г.Л. Гражданский процесс. Общая часть. Учебник. 3-е изд. Перераб. Норма: ИНФРА- М.: 2013, 704 с.
36. Советский гражданский процесс. Под ред. Гурвича М.А., Изд. “Высшая Школа”, М., 1987, 435 с.
37. Рязановский В.А. Единство процесса.- М. Юрид. бюро “Городец”, 1996, 74 с.
38. Треушников М. К. Судебные доказательства. М., ОАО “Издательский дом “Городец”, М. 2004, 272 с.
39. Сахнова Т.В. Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. М., “Волтер Клувер”, 2008, <http://nashaucheba.ru>
40. Щеглов В.Н. Иск о судебной защите гражданского права. Под ред. Осокиной Г.Л., Томск, Томский ун-т, 1987, 166 с.
41. Юдельсон К.С. Советский гражданский процесс. М. 1965, 501 с.
42. Ярков В.В. Юридические факты в цивилистическом процессе. М. Берлин Инфотропик Медиа, 2012, 582 с
43. Справочник по доказыванию в гражданском судопроизводстве. Под ред. Решетниковой И.В. 5-е изд., доп. и перераб. - М., 2011, 496 с.
44. Настольная книга судьи по гражданским делам. Под ред. Толчеева Н.К. 2-е изд., перераб. и доп. - М.: Проспект, 2008, 656 с.

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՂՍԱԳՐԵՐ

1. Արզումանյան Գ. Մ. Իրավունքների պաշտպանության հայ-ցային ձևը, իրավ. գիտ. թեկն. ատենախոսություն, Երևանի պետական համալսարան-2006, 155 էջ:

2. Рожкова М.А. Теория юридических фактов гражданского и процессуального права: понятия, квалификации, основы взаимодействия, дисс.... докт... юрид. наук, М., 2010, 394 с.

3. Приходько И.А. Доступность правосудия в арбитражном и гражданском процессе: основные проблемы. Дисс.... докт... юрид. Наук, М., 2005, 408 с.

4. Юдин А. В. Злоупотребление процессуальными правами в гражданском судопроизводстве, дисс.... докт.. юрид. наук, М. 2010, 394 с. Санкт-Петербург, 2009, 489 с.



ԳՐԵՏԱ ՄԻՔԱՅԵԼԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅՑԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
/գիտազորժնական հետազոտություն/

ГРЕТА МИХАЙЛОВНА АРЗУМАНЯН

ИСК В ГРАЖДАНСКОМ СУДОПРОИЗВОДСТВЕ  
/научно-практическое исследование/

Սրբագրիչ`	Դ. Ղուկասյան
Չամ. շարվածքը`	Լ. Մկրտչյանի
Էջադրումը`	Մ. Ավանեսյանի
Կազմի ձևավորումը`	Ա. Բաղդասարյանի

Տպագրությունը` օֆսեթ: Թուղթը` օֆսեթ, չափը` 60x84 1/16:  
Ծավալը` 12.5 տպ. մամուլ: Տպաքանակը` 250:

Տպագրվել է «Դիզակ պլուս» հրատարակչության տպարանում  
375000, ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Հ. Հակոբյան, 25